

1905 ԱՊՐԻԼ

ՏպարանՀ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԷՊՐԻԼ 1905 Թ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

1. Կոնդակք Վեհափառ Հայրապետի. . . . 299
2. Քաղուածք ի Կոնդակաց Վեհ. Հայրապետի. . . 307
3. Քաղուածք Սինոդի օրագրութիւններից. . . 309

ԿՐՕՆԱԿԱՆ

4. Խղճի ազատութեան նախընթաց օրը Ե. Ֆ. վ. Մ. . 313
5. Գողգոթայի յաղթանակը. 317

ՄԱՅՐ ԱԹՈՌ

ՏԱՃԿԱՀԱՅՔ

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

6. Պրաւօսլաւ եկեղեցի Ռուսաց. 324
7. Պրաւօսլաւ եկեղեցի Վրաց. 329

ԳԻՏԱԿԱՆ

8. Անապատականութեան սկիզբն Քրիստոնեայ եկեղեցում. Յուսիկ եպս. 332
9. Կրօնը Ամերիկայի Միացեալ Նահանգներում . . 341
10. Վ. Սոլովիևը ներողամտութեան մասին Ն. Աղբալեանց 353

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

11. Դաստիարակութիւն և կրթութիւն. Ժ. Ը. . . 362
12. Հելլենականութեան դարը. Բ. Նիգէլ տեսչական ճառից Մ. Խ. 474
13. Երկու գլուխ Դհամմապատայից. թարգմ. Ա. Եղիազար. 380

ՅԱՒԵԼՈՒԱԾ

14. Նիւթեր Դաւիթ բէկի պատմութեան վերաբերեալ Ա. Վ. Ղլդճեան. 382
15. Կարագ Գ. Ղ. 388
16. Ստացուած գրքեր 391

ԱՐԱՐԱՏ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1905—ՌՅԾԴ

Տարի ԼԸ.	ԱՊՐԻԼ	Համար Դ.

Հրամանաւ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

Дозволено цензурою 20 апрѣля 1905 г. г. Тифлисъ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Վեհափառ Հայրապետը Բաքուի կոտորածից վնասուածներին բարեհաճեց մխիթարել հետևեալ կոնդակով.—

ՄԿՐՏԻՉ Ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի:

Հարազատ և տառապեալ հօտին իմոյ սիրելոյ, որ կայք այժմ վիրաւոր և անմխիթար, ո վշտակիր ժողովուրդ Բաքու քաղաքի. Ձեզ կարօտաւորացդ նուիրեմք յընդհանրական Մայր Աթոռոյս աստի ողջոյն Հայրական, ցաւակցութիւն Հայրապետական, խաղաղութիւն և օրհնութիւն Փրկչական։

Մինչդեռ յուսով աւետեաց խաղաղութեան և նախկին մեծ վայելչութեան Ս. Եկեղեցւոյ իմոյ ակնկալէի, մխիթարութեան մրմունջ ի շրթունս, զձեռս ի վեր և զաչս ի յերկինս ի հիւանդութեան մահճիս, դուժեաց ինձ ձայն ի Տփխեաց, որպէս երբեմն ի Հռամայ, եթէ ողբումն և լալումն և աշխարհումն յոյժ ի Բաքու քաղաքի ի մէջ հայաղանց, եթէ կատարեցաւ հօտն քո Հովուապետդ Հայոց, ել և ողբա զնոր նահատակս քո ընդ անցեալ պսակաւորացն, ել և ողբա լերս զՀեղի ի Հայաստան ընդ կորուստ

կարճացն Իսրայէլի։ Զինչ արդեօք գոյժս այս, մինթէ ձեռն Տեառն ծանրացաւ ի վերայ Ջերմեռանդ և եկեղեցասէր ժողովրդեան Բաքու քաղաքի և վասն որոց մեղացն, զինչ ինչ չար արարին արդեօք։ Գալարեցան աղիք իմ, և սառեցաւ արիւն իմ յիս ընդ այդ լուր աղէխարշ, սիրեցեալ զաւակք իմ, և ես տառապեալս և ցամաքեալս որպէս մխիթարեցից զքեզ։ Ինձ յուշ գան աստանօր ողբք Երեմիայ ի վերայ Երուսաղէմի և տառապեալ ժողովրդեան, սրդիք Սիոնի պատուականք, որ առաւել քան զականս պատուականս, զիարդ համարեցան իբրև ամանք խեցեղէնք ձեռագործք բրտի։ Դեղեցիկ էին վիրաւորքն դիականց անկելոց ի սրոյ, քան զանկեալսն ի սովու։ Վասն այսորիկ տուաւ մեզ սիրտ ցաւագին. վասն այսորիկ խաւարեցան աչք մեր։

Վշտալի հօտ իմ՝ պատուական, մխիթարեա՛ց, մխիթարեա՛ց, ասէ Աստուած, զի բազում եղև վիշտ քո և տառապանք, այսուհետև ես եղէց ձեզ ի հայր և դուք լինիջիք ինձ յորդիս, թէպէտ և նահատակ եկեղեցին և ժողովուրդն Հայոց բազումս կրեաց տառապանս և յաճախ ամայացաւ երկիրն և անշքացան տաճարք սրբութեան, սակայն փառք և գոհութիւն երկնաւորին, որ ցարդ պահեաց զժողովուրդն, կանգուն մնաց և անդրդուելի Կաթուղիկէ Եկեղեցին Հայաստանեայց զարդարեալ և ամրացեալ նորանոր նահատակօք և արեամբ նոցին սրբով։ Մի՛ չար թուեսցի քեզ փորձութիւնն եկեալ և անցեալ ընդ քեզ, զի այդ դուշակելի էր և ո՛ գիտէ ապագայն, զօրացիր և թօթափեա՛ զսուգ և զտրտմութիւն յանձնէ քումմէ, յուսա առ Աստուած, հաւատա՛ ամենակարող զօրութեան Նորա, և Նա ինքն լիցի քեզ մխիթար և զօրավիգ։ Ցուշ լիցին քեզ, ժողովուրդ Հայոց, յուշ լիցին քեզ անցք աղէտալի անցից եղբարց քոց և արենակցաց, որ ընդ տիրապետութեամբ օսմանեան պետութեան, յիշեա, զինչ անցք անցին ընդ նոսա և նոքա կան մնան անդրդուելի ի հաւատս իւրեանց, աննկուն ի գործս, յուսով ապագայ բարութեան։ Եւ ես աղօթս առնեմ վասն քո, տա-

ռապեալ ժողովուրդ Հայոց, և դուք ընդ իս աղօթս արարարէք, զի Աստուածն Գրիգորի, Աստուածն Ներսիսի և Աստուած Սահակայ լուիցէ ձայնի պաղատանաց մերոց և պահեսցէ զեկեղեցի իւր և զմնացորդս ժողովրդեան՝ յարատև, անդորր անշարժ և հաստատուն մինչև ի կատարած աշխարհի։ Եւ ընդ աղօթից և մաղթանաց պարտ է և զդոյշ կալ և մի տալ տեղի խռովութեան, անբաւականութեան ընդդարաւոր դրացիս և համաքաղաքացիս ի զուր և ի տարապարտուց, և ՁԼասել և ՁԼասիլ յայլոց։ Այլ Աստուածն ամենակարող, որ Տէրն է նեղելոց և վշտացելոց և սփոփիչ յուսահատից, մխիթարեսցէ զվշտացեալ սիրտս Ձեր և ինն, որ առաւել կամ վշտահար, կարողացուսցէ զՁեզ ի տկարութեան Ձերում, պարգևելով ամենեցունցդ սէր, միութիւն, նոր եռանդ և յաջողութիւն հանդերձ առողջութեամբ հոգւոյ և մարմնոյ և ննջեցելոց Ձերոց և նահատակաց—հանդիստ և երկնային ալքայութիւն։

Պահպանութիւն և օրհնութիւն Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին եղիցի ի վերայ համայնիցդ՝ հանդերձ օրհնութեամբ վշտակիր Հայրապետին Ձերոյ, որ եմ և ճնամ Ձեզ ցաւակից Հայր՝

ՄԿՐՏԻՉ Կաթուղիկոս ամենայն Հայոց.

Թ. 124.

Ի 11-ն Փետրվարի 1903 ամի։

Վեհափառ Հայրապետը Թիֆլիզ եղած միջոցին բարեհաճեց հաստատել Բաքուի աղէտից վնասուածներին նպաստող յանձնաժողը հետեւեալ կոնդակով.—

ՄԿՐՏԻՉ Ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի:

Գերաշնորհ Տ. Գարեգին ս. եպիսկոպոսի թեմական Առաջնորդի վիճակին Հայոց Վրաստանի և Իմերէթի և մեծայարգ պարոնայց Աւետիսի Ահարոնեան, Համբարձումայ Առաքելեան, իշխան Աղէքսանդրի Միքայէլեան Արղութեան, Արշակայ Բաբեան, բժիշկ Աղեքսանդրի Խատիսեան, Աղէքսանդրի Մելիք Ազարեան, Սոկրատայ Մելիք Ադամեան, Տիգրանայ Յովհաննիսեան, Աւետիքայ Սահակեան, բժիշ Կարապետի Ստեփանեան, Լեւոնի Սարդսեան և Աղէքսանդրի Բալանթար՝ հարազատ որդւոց Մայր Աթոռոյ՝ նուիրեալք ողջոյն և Հայրապետական օրհնութիւն։

Որ տարաբաղդն է յաշխարհիս և չարատանջն ի մարդկութեան անտէրունջ և վայրատին հօտն Հայոց ցրուեալն և սփռեալն ընդ ոլորտս տիեզերաց, ապաքէն բաղում ետես վիշտս և անհնարին կրեաց զտառապանս ի դարս դարս յետ կորուսանելոյն զիւրն անկախութիւն, և թէպէտ զրկեցաւ յաշխարհային պերճութենէն, սակայն ամրացաւ ի հոգւոյն ճոխութիւն, վտարեցաւ ի հայրենեացն, այլ զօրացաւ յօտարութեան, կրեաց զտառապանս, այլ ամրացաւ ի հաւատս, սիրեաց զաշխարհն հայրենի, սիրեաց զԱրարատն և զտունն Գրիգորի, ուստ զԱստուածամայրդ լեզուն մայրենի, որ հնչեաց յականջս նախնեաց իւրոց յաւուրց անտի երանելեացն Սահակայ և Մեսրոպայ՝ արանց մեծագործաց և Աստուածամերձ Հայրապետացն, և եկաց մնաց ցայսօր կենդանի և կենսատու իւրով եկեղեցեաւ և նուիրական Հայրապետութեամբն։ Եկեղե-

ցին և Հայրապետութիւն՝ կեանք և կենդանութիւն Հայաստան աշխարհի և հայ ժողովրդեան, աշխարհս Հայաստան և հայ ժողովուրդ ապաստան և պահապան եկեղեցւոյն և Հայրապետութեան։

Այլ անխուսափելին էր և անբաժան բաժան որէն եկեղեցւոյ և ժողովրդեանն փորձութիւն ի վերջին ամն եկն եհաս պարբերաբար, խոնարհ զժողովուրդն և կարօտաւոր զեկեղեցին հանդիսացուցանելով, այլ փառք եկեղեցւոյն և պատիւ ժողովրդեան, որ դարձեալ մինն զմիւսն պաշտպանեաց և փոխադարձ պահպանեցաւ, և այդ ի շնորհս ռուսահայ ժողովրդեան, որ կայր խաղաղ և անդորր յիւր արդար վաստակս և չէր երբէք զմտաւ ածեալ, եթէ փորձութիւն մեծ և ահեղ ի վերայ իւր իսկ հարազատիցն հասանէր։ Եհաս արդարև փորձութիւնն և այն քստմնեցուցիչ և սոսկալի իմն եղանակաւ ի վերայ անմեղ և անպաշտպան ժողովրդեան Բաքու քաղաքի՝ իբրև զդիշերն Բարդուղիմեան՝ զերիս տիւս և զերիս գիշերս, զդիաթաւալ զանմեղ և զանչափահաս զտիկինն և զօրիորդ, կոյսն և զերիտասարդն, զծերն և զմանուկն անխնայն կացուցանելով։

Արդ՝ ես վշտալիս և վշտահարս զոր՝ն լացից, զանթաղ մեռեալն թէ զանսուաղ վիրաւորն, անզաւակ ծնողն, թէ ծնողազուրկ որբն, թողում զայն դատաստան երկնային Դատաւորին, և ես զհետ լինիմ սփոփել զարկածեալն, զի այդ է բաժին Հայոց Հայրիկին՝ ողբալ, հեծել, արտասուել, գրել և բողոքել, բողոքել մինչև լուիցէ Տէր ձայնի հառաչանաց իմոց, և այց արասցէ տառապեալ հօտին իմոյ և եկեղեցւոյ սրբոյ։ Գոհ եմ զՔէնջ Մեծայարդ պարոնայք և մխիթարիմ ի սիրտ, զի չեմ միայն ի տառապանս իմ, զի ցաւակից էք ինձ և սփոփիչ վշտաց իմոց, և որ յղացեալ էք կազմել օժանդակ յանձնաժողով արկածելոյ Բաքուայ ընդ նախագահութեամբ Տ. Գարեգին ս. Առաջնորդի վիճակիս, և ես ուրախութեամբ հոգւոյ ընդունեմ զՁեանձնաժողովն Ձեր ընդ բարձու հովանաւորութեամբ՝ սիրով միացուցանելով ընդ նուիրապետական

կոչմանս և զձայն Հայոց Հայրապետին և ես լիայոյս եմ, զի և աղդայինք մեր բարեպաշտօնք և մարդասէրք յամենայն կողմանց և ի քաղաքացն Ռուսաստանի յօժարութեամբ սրտի տան զլումայն իւրեանց և արկանեն զբաժին նպաստից ի դանձանակն Ձեր յանուն Թշուառ և կարօտաւոր արկածելոց Բաքուայ, քանզի քան զամենայն քաղաքս Բաքուն յամենայն դժբաղդութիւնս մեր առաջինն հանդիսանայր յաւուր նուիրաբերութեան առ Թշուառս և կարօտեալս, իսկ այսօր ինքն կարօտի այլոց օժանդակութեան։ Հաստատեմ նոյնպէս և զօժանդակ անդամս Ձեր զանձնափոխանորդս զպարոնայս՝ Յովհաննէսն Մպենդիարեան, բժշկապետ Վահան Արծունի, Եղիշէ Թոփչեան և Աւետիք Արասխանեան։

Ողորմած և Ամենազօր Փրկիչն անցուսցէ զբաժակն դառնութեան ի մէնջ, բաւ համարեսցէ զփորձութիւնս և զոր ցարդ կրեաց և եկաց մնաց անդրդուելի եկեղեցին մեր և ժողովուրդն զդարաւոր տառապանս, կայցէ մնասցէ անշարժ և յարատև հանդերձ հարազատ զաւակօք իւրովք մինչև ի կատարած աշխարհի օրհնութեամբ և պահպանութեամբ Պատուական Հօրն մերոյ Ս. Գրիգորի Լուսաւորչին։ Ամէն։

Վասն Ձեր, սիրեցեալ աղդիս, բարերարաց Նորին աղօթարար և արկածեալ զաւակաց ի խորոց սրտէ ցաւակից Հայր և եկեղեցւոյն Հայաստանեայց վշտակիր Հայրապետ՝

ՄԿՐՏԻՉ Կարբուղիկոս ամենայն Հայոց.

Թ. 139.

Ի 14-ն Փետրվարի 1905 ամի։

Ն. Ս. Վեհափառ Կաթուղիկոսը միանգամայն գնահատելով Թիֆլիզի նահանգի վրաց ազնուականութեան պարագլուխ Նորին Պայծառափայլութեան իշխան Դաւիթ Զաքարեան Մելիքովի գործունէութիւնն ու եռանդը Բաքուի աղէտի առաջն առնելու գործում, շնորհեց հետեւեալ օրհնութեան կոնդակը.—

ՄԿՐՏԻՉ Ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի:

Պարծառափայլ իշխան Դաւթի Զաքարեան Մելիքովի՝ Պարագլխոյ Ազնուականութեան վրաց, որ ի Տփխիս, նուիրեմք ողջոյն հայրական հանդերձ Հայրապետական օրհնութեամբ։

Ճառագայթ քրիստոնէական լուսաւորութեան, որ տարածեցաւ ընդ ամենայն տիեզերս, լուսաւորելով զազգս մարդկան, միահաւասար ծագեցաւ նոյնպէս ի մի դարու յաշխարհն Հայոց և Վրաց, զնոյն և վասն մտաւոր լուսոյն և դպրութեան երկուց ազգացն կարեմք հաւաստել, որպէս և բազմադարեայն միութեանց և համերաշխութեանց երկուց դրացի աշխարհաց, թէ ի ժամանակս անկախութեանց և թէ ի վերջին դարս բաղդակիցք, խնդակիցք և վշտակիցք միմեանց՝ համահաւասար ենթարկեալք հոսանաց ժամանակին։ Վիշտ էր հաւասարապէս բարձու և զարդացեալ շրջանի Հայ և Վրացի ազգաբնակութեան ընդ այն անջրպետ, որ տիրէր ընդ մէջ երկուց հին ազգաբնակութեանց ի վերջին ամս՝ սարտուցանելով զանմեղ ժողովուրդն ի միմեանց ի պատճառս ազգային և կրօնական տարբերութեանց։

Այլ սակայն չիք չարիք առանց բարեաց և այդ իսկ դժբախտ պատահարն էր անցեալ ընդ Հայ ազգաբնակութիւն ի սկիզբն ամսոյս ի Բաքու, որ ի խոր ցնցեաց զսիրտ

համայն ազգաց և ժողովրդոց ընդ այն լուր անօրինակ դժբաղդութեան, որ ի թիւս այլոց և ի կարեկցութիւն ղազգաբնակութիւն համադրացի վրացւոցն շարժեաց, որով և անչափս զիս և զհօտն իմ պարտաւոր կացոյց, Պայծառափայլ Իշխան, Ձեզ, լբրև Պետի Ազնուականութեան նոյն ազգաբնակութեան և ներկայացուցչի միոյ հնագոյն գերդաստանի, Ձեզ և Ձեօք՝ կոնդակաւս այսու ի դիմաց իմ, հօտին իմոյ համադրացեաց մերոց և հնագոյն բաղդակից ազգի հասարակութեան վրայ զՄերն շնորհակալիս յայտնեմք, որ անկեղծաբար բաժանորդ Մեզ հանդիսացայք և վշտակից մերումս վշտակրութեան։ Տացէ Տէր, զի եղբայրական սէրն և համակրանք՝ յայտնեալք ի մէջ երկուց ազգաբնակութեանց ընդ ազատ կամարաւ երկնից, կայցէ, մնասցէ հաստատուն և յարատև, զնոյն և ի սիրտս և ի հոգիս ուսանող և մտաազ սերնդեան աճեցուցանելով, զի ընդ իմաստնոյ ումեմն, զուգութիւն է մայր բարեաց, անզուգութիւն ծնող չարեաց։

Իսկ մեք ազօթս առնեմք, զի երկնաւոր զօրութիւն, որոյ ի ձեռին են կշիռ ժամանակի և սիրտ թագաւորաց, շնորհեսցէ աշխարհիս խաղաղութիւն, եկեղեցեաց հաստատութիւն, քրիստոնէից սէր և համերաշխութիւն, նեղելոց և վշտացելոց անդորրութիւն և մխիթարութիւն և որք առաջաւորք են ազգաց և ժողովրդոց, նոցունց ևս իմաստութիւն և կարողութիւն՝ յառաջնորդել զժողովրդականս ի բարին, ի յառաջադիմութիւն և ի լուսաւորութիւն՝ առ ի հաստատել կատարեալ երջանկութեան յաշխարհիս և և յաւիտենական երանութեան ի հանդերձելումն։

Ողջ լինել ցանկամք Ձեզ, Տէր Իշխան, մնալով հանապազ վասն Ձեր և Պատուական Գերդաստանիդ աղօթարար՝

ՄԿՐՏԻՉ Կաթուղիկոս ամենայն Հայոց.

Թ. 150.

Ի 24-ն Փետրվարի 1905 ամի։

Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ Վ.Ե.Հ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ *յանուն տեսչի Հոգ. Ճեմարանի Մայր Աթոռոյ, որով պատուիրեցաւ այժմէն իսկ սկսանել զհարցաքննութիւն աշակերտաց Ճեմարանին և մինչ ցՋատիկն աւարտել։ Թ.* 161.

— *Յանուն տ. Մամբրէ եպիսկոպոսի Մարկոսեան, որով յայտնեցաւ վշտակցութիւն վասն մահուան հոգելոյս Ղևոնդ եպիսկոպոսի Շիշմանեան և պատուիրեցաւ զերկասիրութիւն հանդուցելոյն յղել ի Մայր Աթոռս։ Թ.* 182.

— *Յանուն տ. Թովմա վարդապետի, որով կարգեցաւ Փոխանորդ վիճակին Հ. Նախիջևանի։ Թ.* 186.

— *Յանուն տ. Ուխտանէս աբեղայի, որով կարգեցաւ քարոզիչ հայ ժողովրդականաց շրջակայ գիւղօրէիցն Վաղարշապատայ։ Թ.* 137.

— *Յանուն տ. Ղևոնդ եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ ձեռնադրել զՏաճատ սարկաւագն յաբեղայ և զվանեցի Յակոբն Մկրտչեան ի քահանայ Խոյ քաղաքի Պարսկաստանի։ Թ.* 188.

— *Յանուն Առաջնորդական խորհրդարանի Ն. Ջուղայի, որով պատուիրեցաւ ընդ սննդեան տ. Բագրատ վարդապետի տալ նաև զ50 ռուբլի ռոճիկ յամիսն՝ սկսեալ ի 1-ն յունուարի տարւոյս։ Թ.* 196.

— *Յանուն հայ ժողովրդեան Խոյ քաղաքի ի Պարսկաստան, որով տուաւ տեղեկութիւն զձեռնադրութեանէ նորընծայ Եղիշէ քահանայի Մկրտչեան։ Թ.* 205.

— *Յանուն վանական Կառավարութեան Մայր Աթոռոյ, որով կարգեցաւ տ. Խորէն վարդապետն Մուրատբէկեան անդամ նոյն Կառավարութեան։ Թ.* 212.

— Ցանուն Փոխանորդի Հ. Նախիջևանի, որով Ղևոնդ վարդապետն ազատ համարեցաւ ի վանահայրութենէ Նախավկայի վանուց Դարաշամբայ ի դնալ ի Վան և ի տեղի նորա կարգեցաւ Մատթէոս աբեղայն Ալոյեան՝ վանահայր Կարմիր վանուց. իսկ ի տեղի վերջնոյս ժամանակաւորապէս կարգեցաւ Մկրտիչ քահանայն Մանդակունի։ Թ. 218.

— Ցանուն Փոխ թեմակալին Երևանայ, որով պատուիրեցաւ հարցանել զհամաձայնութիւն տ. Նահանգապետին վասն կարգելոյ զՄկրտիչ քահանայն Մանդակունի ժամանակաւորապէս վանահայր Կարմիր վանուց։ Թ։ 219.

Բ.

Հայրապետական շնորհակալիք եւ օրհնութիւնք.

Կոնդակ օրհնութեան և մխիթարութեան յանուն Զումրուխտի և Աւետսի Ներսիսեանց Վերին Ագուլեցւոց՝ վասն մահուան եղբօրորդւոյն առաջնոյ և որդւոյն երկրորդի՝ հանգուցեալ Մենտորի։ Թ. 163.

— Ցանուն Տիկին Աննայի Մելիքեանց Հին Նախիջևանցւոյ՝ վասն հանգանակեալ և նուիրաբերեալ հարիւր (100) ռուբլւոյ յօգուտ Մ. Աթոռոյ։ Թ. 169.

— Ցանուն Հոգաբարձութեան արհեստական դպրանոցին Ն. Նախիջևանի վասն նորոգութեան շինութեան դպրանոցին։ Թ. 174.

— Ցանուն պ. պ. Միհրանայ Յակոբեան, Կ. Բէհլէվանեան և Զ. Զօրայեան՝ անդամոց Մասնախմբի հանգանակութեան դնեալ կիսանդրայն Վեհափառ Հայրապետի։ Թ. 183։

— Ցանուն պրոֆէսօր Մ. Նալբանդեան ի Լոզան և ամուսնոյ նորին վասն կրթական և հրատարակչական աշխատութեանց։ Թ. 184.

— Յանուն Արաբկիրցի Կարապետի Գրիգորեան վասն նուիրաբերելոյ զվեց (6) եգիպտական ոսկի յօգուտ Մ. Աթոռոյ։ Թ. 206.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն տրապիզոնցի, վերաբնակելոյն յեկատերինոդար քաղաքի, Աւետսի Մեղրիկեան, վասն նուիրաբերելոյ մի հարիւր ռուբլի յօգուտ Մ. Աթոռոյ։ Թ. 209.

— Յանուն Դանձակեցի Պօղոսի Մահտեսի Քերովբեան Տ. Մարտիրոսեանց վասն նուիրաբերելոյ մի հազար ռուբլի ի յիշատակ հանգ. հօրն Քերովբայ։ Թ. 210.

— Յանուն հայ հասարակութեան Սարիղամիշ աւանի՛ վասն նուիրաբերելոյ երկերիւր եօթանասուն ռուբլի յօգուտ Մ. Աթոռոյ։ Թ. 214.

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Սինոդը փետրվարի 22-ին ստանալով կառավարչապետի դիւանից գրութիւն Կողբում հայոց նոր եկեղեցի շինելու թոյլտուութեան մասին, մարտի 4-ին որոշեց վերադարձնել Երևանի Կոնսիստորիային եկեղեցու հաստատուած յատակագիծը և հրամայեց հարկաւոր կարգադրութիւններ անել շինութեան մասին։

Մարտի 9-ին Սինոդը լսեց Դանձակի պ. Նահանգապետի գրութիւնը Շուշուայ Ագուլեաց եկեղեցու ծխականների համախօսականի տակ եղած ստորագրութիւնների իսկութեան մասին, նաև առաջնորդի կարծիքը և բողոքող երկու քահանաների ցուցումն, որ իրենք չեն ստորագրել Կոնսիստորիայի ծառայողների դէմ այդ առթիւ տուած բողոքը, հրամայեց թոյլ տալ Մանաս դիւղի քահանայ Տէր Արսէն Հախումեանցին մնալ Շուշի և շա-

ընտակել քահանայագործութիւնը Ագուլեաց եկեղեցում, որի մասին և հրամանագրեց Ղարաբաղի Կոնսիստորիային։

Մարտի 11-ին Սինոդը կրկին մերժեց Ղարաբաղի Կոնսիստորիայի միջնորդութիւնը Կարապետ Տէր Եսայեանին Դաշալթի գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու մասին, որը մերժել էր անցեալ դեկտեմբերի 29-ին կայացրած օրագրով։

Մարտի 11-ին Սինոդը քահանայութեան արժանի գտաւ Զանգեզուրի գաւառի Կաւարտ գիւղի բնակիչ Դաւիթ Տէր Աւագեան Տէր Ազարեանցին և որոշեց դիմել Գանձակի պ. Նահանգապետին օրինական համաձայնութեան համար՝ ընծայացուին Կաւարտ գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու համար։

Նոյն թուին Սինոդը որոշեց կրկին դիմել Բաքուի տէր Նահանգապետին Սալեանի եկեղեցու շինութեան թոյլատրութեան համար, որի գործը սկսուած է 1896 թ. և դիմումն է եղել 1897 թուի յունվարի 18-ին և 1899 թուի յունիսի 20-ին։

Մարտի 14-ին Սինոդը, լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի զեկուցումն, քահանայութեան արժանի գտաւ Գրիգոր Դասպարեանցին Ջիւանշիրի գաւառի Հոռաթաղ գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու և որոշեց դիմել Գանձակի պ. Նահանգապետին օրինական հաճութեան համար։

Նոյն թուին Սինոդը լսեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիայի զեկուցումը, որով վերջինս յայտնում էր, որ Վեհափառ Հայրապետն 1899 թուի յունիսին տուած № 797 կոնդակով թոյլատրած է հինգերորդ աստիճանի խնամութեան և նոյն թուի դեկտեմբերի 17-ին № 1418 կոնդակաւ ազգակցական եօթներորդ աստիճանի պսակները, այն ինչ Սինոդը Կոնսիստորեաներին իրաւունք է տուել թոյլատրելու խնամէական հինգերորդ աստիճանի

պակները, իսկ ազգակցական եօթներորդ աստիճանի պակների առթիւ անտեղի և աւելորդ դրագրութիւն է տեղի ունենում Սինոդի հետ։ Կոնսիստորիան հայցում էր արտօնել, որ ազգակցական եօթներորդ աստիճանի պակներ թոյլատրելու իրաւունքներ տրուի Կոնսիստորիաներին և վերջ դրուի անտեղի և աւելորդ գրագրութիւններին։ Սինոդը որոշեց դիմել Վեհափառ Հայրապետին, որ իրաւունք տայ Կոնսիստորեաններին այդպիսի պակների թոյլտուութեան և այդպիսով վերջ տրուի աւելորդ դրագրութիւններին։

Մարտի 16-ին Սինոդը լուծեց Թիֆլիզի գաւառի Անտօկի գիւղի բնակիչ Ալէքսի Զալեանցի և Կատարինէ Ղազարեանցի պակը և իրաւունք տուաւ Ալէքսիին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Գրիգոր Տէր Գէորգեան Տէր Յակովբեանցին և ձեռնադրել նրան քահանայ Աղօխ գեղջ։

Մարտի 18-ին Սինոդը լուծեց Աղաւնատուն գիւղի բնակիչ Սահակ Մնացականեանի և Վառվառէ Մելքոնեանի պակը և թոյլ տուաւ Վառվառէին նորէն ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Վրաստանի և Իմերէթի հայոց Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Թիֆլիզի բնակիչ Կոնեան Ալամազեանցին Խաչթելէթ գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու և դիմել արքունի պալատ ընծայացուին հարկատուութիւնից ազատելու համար։

Նոյն թուին Սինոդը թոյլ տուաւ Երևանի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Մկրտիչ Կիրակոսեան Տէր Աւետիսեանին և ձեռնադրել քահանայ Կարսի նահանգի Գեադուկ Սաթլմիշ գիւղի վրայ։

Նոյն թուին Սինոդը թոյլ տուաւ Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Յովհան Յովակիմեան Ղահրամանեանցին և տալ չորրորդ աստիճան Շուշի քաղաքի սուրբ Յովհաննէս եկեղեցուն սպասաւորելու։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Համբարձում Գրիգորեան Ադանեանցին և ձեռնադրել նրան քահանայ Զանգեզուրի գաւառի Հարար գիւղի վրայ։

ԿՐՕՆԱԿԱՆ

ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆԹԱՑ ՕՐԸ

Այժմս արդէն կասկած չկայ, որ մենք ապրում ենք այնպիսի մի յուսալից ժամանակաշրջանում, երբ առաւել ազատ կեանքի և ազատ գործունէութեան համար կազմւում են նորանոր խորհուրդներ, դահոյքի բարձրութիւնից լսւում են յուսալի խոստումներ և կոչ ժողովրդի ներկայացուցիչներին, որոնց և յանձնուելու է օրէնսդրական ժողովներին մասնակցելու և օրէնքներ մշակելու իրաւունքն ու աշխատանքը։ Մամուլի, խօսքի և ժողովների ազատութիւնը բնակարանի և անձի անձեռնմխելիութեան, ճեմարանական ազատութեան, պարտադիր ուսման և բանտերի ու դրամատիրոջ յարաբերութիւնները կանոնաւորելու, հողատիրոջ և երկրագործի, աշխատանքի տեղողութեան և վարձատրութեան խնդիրները կարգի դնելու հետ, սպասւում է և խղճի ազատութիւն՝ ցանկացած ձևով Աստուած պաշտելու, դաւանութիւնից դաւանութիւն ազատօրէն փոխուելու, զաւակներին ցանկացած եկեղեցու կարգով մկրտելու, ազատ ամուսնանալու և այլն, և այլն, որոնք անչափ կարևոր են մարդկային իրաւունք և արժանապատուութիւն գիտակցող հասարակութեան համար։

Ճիշտ է Ռուսաստանում եղել է և ցայսօր կայ որոշ չափով կրօնական համբերատարութիւն, բայց խղճի ազատութիւն ասած մեծ գաղափարը մեզ համար ծածկեալ խորհուրդ է և ցայսօր դեռ ուենչանքների և երազների առարկայ։ Ռուսաստանում կան այսպէս կոչուած «տիրող» և այլափառ եկեղեցիներ, որոնց գոյութիւնը օրէնքով թոյլատրուած է, կան աղանդներ, որոնք օրէնքով ար-

գելուած են։ Դժուած են տիրող եկեղեցու ծոցը մտնելու բացառիկ օրէնքներ, նրանցից հեռանալու համար սահմանուած են խիստ պատիժներ, պրաւոսլաւը իրաւունք չունի այլ դաւանութեան անցնելու, իսկ այլադաւանների առաջ լայնարձակ բաց են յունադաւանութեան դռները։ Ծնողներն ազատ չեն խառն ամուսնութեան դէպքում փոխադարձ համաձայնութեամբ ընտրելու իրենց զաւակների համար այս կամ այն դաւանութիւնը, կամ ցանկացած եկեղեցու ծիսով ամուսնանալու. մարդկային կրքից ստիպուած կամ սխալ հաշիւներով ու շահագիտական նպատակներով խաբուած և տիրող եկեղեցու ծոցը մտածները հիասթափուելու դէպքում իրաւունք չունեն ուղղելու իրենց սխալը և վերադառնալու մայրենի կամ այլ եկեղեցու ծոցը. Աւետարանի ազատ քարոզութիւնն ու մարդկանց մրցակցութիւնը ճշմարիտ քրիստոնէական դորձունէութեան ասպարիզում, կաշկանդուած է և բնականաբար այս բոլորից յետոյ չի կարելի ասել, որ մեզանում դոյութիւն ունի խղճի ազատութիւն։ Սակայն հէնց տիրող եկեղեցուց սկսած բոլոր դաւանութեանց հետևողների մէջ սկսուած է ուժեղ շարժումն՝ ազատելու մարդկային հոգին ու խիղճը ամեն տեսակ կաշկանդումներից և հնաւորութիւն ստեղծելու, որ եկեղեցիք ազատ և հաւասար լինին և մեր ներքին մարդը կապանքներից արձակուած։

Այդ նպատակին հասնելու ժամը կարող է յետաձգուել, ուշանալ, բայց որ նա դալիս է և անշուշտ պէտք է հասնի, դրանում ոչ ոք չի կասկածում։

Բացի եկեղեցիների փոխադարձ յարաբերութիւններից, նրանցից շատերն իրենց ներքին կեանքի և վարչութեան եղանակով, շնորհիւ տիրող բիւրոկրատական կարգերի, հեռացած էին առաքելական կանոններից և հետևում էին աշխարհական վարչական եղանակին։ Մինչդեռ ըստ Աւետարանի եկեղեցու բոլոր պաշտօնեաները դպրից սկսած մինչև առաջնորդներն ու պատրիարքները պէտք է ընտրուէին ժողովրդից, նշանակուում էին իշխանութեան

կամքով՝ առանց ժողովրդի գիտութեան և ձայնի, և այդ-պիսով հեղհեղեալ թուլանում էր հօտի և հովուի միջի կապը, քաջ և անձնուէր հովիւների փոխարէն հանդէս էին գալիս վարձկաններ և եկեղեցին միշտ և հանապազ տուժում էր և ստանում ոստիկանական ընտրութիւն։ Բայց արդէն հասկացուել է այդպիսի դոյութեան հակա-աւետարանական և եկեղեցական շահերին հակառակ լի-նելը և միաձայն պահանջում է ազատել եկեղեցին փա-շայական վարչական ձևերից և անհատի բարեհայեցողու-թիւններից։

Ընթերցողներին յայտնի է, որ Հայաստանեայց եկե-ղեցին ցայսօր անվոխոխ պահպանել է առաքելական կա-նոնների գործադրութիւնը Տաճկաստանի, Եգիպտոսի թեմերում. վերջերս նոյն կանոնի գործադրութիւնը վե-րականգնուեց Ատրպատականում, միայն մնում են Ռու-սահայոց վեց թեմերը և նրանցում գոյութիւն ունեցող փոխանորդութիւնները, Սպահանի, Եւրոպիոյ և Ամերի-կայի թեմերը, որտեղ դեռ ընտրական օրէնքն իւր ամբողջ ծաւալով մտցրած չէ, բայց կարող եմ յայտնել Ս. Լու-սաւորչի զաւակներին, որ գուցէ նախ քան յոդուածիս ապագրութիւնը, ժողովուրդը վերստանայ՝ թէ թեմական առաջնորդներ և թէ փոխանորդներ ընտրելու իրաւունքը նաև յիշեալ 9 թեմերում և վերականգնուի առաքելա-կան կանոնների անթերի գործադրութիւնը Հայաստա-նեայց եկեղեցում։ Այո, եկեղեցու հովիւները՝ դպրից սկսած մինչև ամենաբարձր պաշտօնեան պէտք է ընտրը-ուին, ընտրուին ժողովրդի կողմից, նրա ցաւերին ցաւա-կից և եկեղեցու կարիքներին նուիրուած անձնադիր հո-վիւներից. բայց դա մերձաւոր ապագայի սաղմնած կա-կարևոր պահանջներից մէկն է, հնի վերականգնումը, արտաքին բարեփոխութիւնը։ Բայց կայ ներքին վերածնու-թեան գործ։ Խղճի կատարեալ ազատութեան ժամանակ մանկական ծիսակատարութեամբ և հանդէսներով ոչ ոք չի բաւականանալ, խոնարհեցո՛ և ապրեցո՛ ասելով չի կարելի գոհացնել ազատ մարդու, յագեցնել ճշմարտու-

թեան ծարաւի հոգիներ. դրա համար հարկաւոր է կապ հաստատել մարդկանց սրտերի հետ. լուսամիտ և լուսաւոր առաջնորդ լինել նրանց, հասկանալ Աւետարանի ճշմարտութիւնը և այն բարձրացնել ժողովրդի առաջ՝ նրա կեանքի ճանապարհը լուսաւորելու։ «Հուր եկի արկանել յերկիր. և զի՞նչ. կամիմ թէ արդէն իսկ բորբոքէր։ Համարիք եթէ խաղաղութի՞ւն եկի տալ յերկիր, ո՛չ. ասեմ ձեզ, այլ բաժին»։ (Ղուկաս ԺԲ—40). Այդ հուրը ճշմարտութեան աղատ քարոզի և մրցման ժամանակ անշուշտ պիտի բորբոքուի, խաղաղութեան փոխարէն՝ բաժանումն պէտք է ընկնի, բայց արդեօք մենք կրկարողանանք պատրաստ լինել և առաջնորդել մեր եկեղեցու զաւակներին և յաղթանակել մեր արթնութեամբ և անձնուէր գործունէութեամբ։ Զըմոռանանք յայտնութեան հետևեալ խօսքերը՝—«Որ յաղթէ, ժառանգեսցէ զայս ամենայն և ես եղէց նոցա Աստուած և նոքա եղիցին ինձ որդիք»։ (Յայտն. Գլ. 21—78). Դէն ձգենք մեզանից արևելեան անշարժութիւնը, հարկաւոր և լուսամիտ վերանորոգման անտեղի երկիւղը և պատրաստուենք աղատ մրցակցութեան և հրով մկրտուելու մեր հետևողներով հանդերձ և թող մեր օդին ու գործը բորբոքուի և ապրի Աւետարանի հրով։

Ս. ծ. վ. Մ.

ԳՈՂԳՈԹԱՅԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ.

Երուսաղէմի պարիսպներից ոչ հեռու գտնուում էր ժայռոտ մի բլուր, որ հրէից լեզուով կոչուում էր Գողգոթա՝ գլխատման տեղ, որովհետև այդտեղ սովորաբար գործադրուում էր յանցաւորներին տրուած մահուան դատավճիռը, որոնց կամ գլխատում և կամ խաչում էին։

Ժողովուրդը սովոր էր տեսնել Գողգոթայի գագաթին յանցաւորների, մարդասպանների դատավճիռը և որոշ չափով բաւարարութիւն էր ստանում նրա արդարադատութեան պահանջը այդ յանցաւորների պատժական մահը տեսնելիս։

Բայց մեզանից հազար ութ հարիւր եօթանասուն և երկու տարի առաջ Երուսաղէմում տեղի ունեցաւ մի անօրինակ դատավարութիւն. քահանայապետներն ու դպիրները, փարիսեցիք և մաքսաւորները, տեսնելով որ մի արտակարգ քարոզչի և ժողովրդի Բարեկամի, Ցաւակցի և Բժշկի շնորհիւ կամաց կամաց վնասւում են իրենց եսական շահերը և հրապարակ հանւում նրանց իսկական պատկերն ու գործը, նախ աշխատեցին հին դրքերով ու կտակարանով հերքել նրա քարոզը, ժառանգական աւանդութիւններ և անուններ առաջ բերին իրենց կաշին պաշտպանելու, բայց երբ տեսան, որ ճշմարտութեան առաջ չքանում են «Իսրայէլ, Աբրահամի սերունդ, Իսահակի և Յակովբի զաւակներ» կոչումը և քանդւում նրանց կանգնեցրած պարիսպը Իսրայէլի և շրջակայ ազգերի մէջ, որ ամենքը ճշմարտութեան համար ճանաչւում են հաւասար և ազատ, մտածեցին նախ Քարոզչին կայսեր դաւաճան հրատարակել և ապա Աստուծոյ դէմ համարձակ, և մոլորեցնելով այն խեղճ ու թշուառ ամբոխին, որի համար յայտնուել էր Փրկիչը և որի հոգեկան և ֆիզիքական ցաւերը բժշկում էր նա, որի աղքատիկ խրճիթն ու պարզ սիրտը օթևան էր ընտրում իրեն համար, ամբաս-

տանեցին և այժի առաջ սարսող դատաւորին՝ Պիղատոսին ստորագրել տուին անմեղի մահուան դատավճիռը, բայց որպէս զի այդ բանը խիստ աչքի չընկնի և ժողովուրդն անմեղի մահուան պատիժը տեսնելով, չըսկսի իւր ամբոխային գլուխը մտածմունքով զբաղեցնել և դտնել իսկական մեղաւորներին, Նրա երկու կողմերին խաչեցին նաև երկու մարդասպաններին, որոնք պէտք է թուլացնէին կատարուած անարդարութեան սոսկալի տպաւորութիւնը։ Այո, Փրկչի, Աստուածորդու կողքին խաչեցին և երկու աւազակներին։ Ցանցապարտների կառավարման Գողգոթայի վրայ կաթեց թշուառութիւն Ամոքողի, ժողովրդի Բարեկամի, ցաւոց Բժշկի և ճշմարտութեան անօրինակ պատգամախօսի սուրբ արիւնը և ջնջեց յանցաւոր կաթիլների այնտեղ մնացած բծերը։ Գողգոթան ցնցուեց, շարժուեց երկրի հետ՝ մարդկանց անարդարադատութեան անմեղ զոհի արիւնով ցողուած և երկիրը չհամարձակուեց ծածկել այն Մարմինը, որն ուզում էին շուտ անյայտացնել, շուտով լռեցնել և աղատել իրենց շահերը վերջնական կործանումից։ Սակայն ժողովուրդը հէնց խաչի մօտ սկսեց կշռել իւր արածը, սկսեց մտածել, թէ ինչպէս անարդար և ապերախտ կերպով վարուեց իւր ամենամեծ Բարեկամի հետ և կուրծք ծեծելով փախաւ Գողգոթայից. փախաւ, երբ Աստուածորդու մարող աչքերը ուղղուեցին դէպի երկինք և կրկին այդ ժողովրդի համար ներումն հայցեցին։

Ցաղթեց Գողգոթան։

Նա կափառնարան լինելուց՝ պաշտամունքի վայր դարձաւ և ոճրագործութեան մասնակից ժողովուրդը՝ շատ չանցած գնաց խաչեցեալի ետևից և Նրա ցոյց տուած շաւղով։

Իսկ երկրի սիրտը, զայրացած մարդկանց անարդարութեան վրայ, չը պահեց Փրկչի սրբառնեալ մարմինը՝ արագացնելու համար Աւետարանի յաղթանակը և Ցիսուս յարութիւն առաւ։

Այսօր մենք տօնում ենք Գողգոթայի յաղթանակը

և Փրկչի կենսատու յարութիւնը։ Գողգոթաներ անպակաս են մարդկութեան համար, որը երբեմն սայթաքելով, երբեմն կանգնելով, երբեմն նոյն իսկ փոքր ինչ յետ փախչելով կրկին ու կրկին աշխատում է մօտենալ ճշմարտութեան, բուժել անարդար կեանքի հասցրած վէրքերը, ստեղծել սիրոյ ու եղբայրութեան արքայութիւնը, և այդ ճանապարհին նա միշտ գտնում է Գողգոթա և դարձեալ Գողգոթա։ Սակայն վհատելու չէ, որովհետև ճշմարտութիւնն ու սէրը, արդարութիւնն ու եղբայրութիւնը մահ չունին և մենք այսօր շնորհաւորելով Աչարատի ընթերցողներին Փրկչի սուրբ յարութիւնը, կըմաղթենք այժ և կարողութիւն յանուն սիրոյ և եղբայրութեան, յանուն արդարութեան և մարդկութեան ցաւերը բուժելու՝ յառաջ և միշտ յառաջ դիմել և չը սարսափել երբէք Գողգոթայից, երբ նա հանդիպելու լինի, որովհետև սիրոյ և անձնազոհութեան մէջն է Գողգոթայի յաղթանակը։ Շնորհաւոր Զատիկ հայ եղբայր, երբէք մի մոռանար Գողգոթայի ճանապարհը. յանուն ճշմարտութեան և սիրոյ, յանուն եղբայրութեան և մարդ արարածների իրաւանց պաշտպանութեան քայլիր դէպի նա, բարձրացիր նրա ժայռոտ գագաթը, գրկիր այնտեղ կանգնեցրած ծանր խաչը և թէկուզ ընկնես այնտեղ ուժասպառ, չի ուշանալ և քո Գողգոթայի լիակատար յաղթանակը։

Ե. Ծ. վ. Մ.

ՄԱՅՐԱԹՈՌ

Ազգիս Վեհափառ Ծերունազարդ Հայրապետը օրհնում և շնորհակալութիւն է յայտնում այն բոլոր անձանց և հիմնարկութիւններին, որոնք որդիական պարտաճանաչութեամբ շտապել էին շնորհաւորել Նորին

Սրբութեան ծննդեան ուխտն և հինգերորդ տարեդարձը սոյն ապրիլի 5-ին։

Բարձրագոյն հրամանով Ղարաբաղի թեմի առաջնորդ հաստատուեց Սինոդի անդամ դեր. Աշոտ վարդապետ Շախեանը։

Օրեօլ քաղաքից վերադարձաւ և վանական կառավարութեան անդամ նշանակուեց Խորէն վարդապետ Մուրադբէկեանը։

Երևանի թեմի Գառնիբասարի գործակալ և Կոնսիստորիայի նախանդամ նշանակուեց Լևոն աբեղայ Փսերեանը։

Աքսորից ազատ արձակուեց Մողնու ս. Գէորգայ վանահայր Ղուկաս վարդապետը։

Մարտի 22-ին Ս. Էջմիածնում յանկարծամահ եղաւ Երևանցի Գրիգոր վարդապետ Տէր Ստեփաննոսեանը (Պաչտենին) 69 տարեկան հասակում։

Հանգուցեալը մեր աւագագոյն միաբաններից մէկն էր և վարել էր բազմաթիւ պաշտօններ։ Նա եղել էր կառավարիչ Կիշինևի Էջմիածնապատկան կալուածոց, Փոխանորդ Գանձակի, գործակալ Էջմիածնի և Սուրմալուի դաւառների, անդամ վանական կառավարութեան, վանահայր Գայանէի, Խոր Վիրապի, Կարմիր և Թումա առաքելոց վանուց Ագուլիսում։ Ով որ դէթ միանգամ տեսել

և վայելել է նրա ընկերակցութիւնը, անշուշտ կըցաւի այդպիսի մի պարզ սրտի, խելացի, սրամիտ և խորիմաստ սրախօսի մահուան համար։ Հանգուցեալը եթէ աշխարհական լինէր և ծառայէր դրականութեան, համարձակ կարող էր բռնել պատուաւոր մի տեղ մեր երգիծաբանների շարքին։ Նրա մահը անխտիր բոլորի վրայ ծանր և տխուր տպաւորութիւն թողեց և նրա անունն ու յիշատակը հազիւ թէ մոռացուի իրեն ծանօթ անձանց շրջանից։ Հանգուցեալը, ինչպէս վերևն յիշեցինք, պարզ և սակաւապետ մարդ էր։ Նրա ամբողջ հարստութիւնը հանում էր 47 ռուբլու, որի դէմ համարեա նոյնքան էլ պարտք ունէր։ Հանգիստ ոսկերացդ մաքրասիրտ մարդ, գնա վաստակեալներին հանգստութիւն պարգևողի մօտ և աղօթիր նրա սուրբ Աթոռի առաջ քո սիրած եկեղեցւոյ անդորրութեան և հաստատութեան համար։

ՏԱՃԿԱՀԱՅՔ

«Բիւզանդիոնի» մէջ կարդում ենք՝—

Պուքրէշէն (Ռումանիա) արժանահաւատ եկեղեցական մը նամակ մ'ուղղելով Պատրիարքարան, կ'դանգատի ռումանահայոց ուսումնական բարքերուն մէջ տիրող զեղծումներուն համար։ Կ'ըսէ թէ երբ Հայ եկեղեցւոյ օրինաց հակառակ պսակադրութիւն մը կնքել կ'ուզուի, ինչպէս երբ մօտաւոր ազգականի մը հետ ամուսնանալու համար կըդիմեն ու կըմերժուին, Ռումէն եկեղեցին դիմելով կ'պսակուին։ Թէև Ռումէն եկեղեցին ալ չարաշնէր, երբ ներկայացող ամոլն հայ է, բայց վերջերս 20-ին Ռումէն եկեղեցին պսակեր է, հակառակ օրէնքին։ Հայ եկեղեցին չէր ընդունած, որովհետև աղգակցական մօտաւոր կապ մը գոյութիւն ունէր։ Նոյնպէս Հայ եկեղեցին չի պսակեր այն ամոլն, որ քաղաքային ամուսնութեամբ կենակցելէ վերջ կ'ամուսնանան և այս պարագային ալ դիմում կ'ընեն Ռումէն եկեղեցին։

—Բայց առնելով մերձաւոր ապագայական կապը, երկրորդ դէպքում եկեղեցական իշխանութեան վարմունքն ապօրինի է, որովհետև քաղաքային ամուսնութեամբ կենակցելուց յետոյ եկեղեցական ամուսնութեան դիմողները նման են ապաշխարողներին, որոնց եկեղեցին երբէք չի զրկել թողութիւնից և հաղորդութիւնից:

«Համակարգիչը նկարագրել է վերջ այս դեղծումները, կինդրէ, որ Պատրիարքարանն հարկ եղած դիմումն ընէ, որ զեկուցուն պատկանեալ պաշտօնատանց և անոնցմէ ալ Ռումանիոյ միտրապոլիտութեան, որ Ռումանիոյ եկեղեցիին օրինաց հակառակ պատկառութիւններ չըլլան: Կառն ժողովն իր առաջիկայ նիստին մէջ պիտի խորհրդակցի այս խնդրոյն վրայ:

———

Նոյն թերթում կարդում ենք.—

—Ինչպէս յայտնի է, Ս. Հաղորդութեան համար անապակ գինի կըգործածուի, սակայն մայրաքաղաքիս գանազան թաղերը դիւրութիւն չ'ունենալով հայթայթել այս հարազատ գինին, գինետուններէն կ'ստիպուին դնել: Այս անպատեհութեան վերջ տալու համար Գարթալի եկեղեցւոյն թաղ. խորհուրդը գաղափարն ունեցեր է անապակ գինի պատրաստելու և շիշերով Պատրիարքարան զրկելու, ուրկէ պիտի բաշխուի կարօտ թաղերուն և այս շիշերուն վաճառումէն ղայացած հասոյթը պիտի յատկանայ Գարթալի եկեղեցւոյն:

———

Նոյն թերթի մէջ կարդում ենք.—

Երուսաղէմի վանքին արդի ելեմտի տեսուչը երէկ Պատրիարքարան ուղղեց իր քննութեանց երկրորդ տեղեկագիրը և անոր հետ ալ երկու ցուցակներ, որք ցոյց կուտան վանքին տոկոսաւոր պարտուց ճիշտ քանակը: Առաջին ցուցակին մէջ նշանակուած են զանազան անձերու և հաստատութեանց պարտամուրհակները, որոնց գումարը կ'յանդի 1,250,000 ղրուշի. Օսմ. ոսկին 100 ղրուշէն. և այս ուրձանագրուած է պաշտօնական տումարներուն մէջ: Երկրորդ ցուցակին մէջ նշանակուած պարտամուրհակներուն գումարը կըյանդի 989,000 ղրուշի, բայց այս մասին պաշտօնական տումարներուն մէջ որ և է ուրձանագրութիւն չկայ: Տեղեկագրին մէջ յիշուած է, որ Աղէքսանդրիոյ վանքապատկան հողը ծախուեր է վանքին տոկոսաւոր պարտուց վճարման համար. և Ղևոնդ վրդ. ս. Պատրիարքին, Տնօրէն ծո-

ղովին և ի Ներկայութեան Կիլիկիոյ արդի ս. Կաթողիկոսին խօստացեր է, թէ այդ դումարէն մաս մը ի պահ տրուի, և Ցունաց վանքը տուեր է տոկոսով, որուն համար արձանագրութիւն չկայ. բայց պանոյով յանձնած ըլլալուն համար վերջէն գանձեր է ամբողջովին:

«Լուսաբերը» հաղորդում է, որ Երուսաղէմի ս. Պատրիարքին հոկողութեամբ Ելեմտից նոր տեսուչը սկսած է ճշդել վանքին մատակարարական վիճակը դտնուած ոսմարներէն, և պայմանաժամը լրացած մուհակները վճարուեր են: Փննութեանց արդիւնքը հետզհետէ պիտի տեղեկագրուի Պատրիարքարան:

Նոյն թերթն հաղորդում է, որ Ղևոնդ վարդապետ Երուսաղէմէն խնդրեր է, որ քանի մը օր միջոց տրուի իրեն Պոլիս գալու համար պատրաստութիւններ տեսնելու, հաշուական թղթեր և անոնց օրինակներ միասին առնելու և այլն: Ս. Պատրիարքը յարմար դատեր է, քանի մը օր պայմանաժամ տալ Ղևոնդ վարդապետին:

Նոյն թերթում կարդում ենք.—

— Ռուսահայ Լուիֆիկ Սերկէյեան անուն հարուստը, 20,000 ռուբլի անձեռնմխելի դումար մը կտակեր է Վանի Նոր-ամահատատ Կեդրոնական Վարժարանին: Այդ դումարի տարեկան տոկոսը՝ մօտ 100 ոսկի՝ տարուէ տարի պիտի ղրկուի այդ Վարժարանին, եթէ արդի կալուածական խնդրոց առթիւ այդ կտակի գործադրութիւնը դժուարութեանց չի բաղնի:

«Արևելեան Մամուլի» փետրվարի 16-ի համարում կարդում ենք.—

—«Գոհութեամբ կըտեղեկանանք, թէ անցեալ հինգշաբթի փետրվարի 10-ին Աղդ. Առաջնորդարանի մէջ Շէրիի դատարանին կողմէ ղրկուած պաշտօնեայի մը միջոցաւ, ի Նեկայութեան ս. Առաջնորդ հօր, արժամեայ միաբէվէլլութեամբ Յակովբ էֆէնդի Հարէնցի և վկայութեամբ Նազարէթ էֆ. Հ. Ներսիսեանի, Սարգիս էֆ. Շահինեանի և Առաջնորդարանի Դիւանապետ Սարգիս էֆ. Պալատանեանի արձանագրուած են վակֆի այն պայմանները, որոց համեմատ Կարապետ էֆ. Ակնաուրեան

տեղւոյս ազգային Հիւանդանոցին կրթողու իր շինել տուած քսան տունները։

«Լուսաբերի» մէջ կը կարդանք.—Կիմանանք, որ վոնեմաշուք Պօղոս փաշա Նուբար իր հիմնելիք վաճառականական վարժարանի շինութեան ծախքերուն և պահպանութեան համար մէկ միլիոն ֆրանկ—իբր 40,000 անգլիական ոսկի յատկացուցած է։

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՊՐԱՀՕՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ ՌՈՒՍԱՑ

Ոչ ոք այնպէս ճկուն չի եղել զանազան դրութեանց յարմարուելում, որքան հոգևորականութիւնը, որն իր բարոյական ոյժը կորցրած, դարձած մի միայն ծիսակատար և ծիսապաշտ, թէ ինք է զգացել իւր ծանր կացութիւնը և թէ ժողովրդի համար դարձել սոսկ արհեստաւոր։ Աւետարանի էականից հեռացած և զանազան դաւաբանական խնդիրներում ու սխոլաստիքական ուսմամբ խճճուած հոգևորականութիւնը իւր դրութիւնը պահպանելու համար անշուշտ պէտք է որոնէր հզօրների հովանին և ինչ զոհ էլ հարկաւորուէր, պէտք է բերէր նա որպէս զի կարողանար պահպանել իւր գոյութիւնը և ապրէր։ Եղել են դէպքեր, երբ կաստայականացած հոգևորականութիւնը ոչ մի միջոցի, ոչ մի անարդարութեան և անգթութեան առաջ կանգ չի առել իւր կաշին և իրեն պաշտպանողների կաշին պաշտպանելու համար և հէնց դորանումն է եղել եկեղեցու անկումը, նրա մահաբերը հիւանդութիւնը։ Բայց եղել են շրջաններ, երբ համարձակ ռահվիրաներ՝ աներկիւղ դուրս են եկել և կեանքի գնով բողոք բարձրացրել կատարուող անկրաւութեան և անկման դէմ։ Այդպէս էր Խարբինի եպիսկոպոսի շրջաբերականը, որը մենք քաղուածօրէն առաջ բերենք։

«Церковный Вѣстникъ» թերթի № 10-ում տպուած է Ս. Պետերբուրգի միտրապոլիտ Ս. Անատոնի նամակը «Ռուսաստանի իսկական վիշտը» մակագրութեամբ, որ ուղղուած է ուրիշ կողմ

և որը ամբողջովին առաջ ենք բերում ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրելով այդ նշանաւոր տողերի վրայ: «Ծանր վշտի մէջ է այժմ Ռուսաստանը: Դժբաղդ պատերազմի սկզբից անցաւ արդէն մի տարի: Նաւատորմը ոչնչացրած է: Մեր քաջ զինուորները թշնամու գնդակներից մեռնում են տասնեակ հազարներով: Զօրաբանակը կրում է պարտութիւն պարտութեան ետևից: Մեր սրտերում կատարեալ յուսահատութիւն է:

Առաջին անգամ չէ, որ սուրբ Ռուսաստանին այցելում են ծանր դժբախտութիւններ: Նա անցրեց «ինքնակոչի» ժամանակները պատուաւոր կերպով, յաղթանակով վերջացրեց շվեդացիների հետ ունեցած դարաւոր պատերազմը և Նապոլէոնի սոսկալի արշաւանքները: Բայց այն ժամանակուայ Ռուսաստանն այն չէր, ինչ որ ներկայումս է: Նա այն ժամանակ հզօր էր իւր դէպի հաւատն ունեցած սիրով, անձնուէր էր թագաւորին և հայրենեաց: Իսկ այժմ ի՞նչ ենք տեսնում:

Մղւում է սոսկալի պատերազմ: Պէտք է որ մենք բոլորս միանայինք վսեմ անձնազոհութեամբ և հայրենասիրութեամբ. բայց դրա փոխարէն մեր երկրում իշխում է նեղքին յուզմունք և խռովութիւն: Ռուսաստանի հարազատ զաւակները հներում անծանօթ վարդապետութեան շնորհիւ, թշնամութեամբ յոշոտում են նրա սիրտը: Չկայ սէր դէպի եկեղեցին: Անյայտացել է մեր՝ դէպի իշխանութիւնն ունեցած պատկառանքը: Ամեն ինչ տակն ու վրայ է եղել. թողել են գիտութիւնը, սակ տակ են տուել բոլոր սրբութիւնները: Անցեալ բարեկենդանին, երբ մեր հարազատ հերոսները թշնամու հետ անհաւասար կռւում ուժասպառ էին լինում և կոտրւում արիւնահեղ սոսկալի կռիւներում, մենք այդպիսի հանդամանքներում դարձեալ չ'ամաչեցինք և սովորական քէֆից չը հրաժարուեցինք. կողմնակի դիտողի համար ծանր էր տեսնել մեր բարոյական այդպիսի սանձարձակութիւնը: Դրա համար էլ արդարացի կերպով բոլորին ատելի դարձանք և աշխարհի բոլոր ազգերի համար ծաղրի առարկայ եղանք:

Այ թէ ո՞րտեղ է Ռուսաստանի խոկական վիշտը: Մեզ համար չմնաց ոչ մի սուրբ և անձեռնմխելի բան: Կորցրել ենք Աստուծոյ երկիւղը, ժամանակակից դերմարդկանց կուլտ եսականութիւնը սիրեցինք: Ահա անցաւ քառասնորդական պահոց առաջին շաբաթը: Նրա հետ կթռչին կերթան մեր ժամանակաւոր ժուժկալութիւնը և կարճաժամանակեայ ողջախոհութիւնը: Քաղաքից դուրս կատարուող զուարճութիւնները, թատրոններն ու տեսարանները նորից կբյափշտակեն մեզ դէպի սանձարձակութիւն, զուարճութիւն և անառակութիւն: Եւ

եկեղեցին աղօթում է ուղղուելու համար և եղբայր դինուորներն հառաչում են մեզ համար մեռնելիս։ Իսկ մենք ինչ բան ունինք։ Գինին, տեսարաններն ու խրախճանքը։ • • • Այ որտեղ է մեր դանձը, մեր սիրտը։ այ թէ ինչ ենք որոնում և ցանկանում։ Մեզ քաղցը է թուում այդ արքեցած, կոպիտ, կեղտոտ, ստոր և դիւական դրութիւնը։ Եւ ընդհակառակն մեզ համար տխուր է այն ամենը, ինչ որ զգաստ, պատկառելի, մաքուր, լուսաւոր և Աստուածային է։ Ճշմարտութիւն, խաղաղութիւն, խնդութիւն և հոգւոյ սրբութիւն մենք չըգիտենք։ Նրանք մեր որտին օտար են։ Այս դէպքում խիստ տեղի են Անդրէաս կրետացու կանոնի խօսքերը։—«Օրէնք թուլացան, Աւետարանը չի գործադրւում, գիրը մատնուած է անփութութեան, մարդարէթիւնք սպառուել են և նրանց հետ բոլոր արդար և ճամարիտ խօսքը»։ Մեր հոգևոր վէրքերը շատացել են, իսկ բժշկութեան մասին չենք խորհում։

Սթափուիր, ով սուրբ Ռուսաստան։ Պրաւօսլաւ Ռուսաստան։ ամաչիր, Աստուածանից վախեցիր։ Զդիր քեզանից մեղաց ցեխն ու անմաքրութիւնը։ Ապաշխարիր, լուսաւորուիր և Աստուած կ՚ողորմի քեզ»։

—Բայց եթէ Ս. Անտոնիոս միտրապալիտի ասածի նման այդպիսի տիզմի մէջ է խրուել Ռուսաստանը մինթէ այդ կատարուել է յանկարծակի, աննկատելի կերպով, կամ հրաշքով։ Ինչու՞ այն ժամանակ չեն մտածել, երբ յանցանքը փոքր էր, մեղքը ինչին։ Եւ եթէ այդ աստիճանի յետադիմել է այդ հսկայական երկիրը և բարոյապէս այլանդակուել, ինչու ժամանակին չի մտածել հոգևորականութիւնը։ ինչու արմատահան չի արել և սաղմի մէջ չի խեղդել պատճառները։ Արդեօք զօրաւորներից չէր նրանց սկիզբը և հէնց դրա համար չէիր դիր չէիր մնում հոգեւորականութիւնը • • •

Մեր ժամանակի ստեղծագործող ազատ միտքն ու շունչը շարժեցին վերջապէս մի մարմին, որը նկատուել էր միշտ անշարժ յետադէմ և գործիք լինելու ընդունակ։ Երկար լռութիւնից յետոյ Ռուսաստանի Ներկայ խորհրդաւոր և երկունքի րոպէներին ձայն հանեց վերջապէս և պրաւօսլաւ եկեղեցու քահանայական դասը և ինչպէս որ կարելի էր սպասել՝ այդ ձայնը լսուեց Պետերբուրգից, Ռուսաստանի և Եւրոպայի այդ «պատուհանից», ինչպէս կոչել էր նրան Պետրոս Մեծը։ Մայրաքաղաքի քահանաների մի խումբ առանձին հանրագրով դիմել է

Ս. Անտոն միաբանապետին, դնելով եկեղեցու վերածնութեան և աւետարանական շաւղին վերադարձնելու ամենակարևոր պահանջները, որը մենք առաջ ենք բերում քաղուածօրէն Церков. Вѣстникъ-ի № 11-ից: «Մի միայն ազատ, իւր դաւանութեան լիութիւնը գիտակցող, իւր ներքին կազմակերպութեան բանին ծառայող, իւր բոլոր գործերն անձամբ կառավարող ազատ եկեղեցին կարող է պահպանել իւր բոլոր զաւակների մէջ հաստատուն, որդիական մաքուր հաւատ դէպի ինքն և ունենալ իւր աստուածային կոչումն իրագործելու անհրաժեշտ ձայնը, որից պէտք է բորբոքուեն մարդկային որտերը: Արտաքոյ այդ ազատութեան եկեղեցին կարող է պահպանուել, բայց ապրել, ազդել և գործել այնպէս, ինչպէս որ խիզբանէ յատուկ է իրեն, չի կարող: Իրեն ընորոշելու և արտայայտուելու գործում խեղդուած պրաւոսլաւ եկեղեցու ձայնը, որին կասկածանքով են նայում և համարում են սորկացած աշխարհային—պետական շահերին և նպատակներին, կարող է արդեօք ընդգիմադրել այլադաւան, այլափառ, հնածէս և այլ ամեն տեսակ մտածող անկեղծ, ազատ և համոզուած քարոզիչների ձայներին, արդեօք նա չի խլանալ այլ ձայներից: Իսկ որ նա խաղաղասիր և իշխող համարուած եկեղեցու ձայնը չունի իւր հեղինակութեան համապատասխան անկախութիւն և շատ յայտնաւոր ոչ թէ օտարներին, այլ և հարազատներին ներկայանում է անազատ կողմնակի ազդեցութիւնից և նկատումներից, կարծում ենք ապացուցանելու կարիք չկայ, որովհետև հէնց պետական հիմնական օրէնքն ասում է, որ «եկեղեցական կառավարութեան գործում Ինքնակալ Իշխանութիւնը գործում է իւր հիմնած կառավարիչ որբազան Սիոդի միջոցաւ: (օրէնսգրքի I հատ. ա մասն, գլուխ VII, յօդուած 43)» Այնուհետև նկատելով, թէ ինչպէս հետզհետէ սատականում է ժողովրդի տրտունջը եկեղեցու դէմ, որ հասարակական կեանքի վրայ եկեղեցին կորցրել է իւր ազդեցութիւնը. հանրագիրը շարունակում է.—

«Ժամանակակից նշանները պայծառ և աւելի ուժգին, քան երբ և իցէ, ցոյց են տալիս, որ եկեղեցին պէտք է դուրս գայ այն խորթ և իրեն անվայել վիճակից, որի շնորհիւ նա հանդիսանում է կամ որպէս Պետութեան առաջ ինքնուրոյն կերպով հասկացուած ու գործող մի ոյժ, կամ թէ՝ ոչ տաք և ոչ պաղ ուղեկից և գիտող մարդկային գործերի և հասարակաց կեանքի: Աւելի քան անհրաժեշտ է, որ եկեղեցին վերադարձնի իրեն մարդկանց կեանքի վրայ ունեցած իւր արդիւնաւէտ ազ-

դեցութեան ամբողջ ոյժը և իւր ձայնի կատարեալ զօրութիւնը: Իսկ այդ բանի համար նա ամենից առաջ պէտք է վերադարձնի իւր դարաւոր այն ազատութիւնը, որ որոշուած և սահմանուած է սրբազան կանոնների շարքով, որոնք թէև մոռացուած ու անարգուած, սակայն չեն կարող կորցնել իրենց դարաւոր պարտադիր նշանակութիւնը»: Այնուհետև քահանայք զրում են, որ եպիսկոպոսը պէտք է ընտրուի թեմի կողմից, որ եպիսկոպոսները պէտք է հաւասար լինին, իրենց ժողովրդից անբաժան, չեն կարող պաշտօնում բարձրանալ կամ ցածրանալ, որովհետև եպիսկոպոսական կոչումը հաւասար է, որ ոչ ոքից եպիսկոպոսը ոչ մի պարգև կամ արտաքին նշան չի կարող ստանալ, որոնց մասին սրբազան կանոնները ոչինչ չեն ասում. որ մի քանի թեմեր պէտք է կազմեն միտրոպոլիտութիւն, իսկ բոլոր միտրոպոլիտութիւնները մի ընդհանուր ռուսական պատրիարքութիւն. որ եկեղեցական պաշտօնեաներից մինչև պատրիարքը պէտք է ընտրուին ժողովրդից և որ այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է հրաւիրել տեղական ռուսական եկեղեցու ժողով, որը կըկարողանայ վերականգնել պրաւոսլաւ եկեղեցու կանոնական ազատութիւնը:

—Մի ժամանակ մեր խելօքները կաշուից դուրս էին գալիս հետզհետէ արմատախիլ անելու ընտրական սկզբունքը և նշանակելու եկեղեցական պաշտօնեաներին և դրա մէջն էին տեսնում Հայաստանեայց եկեղեցու ոյժը: Մի կողմից հասկանալի էր այդ մոլորութիւնը, որովհետև մեզ վաշա, խան և մարակ է եղել սիրելի և հրամանատար, սակայն լսելով պրաւոսլաւ եկեղեցու հովիւների այս զգաստ ձայնը, պէտք է զգան իրենց սխալը և վերադառնան ընտրողական լայն սկզբունքը. շատ հետաքրքիր է: Ժամանակ է, որ մեր թեմերը ձայն հանեն այդ կարևոր խնդրի առթիւ և վերականգնեն Հայաստանեայց եկեղեցու այդ դարաւոր, կանոնական և սրբազան իրաւունքը, որը գործ չի դրւում մի միայն Կովկասում և Ռուսաստանում: Ժամանակ է, որ մենք էլ ձայն բարձրացնենք և քանի որ ժամանակ է, հայցենք կանոնադրութեան վերադառնալու իրաւունքը: Ծիծաղալի և ցաւալի չէ՞. ծուլը պահպանում է իւր բնsրական իրաւունքը, իսկ թեմերի գլխին այս կամ այն կողմնակի անձանց միջամտութեամբ ու քմահաճութեամբ են թեմակալները վարթարում և այն շատ մութ և կասկածելի միջոցներով: Ամբողջ հարիւր տարի այդ սխալ և՝ վնասակար և խորթ շաւղով է ընթացել Հայոց եկեղեցին Կովկասում: Ժամանակ չէ՞ ուղղելու այն, մանաւանդ որ ներկայ Վեհափառ Հայ-

բապետը սկրում է ընարական սկզբունքը և դէմ չի լինել մարմնացնելու այն մեր կեանքի մէջ էլ։ Բայց մենք էլ ունի՞նք քահանայք և ժողովուրդ, որոնք ձայն հանել կարողանան այդ մասին։

Ռուսական հեռագրական գործակալութիւնը հաղորդում է Պետերբուրգից հետեւեալը.—

«Մարտի 22-ին կայացաւ սրբազնագոյն Սինոդի նիստը, ուր վերջնականապէս վճռուեց Ռուսաստանում պատրիարքութիւն վերականգնելու հարցը և պատրիարքական ընտրութեան համար համառուսական եկեղեցական ժողով գումարելու խնդիրը։ Սինոդի որոշումը կներկայացուի Թագաւոր Կայսրին։ Մտադրութիւն կայ եկեղեցական կանոնների հիման վրայ ժողովը գումարել Մոսկվայում։ Պատրիարքութեան ամենահաւանական թեկնածուն համարւում է մայրաքաղաքում հովուապետական բարձր պաշտօն ունեցող անձը, ուստի պատրիարքական գաւազանն երևի կըստանայ Պետերբուրգի և Լադոգայի միտրապալիտ Անտոնիոսը։ Սրբազան Սինոդը Պատրիարքի մօտ միայն խորհրդակցական օրգան կլինի։ Սրբազնագոյն Սինոդի օրէր-պրօկուրորի պաշտօնը պէտք է վերացուի։ Թագաւորին ղեկուցումն անելու իրաւունքն անցնում է պատրիարքին»։

Վերոյիշեալ երևոյթն այնքան մխիթարական է և եկեղեցին ամենայն կաշկանդումներից ազատող, որ չի կարող ուրախութիւն չըպատճառել Աւետարանի աշակերտ և նրան ապատ շաւղով ապրել և ընթանալ ցանկացողին։ Աւետարանը պէտք է լինի եկեղեցու հիմքը, օրէնսդիրքն ու դատախազը և ոչ թէ նշանակուած այլ և այլ պաշտօնեաներ ու քաղաքական միտումները։

ՊՐԱՀՕՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ ՎՐԱՑ

«Յնօրլիս Փուրցէլի» մէջ կարդում ենք.

—Մարտի 16-ին Քութայիսում սկսուեց նահանգի վրայ հոգևորականների համաժողովը։ Նախագահ ընտրուեց Մ. քահանայ Մճեդլիձէն։

Սկզբում արձանագրուեցին այն խնդիրները, որոնք խորհրդածութեան առարկայ պէտք է դառնային։ Քննութեան առնելով հոգևորականութեան և ժողովրդի տարբերութեան

հեսպհետէ վատանալը, ժողովն այն եզրակացութեան եկաւ, որ դա հեռանալ է՝ բացի մի քանի պատճառներից, նաև քահանայից սրբազնագործութեան համար վարձատրելու վատ ձևի:

Մարտի 18-ին խորհուրդը զբաղուեց մոմի գործարանի հարցով: Գործարանը Բուխարեստից փոխադրուել է մերձակայ Գէլաթի վանքը, որտեղ գործարանը կառավարում և բանեցնում են վանականները: Սրանք գեղեցիկ կերպով ուսումնասիրեցին մոմագործութեան արհեստը և ահա այդ բանի շնորհիւ աւելի յաջող գնաց մոմագործութիւնը: Համախորհուրդը որոշեց մոմավաճառութիւնը յանձնել ծխականներին, միայն թէ աշխատանքը մնալով նրանց իրաւասութեան ներքոյ, գործ դրուի նրանց եկեղեցական և այլ կարիքների վրայ: Այսօրուանից քննութեան առնն նախարարական խորհրդին մատուցանելու հանրագիրը, որիմէջ ուշադրութեան արժանի շատ և շատ նշանաւոր կէտեր կան: Ի մնջի այլոց ասուած է, որ ժողովուրդը պէտք է ընտրի վրաց եկեղեցու համար թէ կաթողիկոս, թէ քահանաներ և թէ դպիրներ:

Հանրագրի մէջ շեշտուած է, որ ներկայումս մեծ տարաձայնութիւն կայ հոգևորականութեան և ժողովրդի մէջ և պարզաբանում է այդ երևոյթի պատճառները: Որպէս զի հոգևորականութիւնը ժողովրդին մօտ լինել կարողանայ, նա պէտք է լինի ժողովրդական, նրա նկատուկացին և սովորութեանց ծանօթ և սովոր, ժողովրդական հոգով կրթուած: Այն օրուանից երբ Վրաստանը միացաւ Ռուսաստանին, վրացիք կորցրին իրենց կաթողիկոսութիւնը և ժողովրդական եկեղեցին: Ճիշտ է հոգևոր ոտորին պաշտօնեաները ծագումով գլխաւորապէս վրացի են, սակայն դատիարակութեամբ վրացութեան հետ ոչ մի ընդհանուր բան չունին: Այն դպրոցներում, որտեղ ուսում է առնում մեր հոգևորականութիւնը, սովորեցնում են ամեն բան՝ բացի վրացերէնից:

Բացի դորանից Վրաստանում եկեղեցին դարձել է քաղաքական միտումների ասպարէզ, դարձել է կառավարութեան գիւանատուն և ժողովուրդը ընականապէս թշնամաբար է նայում հոգևորականութեան. որան աւելանում է նաև քահանաներին վարձատրելու ագեղ ձևը:

Վերոյիշեալների պատճառով Իմերէթի հոգևորականութիւնը կարևոր է համարում վրաց եկեղեցու կատարեալ անկախութիւնը իւր կաթողիկոսի առաջնորդութեամբ: Կաթողիկոսին ընտրելու է տեղական եպիսկոպոսների, ժողովրդի և հոգևորականութեան ներկայացուցիչների ժողովը. իսկ ընտրը-

ուածին հատատելու է իշխանութիւնը։ Հոգևորականներին ընտրում է ժողովուրդը։ Հարկաւոր է դպրոցական գործի կատարեալ բարեփոխութիւն։ Դպրոցները պէտք է լինին ազատ, մի միայն կրօնի երկու տարուայ դասընթացով։ Հոգևորականութեան թեկնածուների համար պէտք է երկու տարուայ աստուածաբանական դասընթացով դպրոց բանալ։

Բարձրագոյն դպրոցում պէտք է հիմնել աստուածաբանական ամբիոն մտցնել խօսքի, մամուլի և ժողովների ազատութիւն նաև հոգևորականութեան համար։ Հոգևորականութիւնը պէտք է ունենայ քաղաքացիական այն բոլոր իրաւունքները, որոնք հովուական պարտականութիւնների դէմ չեն։ Եկեղեցին և հոգևորականութիւնը ազատ պէտք է լինին քաղաքական նպատակներին ծառայելուց, ինչպէս և դատաստանական և վարչական պարտականութիւններից։ Պէտք է վերջ տրուի հոգևորականութեան նիւթական ներկայ կացութեան և ժողովրդից կախումն ունենալուն։ Որովհետև Վրաստանը քաղաքականապէս չի անջատուում Ռուսաստանից, այդ պատճառով հոգևորականութիւնը նիւթականապէս պէտք է ապահովուի բաւարար ռոճկով։

Միևնոյն ժողովը որոշեց երեք հեռագիր ուղարկել, որոնցից առաջինը Նորին Սրբութեան ամենայն Հայոց Կաթողիկոսին, երկրորդը Շէյխ իւլ իսլամին և երրորդը «Ռուս» թերթի խմբագրութեան։ Կաթողիկոսին ուղղուած հեռագրի բովանդակութիւնն էր հետևեալը.—

«Իմերէթի թեմի քահանայից 45-դ համաժողովը յատնկայտ յարգեց Բաքուում կոտորածների յիշատակը և վճռեց խորին շնորհակալութիւն յայտնել Ձերդ Սրբութեան՝ այն ջանքերի համար, որը ցոյց տուին հայերի և թուրքերի մէջ պատահած արիւնհեղութեան միջոցին»։

ԱՆԱՊԱՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Բ.

Եթէ յարելուք ընդ Քրիստոսի, ապա զվերինն խնդրեցէք, ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ։ Զվերինն խորհեցարուք, մի զայս, որ յերկրի ասա է։ Քանզի մեռարուք և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած։ Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն ձեր, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք։ Պօղոս առաք. Գ. 1—4.

Պաւղոս միայնակեաց եւ Անտոն անապատական

Ինչպէս ասացինք, քրիստոնեայ եկեղեցին միայն Եղիա մարգարէին ու Յովհաննէս Մկրտչին է ընդունում անապատական. Հեսսեանք և Ռաքաբիմեանք մի մի աղանդաւորներ էին, Հեսսեանք այս առաւելութեամբ՝ որ կարող են վանական կեանքի նախագաղափարը համարուել իրանց յատկորոշ կանոններով։ Հեսսեանց մասին առանձին գլուխ է նուիրել Փիլոն Հեբրայեցին (տպ. Վենետ. 1892)։

Սուրբ Գրքի երկու նշանաւոր անապատականների օրինակին հետևողներ չեն պակասում քրիստոնեայ եկեղեցու մէջ նրա կազմակերպուելու հենց առաջին օրերին։ Եղիայի և Յովհաննէս Մկրտչի խստակրօն կեանքը չէր կարող հրապուրիչ չլինել նորադարձ քրիստոնեաների համար, որոնք նորահաւատներին յատուկ բուռն եռանդով և անձնուրացութեամբ ջանք էին անում իրանց նոր հաւատի սկզբունքները կատարել տառացի կերպով, մոլեռանդութեամբ ու չափազանցօրէն։

Ճգնաւորական և անապատական կեանքը որոշ կերպարանք ստացաւ երրորդ դարում։ Միայնակեացներն ու անապատականները իրանց նախագաղափար Եղիա մարգարէի ու Յովհաննէս Մկրտչի պէս հագնում էին մազեղէն

խարաղն ու մաշկեղէն. ուտում էին շատ չափաւոր, այնքան, որ քաղցածութիւնից չը մեռնէին։ Քրիստոնեայ միայնակեացների ու անապատականների նշանաբանն էր «մեռնել ըստ աշխարհի» և «մեռուցանել զմեղս ի մարմնի»։ Միայնակեաց անապատականները խոյս էին տալիս աշխարհից և նրա դայթակղութիւններից, և անապատների խաղաղ անդորրութեան մէջ նուիրւում էին խստակեցութեան։

Ջ. Ռոբերտսոնը ասում է[1]). «Երրորդ դարի ընթացքում կազմւում էին մարդկանց ամբողջ խմբակցութիւններ, որոնց ցանկութիւնն էր միասին ապրել և կառավարուել միասին կրօնաւորական մի կանոնով։ Նրանցից ոմանք միաբանական կեանքը չափազանց հաճոյալից և կենցաղական համարելով բոլորովին մեկուսանում էին. և երրորդ դարում այդ տեսակ միայնակեացները մարդաբնակ վայրերից աւելի ևս խուսափում էին, որ իրանց թագեն ամենավայրի և անմերձենալի անապատներում»։

«Խստակրօն միայնակեացների նախասկիզբն պէտք է համարել Պաւղոս Թեբայիդացուն կամ Աղէքսանդրացուն։ Դեկոս կայսրի հալածանքի ժամանակ, երբ քրիստոնեաները իրանց հաւատը փորձութեան ենթարկելուց և իրանց անձը մահից ազատելու համար առանձնանում էին ծածուկ տեղեր, Պաւղոս Թեբայիդացին էլ իբրև մեկը այդ քրիստոնեաներից առանձնացաւ. և անմերձենալի քարայրի մէջ անյայտանալով՝ առաջին միայնակեաց ճգնաւորը դարձաւ»։

Ս. Պօղոս առաքեալը առ Կողոսացիս թղթի մէջ (գլ. Գ. 1—5) ամեն մի հաւատացեալի ասում էր. «Եթէ Քրիստոսի հետ յարութիւն առաք, ուրեմն վերինը որոնեցէք, ուր Քրիստոս նստած է Աստուծոյ աջ կողմը։ Վերինը խորհեցէք և ոչ այն, որ այս երկրի վրայ է։ Որովհետև մեռաք, ձեր կեանքն էլ Քրիստոսի հետ Աստուծոյ մէջ է ծածկուած։ Երբ որ ձեր կեանքն եղող Քրիստոսը յայտնուի, դուք էլ Նրա հետ կը յայտնուէք փառքով»։

Եւ հաւատացեալներից աւելի ջերմեռանդները

1) Истор. Христ. церк. հատ. I. եր. 163։

հետևելով այս ձայնին անապատ էին քաշվում Քրիստոսի հետ իրանց կեանքը Աստուծոյ մէջ ծածկելով, որ Քրիստոսի հետ էլ յայտնուեն փառքով։

Դեկոսի հալածանքը եղաւ նրա թագաւորութեան վերջին տարին, 251 թուին. ուրեմն Պաւղոսը առանձնացաւ 251 թուին։ Պաւղոսը իւր անապատում Եղիայից և Յովհաննէս Մկրտչից աւելի խստակեաց էր. բայց չունէր նրանց առաւելութիւնը, որ էր աներկիւղ համարձակութեամբ մարդկանց ուղղութիւն քարոզել և աշխարհի անիրաւութիւնների ու անօրէնութիւնների դէմ կռուել։

Պաւղոս բոլորովին մերկացած՝ ճգնում էր անյայտութեան մէջ մի ապառաժ լերան քարայրում, որի փոքրիկ դռնակը փակում էր մի քարով։ Այրի մէջ մի բարեհամ և յստակ աղբիւր յաղեցնում էր նրա ծարաւը. այրի մօտ եղած արմաւենիներն էլ մատակարարում էին նրան սնունդ ու հագուստ։ Նրա ճգնութեան վերջին վաթսուն տարին օրական մի կտոր հաց էլ հասցնում էր նրան մի ագռաւ, ճիշդ այնպէս, ինչպէս Եղիա մարգարէին Քոռաթի հեղեղատի առանձնութեան մէջ։

Պաւղոսի վարքը գրողը [1]) սկսում է նրա վարքագրութիւնը պարզելով տարակուսութիւնը, թէ ո՞վ է ամենից առաջ բնակուել անապատում։ Նա ասում է որ «ոմանք յիշելով Եղիային ու Յովհաննէս Մկրտչին, սրանց են համարում անապատական վարքի սկիզբն։ Սակայն Եղիան մեծ է միայնակեացներից, իսկ Յովհաննէսը նախ քան իւր ծնունդը մարգարէացաւ։ Ուրիշներն էլ վիճում են, որ Անտոնն է եղել անապատական ուխտի առաջնորդը...բայց նա ոչ թէ ամենից առաջինն է, այլ թէ, նրանով շատերը հրապուրուեցին դէպի անապատական կեանքը։ Նոյն իսկ երանելի Անտոնի Ամատաս ու Մակարիոս աշակերտները ասում ու պնդում են, թէ անապատական վարքի սկիզբն

1) Վարք Սրբոց հարանց և քաղաքավարութիւնք նոցին, ըստ կրկին թարգմանութեան նախնեաց, հատոր առաջին. ի Վենետիկ. ի տպարանի Սրբոյն Ղազարու յամի 1855, եր. 1—2։

ու առաջնորդը եղել է Թեբայիդացի սուն Պաւղոս, և մենք էլ այս բանի մէջ հաստատուած ենք»։—Այսպէս ուրեմն, ըստ եկեղեցական աւանդութեան էլ քրիստոնեայ անապատական վարքի սկիզբն ու առաջնորդը եղել է սուն Պաւղոս Թեբայիդացի։

Զ. Բոլերտասնի ասելով [1]) Պաւղոսը անապատ քաշուեց 23 տարեկան հասակում. անյայտութեան մէջ ճգնեց 107 տարի և վախճանուեց 130 տարեկան, «առանց վայելելու իւր ժամանակին որ և է փառք կամ հռչակ»։ Պաւղոսի թաղումն եղաւ Անտոն անապատականը, որ և իբրև ժառանգ տացաւ նրա արմաւենու թելերից չինուած զգեստը և նրա վարքը աւանդեց իւր աշակերտներին։ Պաւղոսի վարքը գրեց Հերոնիմոսը, անուանելով նրան առաջին քրիստոնեայ ճգնաւոր։ Զ. Բոլերտասնը տարակուսելի է համարում այդ և ծանոթութեան մէջ ասում է [2]). «Սակայն տարակուսելի է, արդեօք Պաւղոսն էր, որ քրիստոնեաների մէջ մուծեց միայնակեցական և կրօնաւորական կեանքը»։ Մեզ այնպէս է թւում, որ Բոլերտասնը կարծում է թէ միայնակեցութեան ներմուծումն Պաւղոսից աւելի վաղ է եղել, և այդպէս էլ է։ Հակառակ դէպքում նա ինքն հակասած կը լինէր իրան. նա գրելով թէ «երրորդ դարի ընթացքում կազմուած էին մարդկանց ամբողջ խմբակցութիւններ,...» ինչպէս վերը տեսանք, չի կարող Պաւղոսին համարել միայնակեացների նախատիպը։ Պաւղոսը, ըստ իս, անապատականների մէջ իւր խստակրօնութեամբն է առաջին միայնակեացը, ինչպէս և Անտոնը իւր հետևողներով։ Ս. Գրքի անապատականները միայնակեաց չէին. Եղիան ունէր իւր աշակերտն ու ընկերակիցը—Եղիսէն (Դ. թագ. Ա. Բ.), Յովհաննէս Մկրտիչը նոյնպէս աշակերտներ ունէր (Մատթ. Թ.Ա. Ղուկ. Է. 18—34)։ Անշուշտ, սրանց հետևողներն էլ կունենային իրանց աշակերտները. միայնակեաց չէին լինի։

Զ. Բոլերտասնի հաշիւը Պաւղոսի կեանքի մասին չէ

1) Ист. Христ. церк. հատ. I. եր. 294։
2) Նոյն. հատ. I. եր. 88. ծանոթ. 4։

համապատասխանում իրականութեան։ Նրա հաշիվով Պաւղոսը 251 թուին 23 տարեկան էր երբ քաշուեց անապատ. և ապրեց 130 տարի. այս հաշիվով Պաւղոսի ծնունդը դալիս է 228 թուին, ապրեց 130 տարի, ուրեմն վախճանուեց 358 թուին։ Անտոն անապատականի համարնոյն Բոլերտսոնը դրում է. «Նրա (Պաւղոսի) առանձնանալու տարին, 251 թուին քրիստոնեայ ծնողներից ծնուեց Թեբայիդի գիւղերից մէկում—Կոմում—աւելի հռչակ ունեցող Անտոնը [1]) ... «որը ապրեց 105 տարի և 356 թուին, Աթանասի անապատականների մէջ ապաստանարան որոնելուց մի քանի օր առաջ, վախճանուեց»[2])։—Արդ, 356 թուին վախճանուած Անտոնը կարող էր իրանից երկու տարի յետոյ (358 թուին) վախճանող Պաւղոսին թաղել, ի հարկէ ոչ։

Հայերէն աղբիւրները [3]) լուծում են այս տարակուսանքը յայտնելով, թէ Պաւղոս որ «ուսեալ էր զհելլենական և զեգիպտական դպրութիւն», Դեկոսի հալածանքի տարին (251 թ.) 16 տարեկան քաշուեց անապատ։ Այս հաշիվով ուրեմն ծնուել է Պաւղոսը 235 թուին. ապրել է 113 տարի, ուրեմն վախճանուել է 348 թուին, այսինքն, Անտոնից 8 տարի առաջ։

Պաւղոսը իւր 97 ամեայ ճգնութեան մէջ աշխարհից բոլորովին կտրուած էր։ Նա որպէս իսկական միայնակեաց՝ աշակերտ և բնակակից չունէր։ Նրա գոյութիւնը հրաշքով յայտնուեց Անտոնին, որ մեծ դժուարութեամբ նրա քարայրը գտնելով, փոքրիկ դուռը փակուած գտաւ։ Պաւղոսը չէր կամենում ընդունել մինչև անգամ, իբրև ճգնաւոր մեծ հռչակ ստացած, Անտոնին էլ, որը թախանձելով բաղխում էր նրա դուռն ու ասում. «Ես գիտեմ, զի ոչ եմ արժանի տեսլեան քո. բայց եթէ ոչ տեսցես, ոչ երթայց ասի։ Զգաղանս ընդունիս, զմարդ զիմբդ ոչ տեսանես»։ Պաւղոսը

1) Ист. Христ. церк. հատ. I. եր. 294—5։

2) Նոյնը եր. 297—98։

3) Յայսմաւուրք Դեկտեմբեր ա. և Տրէի գ. կից՝ «տօն է Նաւումայ մարգարէին». Վարք հարանց եր. 1—16։

մեծ դժուարութեամբ Անտոնին ընդունելուց յետոյ, 97 տարի բոլորովին կտրուած լինելով աշխարհից, անտեղեակ անցած դարձածներին, հարցնում է, «զիարդ կան ազգք մարդկան և որպէս են թագաւորք երկրի» (Յայտնութիւնք)։ —Դեկոսի հալածանքի ժամանակ, 251 թուին, Պաւղոսը հեռացած լինելով աշխարհից՝ նա 348 թուին չը դիտէր թէ մարդիկ քրիստոնեայ են դարձել, քրիստոնէութիւնը համաշխարհային կրօն է, և թագաւորք երկրի իբրև քրիստոնեայ՝ քրիստոնէութեան պաշտպան են, միայն եկեղեցին վրդովուած էր ներքին երկպառակութեամբ հերձուածների ու հերետիկոսների պատճառով։

Մեծ Սոկրատը Պաւղոսի մասին ոչինչ չէ գրում, իսկ Փոքր Սոկրատը Ամմոնի պատմութիւնը անելիս՝ փակագծի մէջ ասում է. «որ (անապատաւորք) թերևս նախակիզբն առեալ ի Պաւղոսէ և յԱնտոնէ, որոց և պատմութիւնք իւրեանց բացատրեն, զոր երանելին Աթանաս ճառէ» [1])։

Ս. Պաւղոս միայնակեցի յիշատակը տօնում է մեր ս. եկեղեցին Դեկտեմբերի սկզբներին՝ «Սրբոց Հարցն Եգիպտացւոց» տօնին։ Շարական երգւում է ս. Անտոն անապատականի կանոնը։

Դէորդ—Մօր'ց Էրէրս գերմանացի եգիպտաբանը Homo Sum—Մարդ եմ—վերնագրով մի վէպի մէջ նկարագրում է ճգնաւորական կեանքը ոկսելով այսպէս. «Մենք մեր ընթերցողներին տանում ենք չորրորդ դարի երեսնական թուականների սկիզբները Փրկչի ծննդից յետոյ, դէպի Սինայի լեռը, որի նուիրական հողի վերայ մի քանի տարուց վեր առանձին առանձին բնակութիւն են հաստատել աշխարհից ձանձրացած, ապաշխարութեան նուիրուած անապատականներ, դեռ առանց կարգ ու կանոնի, առանց կապակցութեան միմեանց հետ» (թարգմ. Ստ.Մալխասեանց, Թիֆլիս 1898)։ Վէպի հերոսն է Պաւղոսը, երիտասարդու-

1) Սոկրատայ Աքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն.. աշխատասիրութեամբ Մեսրոպ վարդապետի Տէր Մովսիսեան, միաբանի Ս. Էջմիածնի Վաղարշապատ 1897։ Մեծ Սոկր. եր. 328։ Փոքր Սոկր. եր. 65։

թեան ժամանակ լաւ կրթութիւն ստացած, Աղեքսանդրիայի կրթուած երիտասարդութեան ծաղիկը։ Պաւղոսը հանդիսացրած է ճգնաւորների ամենալաւ տիպ. նրա մէջ մարմնացած են անկեղծաւոր աստուածպաշտութիւնը, կարօտեալներին օգնելու անձնուիրութիւնը և ընկերի փոխարէն անարդուելու, տանջուելու ու հալածուելու անձնուրացութիւնը։

Պաւղոսը իսկապէս միայնակեաց ճգնաւորի ամենահամակրելի տիպ է։ Հեռի է նա ցուցամոլութիւնից և բոլորովին նուիրուած Աստուծուն։ Աշխարհը նրա համար գոյութիւն չունէր։ Նա, ճշմարիտ է, մարդկանց ուղղութեան համար, ըստ եկեղեցական աւանդութեան, բան չէ արել, բայց և չէ շահագործել դիւրահաւան ժողովրդի հաւատը։ Պաւղոսից յետոյ անապատականների մէջ երկրորդ տեղը բռնում է Անտոն անապատականը, որ աւելի հռչակ ունէր, որովհետև բոլորովին կարուած չէր աշխարհից։ Նա, Պաւղոսի պէս խստակրօն ճգնութեամբ ընակուելով անապատում, Եղիայի ու Յովհաննէս Մկրտչի նման աշակերտ ու հետևողներ ունէր. և հարկաւոր դէպքում անապատի խորքից իւր աղդարար ձայնը լսեցնում էր աշխարհում։

Անտոնը [1]) դեռ տղայ հասակից մտախոհ էր և կրօնական ընաւորութիւն էր ցոյց տալիս. նա միայն իւր մայրենի կոպտական կամ եգիպտական լեզուով կարդալ գրել սովորեց. յունարէնի այբ-բենն էլ չէր ճանաչում և՝ յունարէն չը գիտէր խօսել։ Դեռ 20 տարեկան չը կար, որ ծնողները մեռան և բուսական նշանաւոր ժառանգութիւն ստացաւ։ Մակայն եկեղեցում միանգամ երիտասարդ հարուստի մասին աւետարանի ընթերցումները լսելով՝ իւր հողերը բաժանեց համադիւղացիներին, գոյքն ու կայքը ծախեց, դուսարի մի փոքր մասը տալով քրոջը նրա ապրուստի համար, մնացածը բաժանեց աղքատներին և հեռացաւ սկզբում՝ մօ-

1. Զ. Ռօբերտսոն Ист. Христ. Церк. հատ I. եր. 294—300։ Վարք հարանց եր. 17—80։ Լիակատար վարք Սրբոց հատ. II. եր. 57—102։ Յայսմաւուրք Յունվ. ԺԷ. և Արաց Ժ. «վարք և հանդիսամեծ հօրն ամենայն հարանց»...։

մոտաւոր անապատ ճգնաւորական կեանք վարելու։ Նա այցելում էր հռչակ ունեցող ճգնաւորներին և իւրացնում նրանց առանձնայատուկ առաքինութիւնները,

Անտոնը 275—305 թիւը, 30 տարի բոլորովին անյայտ մնաց Կարմիր ծովի ափին մի աւերակ ամրոցում իւր դագաղի մէջ։ 305 թուին սկսեց արդէն աշակերտներ ընդունել։ 312 թուին Մաքսիմինի հալածանքի ժամանակ շտապեց Ալէքսանդրիա հալածուած քրիստոնեաներին սիրտ տալու, կարօտեալներին օգնելու և թերևս մարտիրոսական պսակին արժանանալու, բայց նրա վերջին ցանկութիւնը չը կատարուեց և նա աւելի ևս հեռաւոր անապատ քաշուեց։ Առանձնացաւ մի բարձր սարի լանջին մի այրի մէջ, որի մօտ կային մի պաղ և վճիտ աղբիւր և մի քանի արմաւենիներ։ Եւ որպէս զի ուրիշների վաստակով չապրի ու միևնոյն ժամանակ էլ թէ զբաղմունք ունենայ և թէ իրան այցելողներին կերակրել կարողանայ՝ մի փոքրիկ տաբատաթեան վրայ ցորեան ու կանաչեղէն էր ցանում ու մշակում։ «Անապատի գազանները աղբիւրից ջուր խմելու գալով՝ փչացնում էին նրա ցանքը, ուստի մի անգամ բռնեց մէկին և գուրգուրալով ասաց. երբ ես ձեզ նեղութիւն չեմ տալիս, դուք ինձ ինչու՞ էք վնասում։ Հեռացէք, և, ի սէր Աստուծոյ, այլևս մի գաք[1]»։

Անտոնը որքան հեռանում էր աշխարհից, աշխարհը այնքան ջերմեռանդութեամբ հետևում էր նրան։ Անտոնը անապատականների այն լաւագոյն տիպերից էր, որոնք իրանց հոգու փրկութիւնը հոգալով՝ ուրիշներին անտես չեն անում։ Նա բազմաթիւ հետևողներ ու աշակերտներ ունէր։ Հաշտեցնում էր թշնամիներին, միխիթարում էր վշտացածներին, կրօնական խնդիրներում ներգործական դեր էր կատարում և խորհուրդներ տալիս. տկարների իրաւունքները պաշտպանելու համար միջնորդութիւն էր անում հզօրների և դատաւորների առաջ։ Հարստահարուածները Անտոնի միջնորդութեան էին դիմում և նրա

1. Ջ. Բոբերտսոն Ист. Христ. Церк. հատ. I եր. 296։

միջնորդութիւնը զուր չէր անցնում։ Ամեն անգամ, երբ այսպիսի մի դործ հարկադրում էր նրան հեռանալ իւր ճդնարանից, վերադառնալիս առաջին խօսքը լինում էր. «կրօնաւորը առանց մենակութեան այնպէս է՝ ինչպէս ձուկը առանց ջրի»։ Նմանօրինակ մի առած էլ ունի հայ կրօնաւորութիւնը, «վանք՝ վարդապետի կեանք»։ Անտոնի համբաւը տարածուած էր աշխարհէ աշխարհ։

Կոստանդին մեծն ու իւր որդիքը թուղթ դրեցին Անտոնին խնդրելով՝ որ գնայ արքունիք։ Բայց Անտոնը չը հրապուրուեց, և իւր աշակերտներին ասաց. «մի զարմանաք, որ կայսրը մեզ գիր է ուղարկում. նա էլ մեր պէս մարդ է։ Այն բանին զարմացէք, որ Աստուած մարդկանց համար դրելով իւր օրէնքը՝ աւանդեց մեզ իւր Որդու ձեռքով»։

Ցայսմաւուրքին [1]) համեմատ Անտոնը մերժեց Կոստանդին մեծի հրաւէրը ասելով իւր աշակերտներին. «եթէ երթամ, լինեմ Տէր Անտոն, և եթէ չերթամ, ես լցեմ աբեղայ Անտոն։ Վայ մարդոյն, որոյ անունն մեծ է քան զգործն»։ Եւ յիրաւի, Անտոնը չը դնաց կայսրի մօտ, փոքր անունով բայց մեծ դործով՝ մեծ հանդիսացաւ ու այդպիսի փառքով էլ վախճանուեց, ինչպէս ասացինք, 105 տարեկան, 356 թուին, այն ժամանակ, երբ Աթանասը ապաստան էր որոնում անապատի կրօնաւորների մէջ։ Անտոնի մահը անապատականները ողբացին հետևեալ արտայայտութեամբ։ «Մեծ բարեխօս կորոյս աշխարհս և մեծ մարդ ընկալան երկինք։ Եգիտ վերինն, զոր խնդրէր և կորոյս ներքինս, զոր ունէր [2])»։

Ս. Անտոն Անապատականի յիշատակը տօնում է եկեղեցին Յունվար ամսին։ Եւ Անտոնին նուիրուած շարականի [3]) մէջ կոչուած է նա «նախասկիզբն միանձանց».

Արիոսական վէճերի ժամանակ Ս. Անտոնն ու իւր

1. Ցայսմաւուրք, Յունվար ԺԷ. և Արաց Ժ.

2. Վարք հարանց հատ. ա. եր. 81։ Թուղթ Սերապիոնի առ Մակար և Ամատաս։

3. Կանոն Անտոնի անապատականի, ԺԵ.

հետևողները ուղղափառության տոկուն և հզոր պաշտպանները դարձան։ Արքան և խստակրոն լինելը Անտոնը, այնուամենայնիւ հեռի էր այն ծայրահեղութիւններից, որ ունէին նրա հետևողները։ Նա լաւ էր հասկացել թէ ինչ վտանգ են սպառնում անապատական կեանքին, ուստի և եւանդով զգուշացնում էր անապատականներին, որ իրանց բոլոր յոյսերը չդնեն կրօնաւորական արտաքին ձևերի վրայ։

Ոչ Պաւղոս միայնակեացը և ոչ էլ Անտոն անապատականը՝ իրանց հետևողների համար որոշ կանոն և հանրակեցարան կամ միաբանական ուխտ չըհաստատեցին. անապատականները ապրում էին ցաք ու ցրիւ առանց որոշ ուղղութեան և դարձում էին ու ապրում ով ինչպէս կամենում էր, կանոն ընդունելով խստակրօնութիւնը, մըշտամուն աղօթքն ու պահեցողութիւնը։

Եուսիկ Եպս.

(Կը շարունակուի)

ԿՐՕՆԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

(Ջեմս Բրայս).

Այն, ինչը որ կարելի է կոչել ամենօրեայ կրօնական կեանքն ու սովորութիւն, որոշ չափով տարբերւում է Անգլիայի և Շոտլանդիայի կրօնական սովորութիւններից, տարբերութիւններ, որոնց նկատելը դիւրին է, բայց բնորոշելն ու նկարագրելը դժուար։

Կրօնական ինդիրների մասին խօսելիս Միացեալ Նահանգներում պայմանական պահանջներ կամ արգելքներն աւելի սակաւ են և աւելի աննշան է եկեղեցու ձևական տարբերութիւնը աշխարհական սֆերայից, աւելի թոյլ տրամադրութիւն կայ հոգևորականներին առանձին (կաստա) դասակարգ համարելու և նրանից այն պահանջներն

անելու, ինչ որ աշխարհականներից չի պահանջուում։ Սրբազան համարուած բաներին ձեռք չը տալու ջանքը և նոյն իսկ սրբազան իրերին առանձին ուշադրութեամբ վերաբերուելու դիտակցութիւնը աւելի պակաս չափով է աչքի ընկնում։ Ժողովրդից սիրուած որ և է եկեղեցու ունեցած բաղկաթոռի տիրանալու իրաւանց հրապարակական ամբդամբսութեամբ վաճառելը, թէ և ինչպէս կարծում եմ, հաղուադէպ է, բայց Միացեալ Նահանգներում այնպիսի պարսաւանքի չի հանդիպում, ինչպէս Եւրոպայում։ Մի քանի նորաձև եկեղեցիներում կան գահաւորակներ, դորգեր և սալոնների ուրիշ պարագայք։ Այդտեղ սովորաբար երգում է եկեղեցական վարժ խումբը, իսկ ծխականներն այդ խմբերին միացնում են և իրենց ձայնը, ենթադրելով, որ այդ ձևով չեն արդելիլ հոգևոր երգերի կանոնաւոր երգեցողութիւնը։ Եկեղեցական կեանքի սոցիալական կողմն Ամերիկայի Միացեալ Նահանգներում աւելի է զարգացած, քան բողոքական Եւրոպայում։ Համախմբումները՝—մանաւանդ մեթոդիստների, բապտիստների և կոնգրեգացիոնալիստների (միութենականների), ծառայում են գրականական, կրօնական, մարդասիրական և նոյն իսկ ժամանակ անցնելու համար. որոնք ոչ միայն խրախուսում են բարեգործութիւն այլ և միևնոյն ժամանակ մերձեցումն են առաջ բերում հարուստների և աղքատների մէջ. երիտասարդ մարդկանց հնարաւորութիւն են տալիս ժամանակն արդիւնաւոր կերպով անցկացնելու հաճելի հասարակութեան մէջ՝ այդ ձևով յետ պահելով նրանց վատ հակումներից։ Ամսական մի անգամ լինում է երեկոյթ, ուր հաւաքւում են առանց որ և է ձևականութեան՝ ամեն հասակի և ամեն դասակարգի մարդիկ [1])։ Կրօնը Ամերիկայի Միացեալ Նահանգներում

1) Նոյն իսկ չի արգելւում սարքել պարերեկոյթներ, սակայն ոչ բոլոր կոնգրեգացիաների կողմից։ Մի քանի տարի սրանից առաջ բողոքական կոնգրեգացիան արևմտեան քաղաքներից մէկում նշանակեց «ընդունելութեան օր» նոր եկեղեցական շինութեան բացման առթիւ. չէ՞ որ հարուստ եկեղեցինե-

աւելի լաւ և համերաշխ է դնում երիտասարդութեան շահերի հետ և վերջին քառասուն տարիների ընթացքում աւելի մեզմ է իւր պահանջների մէջ՝ քան թէ Անգլիայում, կամ առնուազն անգլիական նոնկոնֆորմիստների, կամ շօտլանդական եկեղեցիների մէջ։ Ամերիկական եկեղեցիների առանձնայատուկ և օրիգինալ կողմն է կազմում այն ձգտումն, որն արտայայտւում է նրանցից մի քանիսի և մանաւանդ մէթոդիստների եկեղեցիների մէջ դէպի հոգևոր վերածնութիւն։ Ամերիկայում վաղուց արմատացել և սովորութիւն է դարձել կրօնական զգացմունքներն արտայայտելու հրապարակական տաք ցոյցեր կազմակերպելն ու կրակոտ քարոզներ տալը։ Այնտեղ յաճախ բաց երկնքի տակ, ծովի ափին կամ անտառում կազմակերպւում են համախմբումներ՝ քարոզներ կարդալու, որոնք առաւօտուանից մինչև երեկոյ չեն ընդհատւում, իսկ այդ համախմբումների մասին շրջող պատմութիւնները թէև միշտ նրանց օգտին չեն խօսում, բայց և այնպէս միաձայն վկայում են, որ նրանք մեծ տպաւորութիւն են թողնում հաւաքուած հասարակ ժողովրդի վրայ, թէև այդ տպաւորութիւնը լինում է անցողական։ Արևմուտքում այդպիսի համախմբումներն այն օգուտն են ունեցել, որ նպաստել են աւետարանական վարդապետութեան տարածման այն շրջաններում, որտեղ դեռ քիչ եկեղեցիներ կային։ Արևելքում և Հարաւում այդպիսի համախմբումներ կազմակերպւում են ժողովրդի հասարակ մասի և մանաւանդ աւելի յաճախ նեգրների մէջ։ Ամերիկացիք անգլիացիներից և շօտլանդացիներից աւելի են սիրում կրօնական հանդէսներ և կրօնական զգացմունքներ արտայայտելու համար ոչ ոքից և ոչնչից չեն քաշւում։ 1870 թուին ես

ինչ իւրաքանչիւրին կից առանձին շինութիւն կայ սալօնների ամբողջ շարքով. այն ժամանակ արևելեան եպիսկոպոսական—բողոքական եկեղեցիներից մինի կողմից եկած (sexton) ժամհարը, դիտելով ընդարձակ դահլիճը, բացականչեց. «Ախոռ, որ դուք եպիսկոպոսական չէք. այլապէս դուք այս դահլիճում ինչոյք կը սարքէք։

գտնում էի այն բազմաթիւ դեղեցիկ շոգենաւերից մինի ճանապարհորդների շարքերում, որոնք երթևեկում են Նիւ-Իորկի և Ֆոլլ-Ռիվերի մէջ։ Նիւ-Իորկում հրաւիրուած էր ունիթառների համաժողովը և այդ նպատակով մի խումբ ունիթառներ Նոր Անգլիայից գնում էին այնտեղ։ Պէտք է նկատել, որ նոր Անգլիայի ունիթառները միւս ամերիկացիներից աւելի ծանրաբարոյ և չափաւոր են իրենց սովորութիւնների մէջ և միւսների պէս տրամադիր չեն իրենց կրօնական համոզմունքների արտայայտութեանը ցոյցի կերպարանք տալու։ Բայց և այնպէս այդ խումբը տեղաւորուեց շոգենաւի ընդարձակ դահլիճում՝ դաշնամուրի առաջ և համարեա ամբողջ երկու ժամ երգում էր օրհնութիւններ։ Միւս ճանապարհորդներից շատերը միացան այդ խմբին, իսկ մնացածներն համակրանքով էին վերաբերուում երգողներին։ Իմ ճանապարհորդակից անգլիացիները սկզբում կարծում էին, որ երգողները պատկանում են մէթոդիստների որ և է խմբակցութեան, բայց երևաց, որ նրանք ունիթառներ էին։

Ամերիկան այցելող եւրոպացիք մի բանում շատ էին չափազանցացնում Եւրոպայի ցամաքային տէրութիւնների և Միացեալ Նահանգների տարբերութեանը։ Նրանք պնդում էին, որ Միացեալ Նահանգներում աւելի յաճախ են երևան գալիս տարօրինակ աղանդներ և կրօնական այլանդակ վարդապետութիւններն այնտեղ իրաք գոյութիւն ունին, բայց նրանք ամերիկացիների կեանքում երբէք աւելի մեծ դեր չեն խաղում, քան նոյնանման աղանդներն Անգլիայում և Գերմանիայում և աւելի պակաս՝ քան աղանդաւորները՝—Ռուսաստանում։ Մորմոնները ամբողջ աշխարհի ուշադրութիւնը նրա համար դարձրին իրենց վրայ, որովհետև փորձեցին կրօնական հասարակապետութեան նման մի բան հիմնել և վերահաստատեցին այն հին սովորութիւնը, որը դատապարտւում է բարոյականութեան մասին գոյութիւն ունեցող ժամանակակից հասկացողութեամբ։ Բայց մորմոնների կրօնական համայնքն իրեն հետևողներ է գտնում գլխա-

ուրապէս Եւրոպայից դաղթողների մէջ. Աղի լճի քաղաքում ամերիկացիք շատ քիչ են և եղածներն էլ պատկանում են հարաւային ազգաբնակութեան խեղճ մասին[1]։ Կվակերները հեռաբրքիր և լաւ կազմակերպուած համայնք են կազմում, բայց շատ սակաւաթիւ են, իսկ միւս կոմունիստիքական (անպայման հաւասարութիւն և անձնական սեփականութիւն չընդունող) կրօնական ընկերակցութեանց մասին Եւրոպայում շատ աւելի յաճախ ենք լսում, քան թէ Ամերիկայում։ Երբեմն այստեղ և երբեմն այնտեղ երևան է գալիս փոքրաթիւ հետևողներ ունեցող որ և է աղանդ և մի քանի տարուց յետոյ անյայտանում է[2]։ բայց այնպիսի երկրում, ուր ազգաբնակութիւնը դիւրութեամբ յափշտակում է կրօնական հանդէսներով և տրամադիր է դէպի ամեն տեսակ փորձութիւններ, ճանապարհորդն աւելի զարմանում է, որ այդ ազգաբնակութիւնը մինչև յայսօր հին ձևերին է հետևում։

Բոլոր ասածներից երևում է, որ քրիստոնէութիւնը Միացեալ Նահանգներում պահպանել է իւր հեղինակութիւնն ու արժանաւորութիւնը, որ նա ամբողջ երկրում կառուցանում է եկեղեցիներ և իւր հետևողներից հաւա-

1) Հարաւային Նահանգներից մի քանիսում պատիժներ են նշանակուած մորմոնականութիւն քարոզելու համար։

2) Վաշինգտոնի Նահանգում Վալլա-Վալլայից ոչ հեռու ես ծանօթացայ մի վալիսցու հետ, որը հանում էր մոլեգնութեան, արտասանում էր խորհրդաւոր խօսքեր և այդ յայտարարում որպէս Աստուածային յայտնութիւն։ Նա երկու զաւակ ունէր, որոնցից մինը Նրա կարծիքով Քրիստոսի մարմնացումն էր, իսկ միւսը Յովհաննէս Մկրտչի։ Նա կարողացաւ յիսուն հետևող գտնել և նրանցից աշխատում էր առանձին համայնք կազմել, որտեղ ամեն ինչ համարուէր ընդհանրութեան սեփականութիւն, բայց զրկուեց երկու զաւակներից էլ, իսկ 1881 թուին բոլոր աշակերտները թողին նրան։ Հաւանականաբար այդպիսի երևոյթները հաղուագէպ չեն. արևմտեան մասի սահմանագծերի ազգաբնակութեան և Եւրոպայից գաղթածների մէջ նախապաշարմունքը շատ ուժեղ է։ Զէ՞ որ այդ մարդիկն ապրում են ամենավեհ և դեղեցիկ ընութեան ծոցում։

քում ահագին եկամուտներ։ Սակայն կարելի է կարծել, որ արտաքին ազդեցութիւնը հիմնուած է հին սովորութիւնների վրայ և չի միանում մարդկային հոգիների վրայ իշխելու դաղափարի հետ։ Օգոստոս կայսրի ժամանակ հռովմէական կայսրութիւնը մի ծայրից մինչև միւսը լի էր հրաշալի տաճարներով, որոնք շինուած էին ի պատիւ բազմաթիւ աստուածների. հոգևորականութիւնը բազմաթիւ էր, հարուստ և օգտուում էր պետական հովանաւորութեամբ։ Կրօնական հանդէսներն աչքի էին ընկնում նախկին շուքով, իսկ զոհաբերութիւնը գրաւում էր ոգևորուած երկրպագուների ահագին խմբեր։ Բայց հին կրօններն այլ ևս ազդեցութիւն չունէին ոչ կրթուած դասի հաւատալիքների վրայ և ոչ էլ ազդաբնակութեան բոլոր դասակարգերի խղճի վրայ։ Այդ պատճառով եթէ մենք ցանկանում ենք գիտենալ, թէ ինչ տեղ է բռնում քրիստոնէութիւնը Միացեալ Նահանգներում և ինչ չափով է նպաստում հառաջակայութեան հաստատութեան, մենք պէտք է քննենք, թէ ինչ չափով է նա զուկավար հանդիսանում ամերիկացւոց կեանքի և ազդում նրանց մտքերի վրայ։

Այդպիսի քննութիւնը պէտք է ունենայ երկու նպատակ։ Նա մեզ պէտք է պարզի, թէ ինչ նշանակութիւն ունի քրիստոնէական կրօնը Ամերիկայի ժողովրդի վարք ու բարքի՝ բարոյական օրէնքների վրայ, և ինչ ձևով է այդ ժողովուրդը համակերպւում այդ ազդեցութեանը։ Երկրորդ. նա մեզ պէտք է պարզի, թէ քրիստոնէական կրօնը ինչ չափով է բորբոքում ժողովրդի երևակայութիւնը, ոչնչացնում նրա առօրեայ կեանքի վատ կողմերը և լուսաւորում նրա հոգին ճշմարտութեան լուսով։

Բարեգործութեան մէջ Ամերիկայի Միացեալ Նահանգներից ոչ թէ ոչ մի երկիր չի գերազանցել, այլ և նրան հաւասարուել չի կարողացել։ Ոչ թէ զանազան մարդասիրական նպատակներով հաւաքուած գումարներն են խոշոր Եւրոպականից, (ի հարկէ Միացեալ Նահանգների հարստութեան հետ համեմատած), այլ և բարեգործութեան

նպատակին հասնելու ճիգերը Եւրոպացու աչքին միշտ աւելի գերազանց են, քան նրա՝ իւր հայրենիքում տեսածները։ Հնար չկայ վճռելու և որոշելու, թէ նրանք՝ այդ ճիգերը ոչքան զօրեղ կլինէին, եթէ գոյութիւն չունենային կրօնական խթանները՝ մոտիւները։ Թէև ոչ բոլորը, սակայն ես համոզուած եմ, որ հաւարեալ այդ ամենը կատարւում է կրօնական մարդկանցից և ինչպէս իրենք են հաւատացնում՝ կրօնական պատճառներով։ Այդ կրօնական պատճառներն աւելի հազուադիւտ դէպքերում ունին եղծական բնաւորութիւն՝ քան Անգլիայում, որովհետև, ինչպէս բոլոր աղանդաւորները, այնպէս էլ որոշ չափով կաթոլիկները պատրաստակամութիւն են ցոյց տալիս ընդհանուր ոյժերով բազմաթիւ մարդասիրական ձեռնարկութեանց նպաստելու յաջողութեանը։

Ինքն ըստ ինքեան պարզ է, որ բարոյական այն կանոնները, որոնցով ղեկավարւում են ամերիկացիներից շատերը, աւանդուած են քրիստոնէութիւնից և թեթեւակի միայն փոփոխուած ամերիկական կեանքի աղդեցութեան շնորհիւ, որը բողոքական Եւրոպայի կեանքից տարբեր է կազմակերպուել։ Սովորական ամերիկացին ուրիշ որևէ բարոյական կանոնների մասին ոչ մի հասկացողութիւն չունի, իսկ կրօնական վարդապետութիւնը, չընայեած որ աւելի անորոշ և պակաս դոգմատիքական (դաւանաբանական) է դարձել, ցոյսոր նրան ծառայում է որպէս միակ աղբիւր, որից նրա կարծիքով բղխում են նրա հասկացողութիւնները՝ պարտքի և աղնիւ վարք ու բարքի մասին։ Պուրիտանական (ամենախիստ Պրեսվիտերեանները) վարդապետութեան ժամանակ երբեմն աչքի էր ընկնում գիտակցական և աւելի յաճախ անգիտակցական փարիսեցիութիւն, որովհետև այն ժամանակ ամենքն էլ պուրիտանականութիւն էին դաւանում, իսկ այն կանոնները, որոնց իրագործումը պահանջւում էր ոչ միայն հասարակական կարծիքով, այլ և օրէնքով, վեր էր այն ոյժերից, որին ընդունակ է մարդկային բնութիւնը։ Անտինոմեանների [1])

1) Anti հակա, nomos-օրէնք. XVI դարու աղանդաւորները էին, որոնք երբ թէ անարգում էին բոլոր օրէնքները։

մոլորութիւնները, որպիսիք առաջ սովորաբար վերագրւում են նրանց, որոնք շատ մեծ տրամադրութիւն ունին դէպի կրօնական էմոցիան (հանդէսները)։ Բայց ներկայումս ըստ երևոյթին ամերիկացիներին առաւել սակաւ կարելի է մեղադրել փարիսեցիութեան կամ կեղծաւորութեան մէջ, քան թէ ուրիշ բոլոր ազգերին։ Նրանց առաւել շուտով կարելի է մեղադրել դրա հակառակ պակասութեան բարեսիրտ ներողամտութեան մէջ դէպի այն անբարոյական արարքները, որոնցից իրենք միշտ խորշում են ու զզվում իրենց։

Մեծ նշանակութիւն չի կարելի տալ այն փաստին, որ ամերիկացիների մէջ յանցաւորներն առաւել սակաւ են, քան օտար տեղերից եկած գաղթականների մէջ, որովհետև այդ երևոյթը բացատրւում է նրանով, որ գաղթականներն ամերիկայի ազգաբնակութեան ամենաչունևոր և ամենատգէտ մասն են։ Բայց եթէ մենք ինկատի առնենք այն գործողութիւնները, որոնք քրէական պատժի չեն ենթարկւում, այդ դէպքում մենք առաջ կբերենք այն մարդկանց ընդհանուր կարծիքը, որոնք երկար ժամանակ ապրել են՝ թէ բողոքական Եւրոպայում և թէ Ամերիկայում. այն որ՝ ինչ կըվերաբերի ճշմարտախօսութեան, ժուժկալութեան, ընտանեկան կեանքի մաքրութեան [1]), քնքշութեան դէպի մանուկները և բարեսրտութեան վարուեցողութեան միջոցին, Ամերիկայում գտնուածները բարձր են՝ թէ անգլիացիներից և թէ ամերիկացիներից [2])։

---

1) Մի քանի նահանգներում յաճախ են ամուսնալուծութիւնները, մի քանի տեղ եօթից մի ամուսնութիւնը լուծւում է, բայց այդ բարոյական անկումից չի առաջ գալիս, այլ բացատրւում է նրանով, որ օրէնքով թէ կնոջը և թէ մարդուն մեծ ազատութիւն է տրուած իրենց հաճոյքներին բաւականութիւն տալու գործում։ Ամուսնալուծութիւններն, ինչպէս ինձ պատմել են, աւելի հազուադէպ են բարձր և միջին դասակարգերի՝ քան հասարակ ժողովրդի մէջ։

2) Նոյնը չի կարելի ասել առևտրական ազնուութեան մասին։ Միացեալ Նահանգներն Անգլիայից և Գերմանիայից բարձր չեն և համարեա թէ ցածր են Ֆրանսիայից և Սկանդինաւիայից։

Այն մարդկանց մեծամասնութիւնը, որոնց կարծիքի վրայ ես մատնանիշ եմ լինում, ենթադրում է, որ կրօնական հաւատալիքները, որոնք երբեմն չեն կորցնում իւրեանց ազդեցութիւնը նրանցից հրաժարուած և ուրիշ դաւանութեան փոխուած մարդկանց բնաւորութեան վրայ, այս դէպքում մեծ ազդեցութիւն ունին և Միացեալ Նահանգներում աւելի դարձեալ այժ են կազմում, քան Անգլիայում և Գերմանիայում։

Եթէ մենք հարց տալու լինինք, թէ կրօնը ինչ աստիճանի դրդիչ ազդեցութիւն ունի մի ազգի երևակայութեան և մտածողութեան եղանակի վրայ, մենք ստիպուած կլինինք յաղթել այն դժուարութեանը, որ մենք անկարող ենք գաղափար կազմել մարդկային ցեղի այնպիսի դրութեան մասին, որն առանց կրօնական ազդեցութեան է կառավարուում։ Դեռ ոչ մի ժամանակ գոյութիւն չի ունեցել ոչ մի քաղաքակիրթ ազգ առանց կրօնի և թէև սակաւ չեն բարձր կրթութեան տէր մարդիկ, որոնք ասվում են առանց կրօնի, բայց այդ մարդիկ ըստ երևոյթին հետևանք են զգացմունքների և մտքերի այնպիսի տրամադրութեան, որի ժամանակ կրօնը ամենազօրեղ գործոն է եղել։ Ահա այս պատճառով ոչ մի հնարաւորութիւն չկայ ենթադրաբար գաղափար կազմելու, թէ մարդիկ ինչ կըդառնային, եթէ սովորէին իրենց բարձր կարգի էակներ և դադարէին հաւատալ, համարել որ իրենց սպասում է հանդերձեալ կեանքը։

Գուցէ ասողներ լինին, որ յարդանք դէպի հասարակական կարծիքը և մարդկութեան ապագայի հոգսը կը փոխարիներ այդպիսի մարդկանց համար այն, ինչ որ կրօնն էր կազմում. կամ որ այն ժամանակ մարդիկ առաւել բաղձալոր կլինէին, որովհետև կըդադարէին երևակայական սարսափներին հաւատալուց։ Կլինին նաև ասողներ, որ այդ դէպքում կեանքը շատ նեղ և չնչին կերևար, իսկ մարդկային երևակայութեան համար ոչ մի ասպարէզ չէր մնալ։ Ինչ ամերիկացիներին կըվերաբերի, շատ քիչ են նրանց պատմական այն յիշատակները, որոնք ընդունակ են գրգռելու ժողո-

վրդական երևակայութիւնը, իսկ նրանց եռանդը ծախսւում է գլխաւորապէս երկրի նիւթական միջոցներն աւելացնելու և զարգացնելու վրայ. այս պատճառով նրանց աւելի է հարկաւոր կրօնը, քան թէ ուրիշ որ և է ժողովրդին, որպէս զի ընդարձակի նրանց աշխարհայացքը և հարկադրի, որ նրանց երևակայութիւնը նիւթական հոգսերի նեղ շրջանակից փոխադրուի հոգևոր շահերի շրջանը։ Քննելով այն գրական աշխատութիւնները, որոնք սովորաբար կարդացւում են կրթուած ազարակատէրերից կամ բանւորներից, ես էլ գալիս եմ այն եզրակացութեան, որ Միացեալ Նահանգներում Աստուածաշունչը և քրիստոնէական աստուածաբանութիւնը առաւել ծանրակշիռ հիմք են կազմում ժողովրդի՝ ընութեան, մարդկային յեղի գոյութեան նպատակի վերաբերութեամբ, քան թէ բողոքական Եւրոպայում։

Իւրաքանչիւր խոհական մարդու մէջ ակամայից հարց է ծագում, թէ ինչ կը պատահէր մարդկային յեղի հետ, եթէ յանկարծ անյայտանային այն ծանրակշիռ հաւատալիքները, որոնք ցայսօր հիմք են ծառայել նրա բարոյականութեան մասին ունեցած հասկացողութիւնների։ Կրօնից սրբադրուած բարոյախօսութիւնը ցայսօր ծառայում էր որպէս հիմունք հասարակական կարգերի. իսկ եթէ բարոյականութեան անկման շնորհիւ այդ կարգը խախտուի, արդեօք սրան չի փոխարինիլ կոպիտ ոյժի տիրապետութիւնը։ Այս հարցն ըստերևոյթին Եւրոպացուն վրդովել չի կարող, որովհետև Եւրոպայի բոլոր տեղերում կայ կանոնաւոր զօրք, որը բաւականաչափ ուժեղ է կարգ պահպանելու համար, և այն պատճառով, որ այնտեղ վաղուց արմատացել է գոյութիւն ունեցող իշխանութեանց հնազանդուելու սովորութիւնը։ Բայց Ամերիկայում կառավարչական ամբողջ սիստեմը պահպանւում է ոչ թէ զինուած ոյժով, այլ թուական մեծամասնութեան կամքով, որոնք, իրենց շահերի տեսակէտից, կարող է պատահել, որ երբևիցէ կործանեն այդ կառավարութիւնը։ Այդ պատճառով երբ դուք նայում էք մարդկանց խմբերին, որոնք Ամերիկայի մեծ քաղաք-

ներում անդադար աշխատում են ապրուստի միջոցները գտնելու համար և երբ դուք իւրաքանչիւր քայլափոխում տեսնում էք մի կողմից հարստութեան և աղքատութեան խիստ հակադրութիւնները, երբ մի կողմից աճում է աղքատութիւնը, իսկ միւս կողմից զօրանում է տրամադրութիւն դէպի շռայլութիւնը, դուք ակամայից սկսում էք մտածել, թէ ինչ վիճակի մէջ կընկնին Միացեալ Նահանգներն եթէ ազգաբնակութեան աճման հետ՝ քանդուի այն հիմքը, որի վրայ կանգուն են ներկայ պետական հաստատութիւնները։ Երևակայեցէք, որ մարդիկ, որոնցից կախուած է այդ հիմնարկութիւնների ապագայ գոյութիւնը, այդ մարդիկ կորցնեն հաւատ դէպի Բարձրագոյն Էակը և հանդերձեալ կեանքը, կորցնեն իրենց պատասխանատուութեան գիտակցութիւնը՝ չնորհիւ այն համոզման, որ նրանց երկրային կեանքը կըվերջանայ յաւիտենական քնով։

Մի՞թէ այդ դէպքում կանգուն կըմնայ ներկայ բարոյական կոդէկսը և մի՞թէ նրա հետ միասին չեն անցյատանայ յարգանք դէպի օրէնք, դէպի հասարակութիւնն և ապագայ սերունդներն ունեցած պարտաւորութեանց գիտակցութիւնը։ Մի՞թէ այն ժամանակ մարդիկ չեն ղեկավարուիլ այսպիսի կանոնով. «Հոգանք միայն ուտելիքն ու խմելիքը, որովհետև կեանքը կարճ է»։ Կամ դուցէ հաստատուած կառավարութեան ձևի քաղաքացիներին խոստացող օգուտների գիտակցութիւնը կըփոխարինի կրօնից ստացուող (սանկցիան) հաստատութիւնը և կըզսպի մարդկային խմբերին բռնութիւնից, իսկ մասնաւոր մարդկանց՝ իրենց եսական հակումներին բաւականութիւն տալուց։ Պատմութիւնը դրական պատասխան չի տալիս այս հարցերին, բայց դրանից երևում է, որ մինչև ներկայ ժամանակները քաղաքակիրթ ազգերն իրենց համար յենակէտ են գտել կրօնի մէջ և ազատ կառավարութեան ձևը կրօնական ազդերի մէջ տալիս էր ամենալաւ հետևանքներ։

Միացեալ Նահանգներն անկասկած պատկանում են այդպիսի երկիրների թուին, որտեղ իւրաքանչիւր նոր միտք արագութեամբ տարածւում է ժողովրդական խա-

ւերում և որտեղ առ Բարձրագոյն Էակն ունեցած հաւատոյ խախտումը սոսկալի յեղափոխութիւն առաջ կը բերէր։ Բայց Միացեալ Նահանգներն, ըստ երևոյթին Հին Աշխարհից պակաս հաստատուն կերպով են պահպանում հին (աւանդները) կարգերը։ Մի միայն կրօնական համոզմունքն ու եռանդն էր պատճառը, որ երկու հարիւր յիսուն տարի առաջ Նոր Անգլիայում պատճառ եղաւ այն գաղութներն հիմնելու, որի կարգ ու կանոնն ապագայում մեծ չափով իւրացրեց ամբողջ ազգը։ Այն օրսանից կրօնն ու խիղճը Միացեալ Նահանգներում գործոն բարոյական ոյժ են եղել. թէև նրանք պաշտպանում էին երկիրը բարոյական և քաղաքական ցաւերից, բայց և կրիտիկական րոպէներին բաւականաչափ արիութիւն և եռանդ էին ներշնչում փոքրամասնութեան՝ կանգնեցնելու այդ ցաւերի զարգացումը, իսկ ժամանակի ընթացքումն էլ բուժելու նրանց։

Վաղուց արդէն համոզմունք է դարձել, որ միապետութիւնները պահպանւում են փառքով, իսկ հասարակապետութիւնները՝—առաքինութեամբ։ Հասարակապետութիւնների մէջ որքան աւելի են զարգանում ռամկավարական սկզբունքները, ժողովրդական մասսաներ որքան աւելի են գիտակցում իրենց ոյժը, այնքան աւելի կարևոր է, որ ժողովուրդը չըղեկավարուի միայն հայրենասիրական զգացմունքով, այլ լինի նաև բարեպաշտ (կրօնական) և անձնիշխանութեան ընդունակ. այդ պատճառով նրա բարեկեցութեան համար կարևոր են և աւելի գին ունին այն աղբիւրները, որոնցից բղխում են կրօնական զգացմունքներն և իրեն վրայ իշխելու ընդունակութիւնը։

(Շարունակելի).

Վ.Լ. ՍՈԼՈՎԵԻԼ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

II.

Այս երկրորդ յօդուածը թէև գրուած է ուրիշ առիթով, բայց այստեղ պաշտպանուող մտքերը առաջին յօդուածում յայտնածների շարունակութիւնը կարելի է համարել, ուստի լիովին հեմնաւոր է նրանց մի վերնագրի տակ տեսնելը։ Այս անգամ ևս աշխատում է պարզել, թէ ի՞նչ է ներողամտութիւնը[1]) քրիստոնէական տեսակէտից և հերքում է մի շարք խիստ ընդհանրացած սոփեստութիւններ։ Ներողամտութեան վերաբերող յօդուածների շարքում՝ ամենահիմնականն ու կարևորը այս երկրորդն է, ուստի մենք աշխատելու ենք ըստ կարելոյն լրիւ տալ նրա բովանդակութիւնը։ Յօդուածը կոչւում է «պատմական սֆինքս»։

Սլաւ ընկերութեան նախագահ պրոֆ. Բեստիւժև-Ռիւմինը իր մի ճառախօսութեան մէջ «սլաւ գաղափարի էութիւնը սահմանում է իբրև ուղղափառութիւն». իսկ յետոյ՝ ուղղափառութիւնն ընդունելով ոչ իբրև աստուածաբանական, այլ իբրև կուլտուրապատմական սկզբունք, նրա «էական որոշիչ յատկութիւնը համարում է ներողամտութիւնը և յարդանքը դէպի օտարի դաւանութիւնը»։ Այս ցուցմունքը սակայն մի նոր բան չէ. այս յատկութիւնը նշմարել են դեռ արդէն հին սլաւոնասէրները՝ Ի. Ակսակովն ու Իւ. Սամարինը։

Բայց կան ուղղափառութեան գաղափարն այլ կերպ ըմբռնողներ ևս. այս կարգի «հայրենասէրները նոյնպէս կոմնակից են միութեան (դաւանութեանց ու ազգերի), միայն՝ թաքուն մտքով»։ Օրինակ «Մոսկովսկիյա Վեդոմոստի» թերթն առաջարկում է, որ ոչ-ուղղափառները

---

[1]) Ներողամտութիւնը այստեղ կրօնական համբերողութեան մտքով է գործ ածւում (вѣротерпимость)։

իրաւունք չունենան Լեհաստանում ոչ հող գնելու, ոչ կապալով հող վերցնելու և ոչ կալուած կառավարելու։ «Նրանց համար միութիւն՝ նշանակում է տարբերութիւնների ոչնչացում և դաւանական սկզբունքը ծառայում է նրանց իբրև թշնամութեան դրօշ և ոչնչացման զէնք։ Գործունէութեան այն կերպը, որ նրանք առաջարկում են կաթոլիկ-լեհացիների վերաբերմամբ, առաջարկել և առաջարկում է նաև գերման-բողոքականների, ռուս շտունդիստների և հերձուածողների, հրէաների և վերջերս նաև զալմուխների ու բուդդայական բուրեատների, միւսիւլման թաթարների և վերջապէս մինչև անգամ — հայերի դէմ»։ Մի խօսքով առաջարկում են ամենքին արմատախիլ անել «յանուն ուղղափառութեան բարձր սկզբունքների»։

Այսպիսով՝ բանից դուրս է գալիս, որ ուղղափառութիւնը մէկ չէ, այլ երկու. որ նա «մի օֆիցիալ է կնոջ դէմքով ու դաղանի ճիրաններով». մի կողմից համբերատար, ներողամիտ, միւս կողմից՝ ոչնչացնող։ Բայց կեանքը հասնելով որոշ աստիճանի զարգացման՝ անկարող է դառնում հակասութեան մէջ մնալու։ Եւ եթէ ուղղափառութիւնը երկերեսանի եանուս է ներկայանում, ապա մեզ համար անհետաձգելի խնդիր է դառնում որոշելու, թէ ո՞րն է դրանցից պատահականը և ո՞րն իրականը. «դաղանի ճիրանները, թէ կնոջ դէմքը»։ Այս բանը որոշեցուց է կախուած մեր ամբողջ կուլտուր-պատմական ապագան։

Ուշադրութեան արժանի է այն հանդամանքը, որ գործնական կեանքում թէ կնոջ դէմքի և թէ դաղանի ճիրանների կողմնակիցները կորցնում են բոլոր տարբերութիւնները յօդուտ ճիրանների. գործնականում սիրուն դէմքը միշտ չքանում է և մնում են դաղանի թաթերը։ «Բացի մի երկու հին սլաւոնասէրները, որոնք առիթ չունեցան վերացականութեան ոլորտը թողնելու, մնացածներից չկայ մէկը, որ համարձակուէր, կամ կարողանար իր լաւագոյն սկզբունքները մինչև վերջը՝ հետևողապէս գործադրել ռուս կեանքի բոլոր էական խնդիրները վճռելու

վրայ»։ Այսպէս՝ Ի. Սամարինը ամենանեղ կրօնական և ազգային մոլեռանդութեան տէր էր. Դոստոևսկին՝ այդ մարդարէն՝ ամենատարբրական մի շովինիստ էր գործնական կեանքում։

Յայց տալով ուղղափառութեան այս երկու տարբեր մեկնութիւնները—տեսական կնոջ պատկերն ու գործնական դազանի ճիրանները, Սոլովեն անցնում է քրիստոնէութեան տրամադրածին այս կարևորագոյն խնդրի նը-կատմամբ։ Իր դատողութիւնների շարքը նա յենում է Սլաւ. ընկերութեան նախագահի հետևեալ խօսքերի վրայ. «Քրիստոնէութիւնը պէտք է լինի ինչպէս առանձին մարդու, այնպէս էլ ամբողջ ժողովուրդի բանական-բարոյական կեանքի հիմքը»։

«Քրիստոնէութիւնը, իբրև «բանական-բարոյական կեանքի հիմք», առանձին մարդուն (ինչպէս նաև ամբողջ ժողովուրդին) առաջադրում է որոշ պահանջներ, որոնք երկու սահման ունեն ամենաբարձր՝ մաքսիմալ սահման կամ բացարձակ իդէալ, որ արտայայտւում է այս պահանջով. եղերուք կատարեալք, որպէս Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է. ստորին՝ մինիմալ սահման, որ համաձայնւում է արդարութեան մարդկային բնական սկզբունքին. այն է՝ ուրիշին մի անիր այն, ինչ որ չես ուզում քեզ համար։ Կատարելութեան մօտենալու աստիճանները տարբեր են և փոփոխական, իսկ արդարութեան օրէնքը միշտ և ամենքի համար նոյնն է։ Բացարձակ իդէալը մեզ համար գոյութիւն ունի միայն ձգտման և ուսանելու պրոցէսի մէջ, իսկ արդարութիւնը պէտք է լինի մարդկային կեանքի ռէալ, իրականացած հիմքը, որի այդ կեանքն այլ ևս ոչ մի արժանիք ունենալ չի կարող։ Քրիստոնէական իդէալը բարձրացնելով մեզ արդարութեան հասարակ պահանջներից վեր, դրանով իսկ ենթադրում է այդ պահանջներն արդէն իրականացած։ Նրանք կազմում են բարոյականութեան minimum-ը և այն կեանքը կամ գործունէութիւնը՝ լինի անհատի թէ ամբողջ ժողովուրդի, որ այդ մինիմալ մակերեսին չի հասնում—արդէն ոչ մի

բանական-բարոյական նշանակութիւն չունի, նա վատ դաշնական բնաղդների արտայայտութիւն ու արդասիք է միայն, ինչ դիմակ էլ առնի երեսին» (V. 452)։

«Արդարութեան ընդհանուր սկզբունքի ուղղակի և անհրաժեշտ գործադրութիւններից մէկն էլ ներողամտութեան և յարգանքի պարտաւորութիւնն է դէպի օտարի դաւանութիւնն ու ազգութիւնը։ Այդ պարտականութիւնը,—լիովին անկախ այն բանից, թէ ինչ ներացիի (սուբեկտիւ) վերաբերմունք ունենք մենք դէպի օտարի դաւանութեան բովանդակութիւնը, դէպի օտար ազգութեան բնաւորութիւնը, ինչպէս ենք դնահատում նրանց ներքին արժանիքը,—մեզանից պահանջում է յարգանք դէպի օտարի իրաւունքը և ոչ՝ օտարի որակը։ Մենք պարտաւոր ենք ճանաչելու օտար դաւանութիւնների և ազգերի գոյութեան և ազատ արտերևման ու զարգացման իրաւունքը՝ ինչ տեսակ էլ լինին այդ ազգերն ու դաւանութիւնները. պարտաւոր ենք ճանաչելու ոչ թէ նրանց մասին մեր ունեցած կարծիքի մասնաւոր և նիւթային հիման վրայ, այլ այն ընդհանուր և ձևային հիման վրայ, որով մենք ինքներս անպայման պահանջում ենք ուրիշներից մեր դաւանութեան ու ազգութեան վերաբերմամբ նման ճանաչութիւն։ Սա մի պարզ և ուղղակի հետևութիւն է արդարութեան ընդհանուր և արտաքի (օբյեկտիւ) սկզբունքից—այն է՝ քանի որ մենք չենք ցանկանայ, որ օտարները բռնանան մեր դաւանութեան ու ազգութեան վրայ, ուստի ինքներս էլ չպէտք է թոյլ տանք նման բռնութեան ուրիշների վերաբերմամբ» (V. 452—453)։

Այս որոշ և մեկին ճշմարտութիւնը, որ յայտնեցին քրիստոնէութեան առաջին ջատագովները, որ ապա կորաւ միջին դարերում և ահագին ջանքերով նորից ձեռք բերին ու վերականգնեցին նոր ժամանակներում, մեր օրերում կրկին սկսում է «մթագնել կրքերի և դաշնական բնաղդների կոյր յուզումից»։ Ներկայումս շատ քիչ մարդ կը գտնուի, որ յայտնապէս բացասի արդարութեան պահանջը. մեծամասնութիւնը ամաչելով բացայայտ պար-

զելու իւր մաքերը, դիմում է խորամանկութեան ու հնարագիտութեան, որպէս զի «խօսքով չբացասելով արդարութեան սկզբունքը՝ գործի մէջ նրան հաւասարեցնի գերծյի»։ Այս նպատակով նրանք դիմում են մի շարք սոփեստութիւնների, որ մէկ-մէկ հերքում է Սոլովիևը և որոնք արժանի են մեր ուշադրութեան։

III.

Առաջին սոփեստութիւնն այն է, որ սանք խղճի ազատութիւնը նոյնացնում են ներողամտութեան հետ. առարկելով թէ խիղճն ազատ է արդէն, որովհետև ներապէս մարդու հոգին ազատ է և ոչ ոք չի կարող նրա վրայ բռնանալ։ «Բայց նրանք շատ լաւ գիտեն, ասում է Սոլովիևը. որ հարցն ամենևին այդ մասին չէ, այլ դաւանածը ազատ քարոզելուն ու դաւանելուն, դաւանածի արտաքին դաւանումներին է վերաբերում»։ Եւ քանի որ մենք գոհ չենք մեր մտածածով ու դաւանածով, այլ ցանկանում և աշխատում ենք գործել ու խօսել այն ճշմարտութեան համաձայն, որ մենք ընդունում ենք, ուստի նոյն իրաւունքը պէտք է տանք և ուրիշներին։

Երկրորդ սոփեստութիւնն այն է, որ որոշ պաշտամունքների ազատութիւն տալը արդէն ներողամտութիւն են համարում։ Բայց պաշտամունքը հաւատ չէ, դաւանութիւն չէ, ուստի և պաշտամունքներն ազատ թողնել՝ դեռ չի նշանակում ներողամիտ լինել։ «Դաւանութեան ենթական նախ և առաջ կենդանի անձն է, և ապա միայն սոցիալական խումբը կամ հիմնարկութիւնը և կրօնական ազատութիւնը ամենից առաջ ազատութիւն է իւրաքանչիւր անհատի համար՝ դաւանելու և քարոզելու այն, ինչի որ հաւատում է։ Դա ազատութիւն է ոչ միայն հիմնարկութեան, այլ և համոզմունքի համար. ազատութիւն իւրաքանչիւր անձի համար՝ իւր սեփական ընտրութեամբ՝ պատկանելու այս կամ այն դոյութիւն ունեցող կրօնական հիմնարկութեան» (այսինքն՝ եկեղեցու)։ Սրանից պարզ

հետևում է, որ պէտք է ազատ թողնել մի կրօնից մուսին անցնելը և անձնական դաւանութիւնն ազատ քարոզելը։

Ոմանք ասում են թէ ազգային ինքնապաշտպանութեան զգայմունքը մեզ ստիպում է արտօնեալ դրութիւն տալու ազգային պաշտամունքին և կրօնական հիմնարկութեան։ Այս կերպ մտածելը Սոլովիևը համարում է սխալ. նախ՝ որ կրօնն այստեղ յայտարարւում է ոչ թէ մի ինքնանպատակ բան, այլ մի միջոց, ուրիշ նպատակի հասնելու համար՝ և երկրորդ՝ որ այդպէս մտածողները արդէն նախօրօք վճռում են՝ որ եթէ ազգային եսականութիւնն ու եկեղեցին երբևիցէ ընդհատելու լինին, առաջինի յաղթութիւնը ցանկալի է։ Այդ սոփեստութիւնը կարելի է հերքել նաև պատմական իրողութիւններով. Գերմանիայի երկդաւան լինելը արգելք չեղաւ, որ նա մի զօրեղ պետութիւն դառնայ, մինչդեռ Սպանիայի բոլոր ջանքերը բռնութեամբ մի դաւանութիւն պահպանելու երկրում՝ նրան չփրկեց անկումից։

Քրիստոնէութիւնը պէտք է քրիստոնէական ձևերով պաշտպանել և ոչ թէ լիովին նրան հակասող միջոցներով. այդ անտեղի միջոցները շատ աւելի են փորում քրիստոնէական շէնքի տակը, քան բոլոր հերձուածները։ Նա իր չէ, մի պետական անդուկ չէ, որ հրացանով պաշտպանուի։ «Քրիստոնէութիւնը ոգեկան սկզբունք է նախ և առաջ, որ ներքուստ ոգևորում է իրան հաղորդ մարդկան և հեռու պահում նրանց ամեն տեսակ բռնական և ճնշիչ գործերից որ և է մէկի վերաբերմամբ»։ Չկայ մի քրիստոնէութիւն, որ թոյլ տայ իրան պաշտպանելու վերոյիշեալ թերթի առաջարկած միջոցներով, որովհետև ինքը պաշտպանող ճշմարտութիւնը դէմ է այն ձևերին, որով պաշտպանւում է։

Ոմանք էլ ներողամտութիւնը շփոթում են կրօնական անտարբերութեան հետ։ «Անկասկած, ասում է Սոլովիևը. եթէ ես հաւատում եմ ճշմարտութեան, չեմ կարող անտարբեր մնալ, երբ որ և է մէկը բացասում է այն. բայց մի՞թէ սրանից հետևում է, որ ես պէտք է նրա կոկորդը

սեղմեմ»։ «Հարցն այն է, ասենք նրա միայն յոգեւոր խօսքերով. թէ ի՞նչ միջոցներով պէտք է պաշտպանել հաւատի ճշմարտութիւնը. հոգեւոր զէնքով, թէ նիւթական. համոզիչ խօսքով ու սուրը մերկացնելով, թէ սուիպուռներով, որ լռեն, բանտով, աքսորով և այլն» (ՙ. 415)։ Արդարութեան նախանձախնդիրը պէտք է արդարամիտ լինի. արդար պաշտպանութեան միջոցները յամոզիչ խօսքեր, ճշմարտութիւնը դաւանելն ու քարոզելը, հարկաւոր դէպքում անձնազոհութիւն և մարտիրոսութիւն։ Կա՛յ այստեղ բռնութիւն ուրիշի վրայ», հարցնում է Սոլովիևը։ «Համոզելու տեղ բռնանալը ոչ թէ զօրեղ հաւատից է, այլ թոյլ խելքից, երբեմն նաև հաւատի թուլութիւնից կամ կատարեալ բացակայութիւնից»։ Սրան օրինակ կարող են լինել Հռոմի պաշտօնեաները, որոնք լիովին կասկածամիտ լինելով հաւատի խնդրում, սպանում ու հալածում էին քրիստոնեաներին։

Ճատերն էլ չկարողանալով ուրիշ հնար գտնել իրանց հալածիչ վերաբերմունքն արդարացնելու օտար դաւանութեանց վերաբերմամբ, զանազան յանցանքներ են հնարում։ Այս զէնքը, սակայն, նոր չէ և սրա դէմ խօսել են դեռ հին քրիստոնէութեան առաջին ջատագովները, ասելով թէ՝ ո՞վ յանցանք է գործել, թող պատիժը կրի օրէնքի համաձայն։

Վերջապէս կան մարդիկ, որոնք ընդունելով թէ իրանց արարքը գովելի չէ, արդարանում են նրանով, թէ մենք գալոց սերունդների շահերն ունինք աչքի առաջ։ Սոլովիևն այս հայեացքը քրիստոնէական չի համարում. «քրիստոնէական տեսակէտից բոլոր մարդիկ և բոլոր սերունդները նոյն արժէք են և մէկը չի կարող կրաւորական զէնք ծառայել միւսի օգտին»։ Բարի նպատակներին չար միջոցներով դիմելու դրութիւնը միապէս դէմ է թէ Աւետարանի ոգուն և թէ ռուս ժողովուրդի բնաւորութեան։

IV.

Այս է այդ երկու նշանաւոր յօդուածի բովանդակութիւնը։ Միւս երեք յօդուածը, ինչպէս վերն էլ նկատեցինք, գրած են առաջին երկուսի մէջ յայտնած մտքերը պարզելու և պաշտպանելու համար։ Այստեղ նրանց մասին երկար չենք խօսի, որովհետև կարծում ենք, ընթերցողն արդէն լիովին ըմբռնեց Սոլովևի տեսակէտն ու պաշտպանուող խնդրի էութիւնը։ Միայն աւելորդ չենք համարում «Մի վեհ արդարութեան մասին» յօդուածից մէջ բերել մի հատուած, որ մերկացնում է մի նոր սոփեստութիւն։ Այդ յօդուածում ի միջի այլոց նա խօսում է համբերողութիւնն ու ներողամտութիւնը շփոթելու մասին, յայտնելով որ դրանք տարբեր գաղափարներ են. համբերողութիւնը միջին յատկութիւն է և նրա վատ կամ լաւ լինելը կախուած է նրանից, թէ ինչ բանի ենք մենք համբերում. մինչդեռ ներողամտութիւնը որոշ իմաստ ունի։

Ահա հատուածը. «բանն այն է, որ ուրիշի կրօնական համոզմունքների վերաբերմամբ ճանաչեցինք այն իրաւունքները ազատ արտերևալու, որ մենք ճանաչում ու պահանջում ենք մեր սեփական դաւանութեան համար։ Կրօնական համոզմունքների այս հանդուրժողութիւնը ամենևին չի ամփոփում իր մէջ նրանց համարժէքութեան ճանաչութիւնը (ինչպէս որ հանճարի և տխմարի, թուլամորթի և հերոսի քաղաքական համերաւութիւնը, նկատում է Սոլովևը. ամենևին չի ենթադրում նրանց ներքին արժանիքի հաւասարումը)։ Դաւանութիւնների համերաւութեան այս սկզբունքը, որ ուրիշ կերթ երկրներում օրէնք է դարձել, ինչպէս յայտնի է, դեռ չի մտել ոչ մեր օրէնսդրութեան, ոչ էլ մեր կառավարչութեան կանոնների մէջ։ Այն խիստ լայն, երբեմն նոյն իսկ հովանաւոր վերաբերմունքը, որ պետութիւնն ունի դէպի յայտնի, ճանաչուած պաշտամունքները նրանց status quo-ում,—մեղանում ամենևին չի տարածւում կրօնի ամենաէական կողմի վրայ. այսինքն իսկական անձնական համոզմունքի վրայ՝

հաւատի գործում—ինչ կերպով էլ այդ գործ արտերեւալու լինի՝ իբրև եղակի երեւոյթ, թէ իբրև նոր դաւանական խմբերի կազմութիւն, կամ հին խմբերի ձգտում աւելի աշխուժօրէն զարգացնելու իրանց ուժերը։ Անձնական կրօնական համոզմունքի վերաբերմամբ չի ճանաչում ոչ մի իրաւունք այն բոլոր դէպքերում, երբ այդ համոզմունքը այս կամ այն կերպով ընդհարւում է տիրող դաւանական միջավայրում ծնուած լինելու նիւթային իրողութեան հետ» (Ֆ. 477)։

Եւ մի անգամ էլ համոզուած յայտնում է, որ «ներողամտութեան խնդիրը՝ իսկապէս լինելով միջդաւանական միջեկեղեցական խնդիր, վերջնականապէս կարող է վճռուել միայն արդարութեան հանրապարտաւորիչ սկզբունքի հիման վրայ» (Ֆ. 478)։

Վէճի վերջը» յօդուածն աւելացնում է մի նոր բան. տեսական որոշումներից Սոլովեն անցնում է գործնական կեանքին և պահանջում է, որ օրէնքով ապահովուի ներողամտութեան բարձր սկզբունքը։ Մի ժամանակ նա հերքում է մի ուրիշ սոփեստութեան։ Շատերը ձգտելով բառերի մշուշով քօղարկել մերկ իրողութիւնը, առարկում են թէ մարդ պէտք է ներքուստ ներողամիտ լինի, թէ չէ օրէնքն ինչ օգուտ։ Սոլովեն, օրինակ բերելով ճորտերի ազատութիւնը, այն միտքն է յայտնում, թէ օրէնքն արդէն իրական է դարձնում այն, ինչ որ ցանկալի է մեզ համար։ Անշուշտ լաւ է, որ ամենքը ներքուստ ներողամիտ լինին, բայց շատ աւելի կարեւոր է, որ օրէնքով արգելուած լինին աննեղողամիտ լինելու ձգտումները։

Այս յօդուածը, որ համարեա ամբողջովին հիւսուած է Սոլովեի խօսքերից, մենք յարմար ենք համարում վերջացնել դարձեալ նրա խօսքերով, որ գրել է մեզանից 17 տարի առաջ իր «Աղդայնութեան խնդիրը Ռուսիայում» նշանաւոր երկի յառաջաբանում, ամփոփելով այդ գրքի հինգերորդ գլուխը. այդ աշխատութիւնն էլ մտել է նրա երկերի հինգերորդ հատորը։

«Այսպիսով՝ թէ բարձրագոյն բարոյական կշռադա-

տումները, թէ ռուս ժողովուրդի իդէալը և թէ մեր քաղաքականութեան մերձաւոր կարիքները մեզ դրդում են հրաժարուելու ազգային առանձնացումից և եսականութիւնից, կատարելու ազգային անձնուրացութեան մի գործ։ Հասկանալի է, որ այդ տեսակ գործ հնարաւոր է միայն Ռուսիայի կատարեալ ոգեկան ազատութեան ժամանակ, երբ այնտեղ ազատ կը լինին միտքն ու կարծիքը։ Մեր անյետաձգելի պահանջը, մեր ազգային դերագոյն կոչումը կատարելու էական գործնական պայմանը Ռուսիայի ոգեկան ազատութիւնն է, մի գործ, որ անհամեմատ աւելի կարևոր է, քան ճորտերի քաղաքական ազատութիւնը, որ անցեալ թագաւորութեան մեծագոյն սխրանքն եղաւ։ Ռուսիան ներկայումս հասել է ազգային հասունութեան և ժամանակ է նրա մտքի և հաւատի վրայից խնամակալութիւնը վերացնել»։

Ն. Աղբալեանց.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն)

Ինչ պէտք է լինի դպրոցը դաստիարակութեանը չխառնուելու դէպքում։ Դպրոցը, ինչպէս վերևն ասացինք, այն դիտակցական գործունէութիւնն է, որ կրթողն ունենում է կրթուողների համար։ Կրթողն ինչպէս պէտք է գործէ, որ չանցնէ կրթութեան, այսինքն ազատութեան սահմանը։ Պատասխանում եմ. դպրոցը մի նպատակ պէտք է ունենայ. հաղորդել ծանօթութիւններ (instruction)

առանց բարոյական համոզումների, հաւատալիքի և բնաւորութեան շրջանը մտնել աշխատելու. դպրոցը մի նպատակ պէտք է ունենայ, այն է՝ գիտութիւնը և ոչ թէ այն աղդեցութեան հետևանքները, որ գիտութիւնն ունենում է մարդկային անձնաւորութեան վրայ։ Դպրոցը չպէտք է աշխատէ նախատեսել գիտութեան առաջ բերած հետևանքները, այլ պէտք է աւանդէ գիտութիւնը կատարեալ ազատութիւն տալով նորա գործադրման համար։ Դպրոցը չպէտք է որևէ գիտութիւն կամ գիտութեան ամբողջ սիստեման անհրաժեշտ համարէ, այլ պէտք է աւանդէ այն ծանօթիւնները, որ ինքն ունի, և պէտք է սովորողներին իրաւունք տայ ընդունելու կամ չընդունելու իր աւանդած ծանօթութիւնները։ Դպրոցի կազմակերպութիւնն ու ծրագիրը պէտք է հիմնուեն ոչ թէ տեսական հայեացքների, ոչ թէ այն համոզման վրայ, թէ այս, այս գիտութիւններն անհրաժեշտ են, այլ միայն հնարաւորութեան, այսինքն ուսուցիչների ծանօթութեան վրայ։ Բացատրեմ օրինակով։ Ես ցանկանում եմ ուսումնական հաստատութիւն հիմնել։ Ես իմ տեսական հայեացքների վերայ հիմնուած ծրագիր չեմ կազմում և այս ծրագրի հիմամբ ուսուցիչներ որոնում, այլ առաջարկ եմ անում գիտութիւն աւանդելու կոչում զգող բոլոր մարդկանց, որ նոքա աւանդեն այնպիսի դասեր, կարդան այնպիսի դասախօսութիւններ, որ կարող են։ Ինքնըստինքեան հասկանալի է, որ նախկին փորձը կ'առաջնորդէ մեզ այս դասերն ընտրելիս, այսինքն կ'առաջնորդէ, որ էլ չաւանդենք այն առարկաները, որ սիրով չեն լսում, որ ռուս գիւղում սպաներէն, աստղաբաշխութիւն կամ աշխարհագրութիւն չաւանդենք, ճիշտ այնպէս, ինչպէս որ այս միևնոյն գիւղում վաճառականը վիրաբուժական գործիքների կամ կրկնոցի խանութ բաց չի անիլ։ Մենք կարող ենք նախատեսել, թէ ինչ կըպահանջեն մեր առաջարկութիւնից. սակայն մեր վերջնական դատաւորը փորձը կըլինի միայն, և մենք իրաւունք չենք համարիլ ոչ մի այնպիսի խանութ բանալու, որտեղ կուպր ծախենք այն պայմանով

միայն, որ 10 գրուանքայ կպրի հետ մի գրուանքայ տպաքկոճ կամ պոմագայ էլ առնեն։ Մենք հոդ չենք տանիլ այն մասին, թէ սպառողներն ինչ բանի համար գործ կ'ածեն մեր ապրանքները. մենք հաւատում ենք, որ նոքա գիտեն, թէ ինչ է հարկաւոր իրենց, և բաւական է, աշխատենք իմանալ, թէ ինչ պահանջ ունին նոքա, և միայն լցուցանենք այն։ Շատ կարելի է, որ մի ուսուցիչ կենդանաբանութեան համար գտնուի, մի ուսուցիչ միջնադարեան պատմութեան համար, մեկը կրօնի, մեկը տեղագրական արուեստի համար։ Եթէ այս ուսուցիչները կարողանան հետաքրքրական դարձնել իրենց դասերը, օգտակար կըլինին վերջիններս չնայելով նոցա անհամապատասխանութեանը և պատահականութեանը։ Ես չեմ հաւատում, որ կարելի է տեսականօրէն դիտութիւնների մի ներդաշնակ շարք ստեղծել, բայց հաւատում եմ, որ իւրաքանչիւր դիտութիւն աղատ աւանդուելով, ներդաշնակ կերպով դարսւում է իւրաքանչիւր մարդու ունեցած ծանօթութիւնների շարքի վրայ։ Գուցէ աւարկեն, թէ ծրագրի այսպիսի պատահական բնաւորութեան պատճառով կարող են դասընթացքի մէջ մտնել անօգուտ, մինչև անգամ վնասակար դիտութիւններ և որ շատ դիտութիւններ անկարելի կըլինի աւանդել, որովհետև աշակերտները նոցա համար գոհացուցիչ պատրաստութիւն չեն ունենայ։ Այս բանին կըպատասխանեմ առաջին, որ վնասակար և անօգուտ դիտութիւններ չկան, ում համար էլ ուզում են լինին և որ մէջտեղ առողջ միտք և աշակերտական պահանջ կայ, որոնք աղատ ուսուցման ժամանակ չեն թոյլ տայ, անօգուտ կամ վնասակար դիտութիւններ հանդէս գան, եթէ լինեն էլ այս տեսակ դիտութիւններ։ Երկրորդ, որ նախապատրաստուած աշակերտներ հարկաւոր են վատ ուսուցչին, իսկ լաւ ուսուցչի համար աւելի հեշտ է, որ հանրահաշիւ կամ վերլուծական երկրաչափութիւն այն աշակերտների հետ սկսէ, որոնք թուաբանութիւն չգիտեն, քան թէ այն աշակերտների հետ, որ վատ գիտեն թուաբանութիւնը. միջնադարեան պատմութիւնն աւելի

հինն անգիր չարած աշակերտներին հեշտ է սովորեցնել։ Չեմ հաւատում մի ուսուցչապետ, որ համալսարանում դիֆերենցիալ, ինտեգրալ կամ ռուսական քաղաքացիական իրաւունքի պատմութիւն է աւանդում, չկարողանայ տարրական դպրոցում թուաբանութիւն և ռուսաց պատմութիւն աւանդել և մի և նոյն ժամանակ լաւ ուսուցչապետ լինի։ Ոչ մի արդիւնք, ոչ մի օգուտ չեմ տեսնում այն բանից, մինչև իսկ հնարաւոր չեմ գտնում, թէ առարկայի մի մասը կարելի է լաւ աւանդել։ Իսկ, որ գլխաւորն է, համոզուած եմ, առաջարկը միշտ կը համապատասխանէ այն պահանջին, թէ գիտութեան իւրաքանչիւր աստիճանի համար պէտք է լինին բաւական թուով և՛ աշակերտներ, և՛ ուսուցիչներ։

Սակայն ինչպէս կրթողը, կ՚ասեն ինձ, չցանկանայ իւր դասաւանդութեան միջոցով որոշ դաստիարակչական ազդեցութիւն ունենալ։ Զարմանալի բնական է այս ձգտումը, որ կրթողի՝ կրթուողին գիտութիւն աւանդելու բնական պահանջն է։ Այս պահանջն է միայն, որ կրթողին կարողութիւն է տալիս իւր գործով զբաղելու, չնորհում է յարիշտակման այն աստիճանը, որ անհրաժեշտ է նորան։ Բացասել այս ձգտումն անհնարին է, և ես երբեք չեմ մտածել այս մասին. միայն սորա գոյութիւնն աւելի զօրեղ կերպով ապացուցանում է ինձ, թէ դասաւանդութեան ժամանակ ազատութիւնն անհրաժեշտ է։ Չէ կարելի արգելել, որ պատմութիւն սիրող և աւանդող մարդը չաշխատէ հաղորդել իւր աշակերտներին այն պատմական հայեացքը, որ ինքն ունի, որ օգտակար և անհրաժեշտ է համարում մարդուս զարգացման համար. անկարելի է արգելել, որ նա չաշխատէ աւանդել այն մեթոդը, որ ինքն աւելի լաւ է համարում մատեմատիկական կամ բնագիտական առարկաներն ուսումնասիրելու համար. ընդհակառակը դաստիարակութեան նպատակի այս նախատեսումը խրախուսում է ուսուցչին։ Սակայն խնդիրն այն է, որ գիտութեան դաստիարակիչ տարրը զօռով չէ կարող հաղորդուել։ Չեմ կարող ընթերցողի ուշադրութիւնը

գոհացուցիչ կերպով այս հանգամանքին դարձնել։ Դաստիարակիչ տարրը, ասենք թէ գիտութեան, մասնաւորապէս կայի դաստիարակիչ տարրը, հաղորդւում է այն ժամանակ միայն, երբ ուսուցիչը բուռն կերպով սիրում է և գիտէ իւր առարկան. աշակերտներին այն ժամանակ է միայն հաղորդւում այս սէրը և դաստիարակիչ ազդեցութիւն ունենում նոցա վրայ։ Իսկ հակառակ դէպքում, այսինքն երբ մի տեղ վճռում են, թէ այս ինչ առարկան դաստիարակիչ ազդեցութիւն ունի, և մեկին պատուիրում են, որ աւանդէ, իսկ ուրիշներին՝ որ լսեն, այս դէպքում դասաւանդութիւնը բոլորովին հակառակ վախճանի է հասնում, այսինքն ոչ միայն գիտականօրէն չէ դաստիարակում, այլ և զզուեցնում է գիտութիւնից։ Ասում են, գիտութիւնը դաստիարակիչ տարր (erziegliges Element) է բովանդակում. այս և՛ ճիշտ է, և՛ սուտ է։ Եւ այս դրութիւնն է դաստիարակութեան մասին գոյութիւն ունեցող պարադոքսական հայեացքի հիմնական սխալի պատճառը։ Գիտութիւնը գիտութիւն է և ոչինչ չէ բովանդակում. իսկ դաստիարակիչ տարրը կախուած է գիտութիւններն աւանդելուց, այն սիրուց, որ ուսուցիչն ունի իւր գիտութեան նկատմամբ. կախուած է գիտութիւնը սիրով աւանդելուց և ուսուցչի, աշակերտի յարաբերութիւնից։ Եթէ մարդ ցանկանում է գիտութեամբ դաստիարակել աշակերտին, թող սիրէ եւ իմանայ իւր գիտութիւնը, եւ աշակերտները կըսիրէն թէ՛ իրեն, թէ գիտութիւնը. իսկ եթէ մարդ դաստիարակում է աշակերտին, բայց ինքը չէ սիրում գիտութիւնը, ինչքան էլ ասի-պէ, որ սովորեն, գիտութիւնը դաստիարակիչ ազդեցութիւն չի ունենայ։ Այստեղ ևս կրկին մի չափ, մի փրկութիւն կայ, այն է՝ դարձեալ ազատութիւն շնորհել աշակերտներին ուսուցչին լսելու կամ չլսելու, ընդունելու կամ չընդունելու նորա դաստիարակիչ ազդեցութիւնը, այսինքն ազատութիւն ունենան իրենք իրենց վճռելու, թէ արդեօք ուսուցիչը գիտէ և սիրում է իւր գիտութիւնը։

Ուրեմն ինչ պէտք է լինի դպրոցը դաստիարակութեանը չխառնուելու դէպքում։

Դպրոցն այն բաղմակողմանի և ամենաբազմազան դիտակցական գործունէութիւնը պէտք է լինի, որ մի մարդ ունենալու է մի ուրիշի համար ծանօթութիւններ (instruction) աւանդելու նպատակով՝ առանց ուղղակի բռնի կերպով կամ քաղաքագիտօրէն ստիպելու, որ ընդունէ այն, ինչ որ մենք ցանկանում ենք։ Մեր հասկացած դպրոցը թերևս այնպիսի դպրոց չլինի, որ գրատախտակներ, նոտարաններ, ուսուցչական կամ ուսուցչապետական ամբիոններ ունենայ. նա թերևս լինի տեսարանացոյց (раекъ), թատրոն, մատենադարան, թանգարան, զրոյց. թերևս ամեն տեղ բոլորովին ուրիշ գիտութեան ցանկ (сводъ), ծրագիր յօրինուեն (ես միայն իմ փորձը գիտեմ. Եասնաեա-Պոլեանայի դպրոցն իւր այն առարկաներով, որ ես նկարագրել եմ, կէս տարուայ ընթացքում մասամբ աշակերտների ու նոցա ծնողների պահանջի համաձայն, մասամբ ուսուցիչների ծանօթութիւնների պակասութեան պատճառով կէս տարում բոլորովին փոխուեցաւ և այլ ձև ստացաւ։

Սակայն ինչ կարելի է անել. Մթթէ այսպիսով էլ չեն լինի դաւառական ուսումնարաններ, գիմնազիաներ, հռոմէական իրաւունքի պատմութեան ամբիոն. իսկ ինչ կը-լինի մարդկութեանը, լսում եմ ես։ Թող ուրեմն էլ չլինին, եթէ պէտք չեն աշակերտներին և չենք կարող լաւացնել։ Սակայն չէ՞ որ երեխաները միշտ չեն կարողանայ իմանալ, թէ ինչ է պէտք իրենց, երեխաները սխալում են և այլն և այլն,—լսում եմ ես։ Ես այսպիսի վէճի մէջ չեմ մտնի։ Այս վէճը մեզ այն հարցին կը հասցնէ, թէ իրաւացի է արդեօք մարդու դատի առաջ մարդու բնութիւնը և այլն։ Ես այս չգիտեմ և այստեղ կանգ չեմ առնի, ես միայն այս եմ ասում, եթէ կարող ենք իմանալ, թէ ինչ բան պէտք է սովորեցնենք, այնժամանակ մի խանգարէք ինձ, որ զօռով ռուս երեխաներին ֆրանսերէն, միջնադարեան ցեղաբանութիւն և գողանալու արհեստը սովորեցնեմ։

Ես էլ ձեզ պէս բոլորը կ'ապացուցանեմ։ Եթէ այդպէս է, էլ գիմնազիայ, լատիներէն չեն լինի։ Իսկ ինչ պէտք է անեմ ես, կրկին լսում եմ։

Մի վախենաք, լատիներէնն էլ կըմնայ, պերճախօսութիւնն էլ կըմնայ. դեռ մի հարիւր տարի էլ կըմնան և կըմնան միմիայն այն պատճառով, որ դեղը գնուած է, պէտք է խմել (ինչպէս որ ասում էր մի հիւանդ)։ Դժուար թէ մի դար յետոյ էլ ընդհանուրի սեպհականութիւն դառնայ այն միտքը, որ ես ազատ, անշնորհք և անհամոզիչ կերպով եմ արտայայտում։ Դժուար թէ մի դարից յետոյ վերջանան գնան այս պատրաստի ուսումնական հաստատութիւնները՝ ուսումնարաններ, գիմնազիաներ, համալսարաններ և սոցա տեղը բռնեն ազատ կերպով հիմնուած հաստատութիւններ՝ հիմունք ունենալով ուսանող սերնդի ազատութիւնը։

ՅԱՌԱՋԱԳԻՄՈՒԹԻՆԸ ԵՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԸ

(Պատասխանում եմ պ. Մարկովին։ «Русскій Вѣстникъ», 1862 թ., № 5)։

Պ. Մարկովը համաձայն չէ կրթութեան մասին մեր ունեցած հայեացքին և այս տարաձայնութեան դլխաւոր կէտերը հետևեալ կերպով է բանաձևում. 1. Մենք ընդունում ենք, որ մի սերունդ իրաւունք ունի խառնուելու միւսին դաստիարակելու դործին։ 2. Մենք ընդունում ենք, որ բարձր դասակարգն իրաւունք ունի խառնուելու ժողովրդական կրթութեանը։ 3. Մենք համաձայն չենք կրթութեան այն սահմանին, որ տալիս է Եասնաեա Պալեանան։ 4. Կարծում ենք, դպրոցները չեն կարող և չպէտք է ազատուեն պատմական պայմանների ազդեցութիւնից։ 5. Կարծում ենք, որ մեր ժամանակի դպրոցները շատ աւելի համապատասխան են այժմեան պահանջներին, քան թէ միջնադարեան դպրոցները։ 6. Կարծում ենք, որ մեր դաստիարակութիւնը ոչ թէ վնասակար է, այլ օդտակար։ 7. Կարծում ենք, դաստիարակութեան այնկա-

տարեալ աղաղութիւնը, որ կոմս Տալստոյն է հասկանում, վնասակար է և անհնարին։ 8. Կարծում ենք վերջապէս, որ Եասնաեա Պալեանայի դպրոցի կազմակերպութիւնը հակասում է Եասնաեա Պալեանայի խմբագրի համոզմունքներին («Русск. Вѣст.» 1862 թ., № 5, 186 եր.)։

Նախքան այս կէտերից իւրաքանչիւրին պատասխանելն, աշխատենք գտնել այն հիմնական պատճառը, որի շնորհիւ մեր հայեացքը համաձայն չէ պ. Մարկովի հայեացքին, որ ընդհանուր համակրութիւն է առաջ բերել ինչպէս մանկավարժական, այնպէս և ոչ մանկավարժական հասարակութեան մէջ։

Այս պատճառը մեկ այն է, որ լրութեամբ չենք արտայայտել մեր հայեացքը, որ կ'աշխատենք լրացնել, մեկ էլ այն, որ պ. Մարկովը և առհասարակ հասարակութիւնն անճիշտ և սահմանափակ են հասկացել մեր դրութիւնները, որ և կ'աշխատենք պարզաբանել։ Ակներև է, որ անհամաձայնութիւնն առաջանում է տարբեր հասկացողութիւնից և շնորհիւ այս հանգամանքի հէնց կրթութեան սահմանի տարբերութիւնից։ Պ. Մարկովն ասում է. համաձայն չենք կրթութեան այն սահմանին, որ տալիս է Եասնաեա Պալեանան։ Սակայն պ. Մարկովը չէ հերքում մեր ուռած սահմանը, այլ իւր սահմանն է տալիս։ Գլխաւոր հարցն այս է. կրթութեան սահմաններից որն է ճիշտ, մերը թէ պ. Մարկովինը։ Մենք ասել ենք. մեր համոզմամբ կրթութիւնն ամենարնդհանուր մտքով առած, որի մէջ մտնում է եւ դաստիարակութիւնը, մարդուս այն գործունէութիւնն է, որի նիմունքն է հաւասարութեան պահանջն ու կրթութեան յառաջադիմութեան անվիսոխ օրէնքը և խոստովանում ենք, հասարակութեան մեծամասնութեան ու պ. Մարկովի համար բացատրութեան կարօտ են այս բառերը. պ. Մարկովը խնդրում է, որ ընթերցողն առանձնապէս ուշադրութիւն դարձնէ սոցա։ Սակայն նախքան այս բացատրութիւններ տալն անհրաժեշտ ենք համարում շեղում անել, թէ ինչու պ. Մարկովը և առհասարակ հասարակութիւնը չեն կամեցել

հասկանալ այս սահմանը և ինչու ոչ մի ուշադրութիւն չեն դարձրել այս սահմանին։

Ակսած Հեգելի և այն նշանաւոր սասցուածքից, թէ «ինչ որ պատմական է, բանական է», դրաւոր և բանաւոր վէճերի ժամանակ, մանաւանդ մեր մէջ, մի չափազանց տարօրինակ մտաւոր հնոց (фокусъ) է նշխում, որի անունն է պատմական հայեացք։ Օրինակի համար մարդ ասում է, իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի ազատ լինելու, դատուելու միայն այն օրէնքների հիմամբ, որ նա ինքն իրաւացի է դտնում, իսկ պատմական հայեացքը պատասխանում է, պատմութիւնը մշակում է որոշ պատմական մոմենտ, որ պայմանաւորում է որոշ պատմական օրէնսդրութիւն և այն, թէ ժողովուրդն ինչ պատմական վերաբերմունք է ցոյց տալիս նորան։ Մարդ ասում է, հաւատում եմ Աստծուն, պատմական հայեացքը պատասխանում է, որ պատմութիւնը մշակում է կրօնական որոշ հայեացքներ և այն, թէ մարդկութիւնն ինչպէս է վերաբերւում այս հայեացքներին։ Մարդ ասում է, Իլիականը մի հոյակապ վիպական երկ է,—պատմական հայեացքը պատասխանում է, թէ Իլիականը պատմական հասկացողութեան արտայայտութիւն է լոկ, որ ունեցել է ժողովուրդը պատմական որոշ մոմենտում։ Այս հիմամբ պատմական հայեացքը ոչ միայն չէ վիճում այն մասին, թէ մարդուս անհրաժեշտ է ազատութիւնը, թէ չէ. այն մասին, թէ կայ Աստուած, թէ չէ. այն մասին, թէ լաւ է Իլիականը, թէ վատ. ոչ միայն ոչինչ չէ անում ցանկալի ազատութեան համար, Աստծու գոյութեանը կամ Իլիականի գեղեցկութեանը համոզելու կամ տարհամոզելու համար,—այլ միայն ցոյց է տալիս մեզ այն տեղը, որ մեր ներքին պահանջն ու ճշմարտութեան կամ գեղեցկութեան սէրը բռնում են պատմութեան մէջ. պատմական հայեացքը միայն ընդունում է, սակայն ընդունում է ոչ թէ անմիջական դիտակցութեան, այլ պատմական բանավարութիւնների ճանապարհով։ Մարդ ասում է, սիրում և հաւատում եմ մի բանի,—պատմական հայեացքն ասում է. սիրեցէք ու հաւատացէք և

ձեր սէրն ու հաւատը տեղ կը ճարեն իրենց համար մեր պատմական հայեացքի մէջ։ Կ'անցնեն դարեր, և մենք կը գտնենք այն տեղը, որ բռնելու էք պատմութեան մէջ. սակայն առաջուց իմացէք, այն, ինչ որ սիրում էք, անպայման դեղեցիկ չէ, և այն, որին հաւատում էք, անպայման ճշմարիտ չէ. սակայն զուարճացէք, երեխաներ, ձեր սէրն ու հաւատը տեղ և գործադրութիւն կը գտնեն։ Ո՛ր դաղափարն ուզում էք առնենք. բաւական է միայն «պատմական» բառը կը ցնենք նորան, այս դաղափարն արդէն կը կորցնէ իւր կենսական, իսկական նշանակութիւնը և և կը ստանայ միայն արհեստական, ապարդիւն նշանակութիւն մի որևէ արհեստական կերպով կազմուած պատմական աշխարհայեցողութեան մէջ։

Պ. Մարկովն ասում է, «ընդհանուր նպատակն ամբողջ կեանքի արդիւնքն է, դանազան այժերի գործունէութեան վերջնական հետևանքը։ Այս կարելի է տեսնել միայն աւարտի ժամանակ, և այս բանի կարիքը չէ ղդացուում։ Ուրեմն և մանկավարժութիւնն էլ իրաւունք ունի վախճանական նպատակ չունենալու, իրաւունք ունի ձգտելու իւր ժամանակաւոր և տեղական պայմաններին, որոնք աւելի կեանքի համար նշանակութիւն ունին» («Русск. Вѣст.» № 5, 153 եր.)։ Նորա կարծիքով մանկավարժութեան համար կրիտերիում որոնելն անօգուտ բան է։ Բաւական է գիտենալ, որ պատմական պայմանների մէջ ենք, և արդէն ամեն ինչ լաւ է։

Պ. Մարկովը կատարելապէս իւրացրել է պատմական հայեացքը. նա, ինչպէս և մեր ժամանակի ուսումնասիրող մարդկանց մեծամասնութիւնը, օժտուած է պատմական դաղափարը կեանքի ամեն մի երևոյթին կցելու հմտութեամբ, կարողանում է պատմական իմաստով շատ դիտական և սրամիտ բաներ ասել, իւրաքանչիւր դէպքում լիովին տիրապետում է պատմական բառախաղին։ Մեր առաջին յօդուածի մէջ ասուած է եղել, որ կրթութեան հիմունքը հաւասարութեան պահանջն ու կրթութեան յառաջադիմութեան օրէնքն է։ Թէև այս դրութիւնը

յայտնած է առանց ապացոյցների, բայց երևոյթի պատճառը բացատրում է։ Կարելի էր չհամաձայնել և փաստեր պահանջել. սակայն միայն պատմական հայեացքը կարող է կրթութեան նման երևոյթի պատճառը որոնելու կարիքը չզգալ։ Պ. Մարկոնը ասում է. ցանկալի է, որ ընթերցողը մի առանձին ուշադրութեամբ կանգ առնէ այս բառերի վրայ։ Սոքա իմ կարծիքով լոկ փուչ, աւելորդ խօսքեր են, որ մթնեցնում են ամենքին հասկանալի իրերի իմաստը։ Ի՞նչ գործ ունի այստեղ հաւասարութեան պահանջը, ընազդը. ինչի՞ համար է յատկապէս այս նախասահմանումը, յառաջադիմութեան անծանօթ օրէնքը, որ մի բան թոյլ չէ տալիս, իսկ մի ուրիշ բան հրամայում է անել։ Ո՞վ է ճանաչել կամ ապացուցել այս օրէնքը։ Եթէ կոմս Տալստոյի պէս ժխտենք այն, թէ չափահաս սերունդը դաստիարակիչ կերպով ազդում է մատաղ սերնդին, այն ժամանակ ո՞ւրտեղ պէտք է տեսնենք այս տարօրինակ օրէնքը։ Մայրը սիրում է երեխային, կամենում է գոհացում տալ նորա կարիքներին և գիտակցաբար, առանց որևէ խոյ-հրդաւոր պահանջի կարևոր է համարում յարմարել նորա սաղմային վիճակի բանականութեանը, խօսում է նորա հետ ամենահասարակ լեզուով։ Նա ոչ միայն չէ ձգտում, որ հաւասարէ իւր որդուն, որ վերին աստիճանի հակաբնական բան կըլինէր, այլ ընդհակառակը դիտմամբ աշխատում է տալ իւր ծանօթութեան ամբողջ պաշարը։ Եւ հենց այս է կրթութեան յառաջադիմութիւնը, որ մի սերունդ բնական կերպով աւանդում է իւր մտաւոր վաստակները միւս սերնդին. մի յառաջադիմութիւն, որ ոչ մի նոր յատուկ օրէնքի կարիք չունի։ Իւրաքանչիւր դար իւր կուցը ձգում է ընդհանուր կոյտի մէջ, և ինչքան որ աւելի ենք ապրում, այնքան աւելի է բարձրանում այս կոյտը, այնքան աւելի ենք բարձրանում նորա հետ միասին և մենք։ Այս շատ ծեծուած, պարզուած բան է, և ես երբեք արդարացի չեմ գտնում այն ձգտումները, որ կամենում են խախտել այս տրամաբանօրէն և պատմականօրէն ակներև ճշմարտութիւնը։

Ահա պատմական հայեացքի մի լաւ օրինակ։ Բացատրութիւն ենք որոնում կեանքի ամենանշանաւոր երևոյթի համար. կարծում ենք, գտել ենք այն ընդհանուր օրէնքը, որ երևոյթի հիմունքն է. կարծում ենք, գտել ենք այն իդէալը, որին պէտք է ձգտէ մարդկութիւնը, և մարդկութեան գործունէութեան կրիտերիումը, և ահա պատասխանում են, թէ գոյութիւն ունի մի կոյտ, որ աճում է իւրաքանչիւր դար և որ այս մի շատ ակներև բան է։ Լաւ է, որ աճում է. ինչի՞ համար է աճում. այս հարցերին չեն պատասխանում և զարմանում էլ են, երբ հոգ ենք տանում, որ վճռուեն այս հարցերը։

Մի ուրիշ տեղ պ. Մարկովը մեր խօսքերը շրջաբանելով ասում է. «իւրաքանչիւր սերունդ խանդարիչ է հանդիսանում նորի զարգանալուն. ինչքան առաջ գնանք, այնքան կ'աւելանայ դիմադրութիւնը, այնքան վատ կըլինի։ Մարդ կարծում է. մի տարօրինակ բան է յառաջադիմութիւնը. եթէ չկատահանայինք պատմութեանը և պարտաւորուած լինէինք Եասնաեա Պալեանայի տեսութեանը հաւատալու. թերևս բանից դուրս դար, որ պէտք է հաւատայինք, թէ աշխարհը շարունակ թուլացել է ու թուլացել հազարամեայ դիմադրութիւններից և թէ նորա մահը շատ հեռու չէ, այլ դուռը ծեծում է» (Ibid., 152 եր.)։

«Լաւ է յառաջադիմութիւնը»։ Ո՛չ, շատ վատ է. ես հենց միայն այս մասին էի խօսում։ Ես չեմ հետևում յառաջադիմութեան կրօնին, իսկ հաւատից զատ չկայ մի բան, որ ապացուցանէ յառաջադիմութեան անհրաժեշտութիւնը «Մի՞թէ աշխարհը անընդհատ թուլացել է ու թուլացել»։ Հենց միայն այս էի աշխատում ապացուցանել, այն տարբերութեամբ միայն, որ թուլանում է ոչ թէ ամբողջ մարդկութիւնը, այլ նորա այն մասը, որ ենթարկուած է պ. Մարկովի պաշտպանած կրթութեան գործունէութեանը։

Ահա թէ որտեղ է մէջտեղ դալիս պ. Մարկովի պատմական հայեացքն իւր կատարեալ փայլով.

Լ. Ն. Տաղսոյ.

ՀԵԼԼԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՐԸ

(Քաղուած Մարբուրգի համալսարանի յունա-հռովմէական ուսուցչապետ Բ. Նիզէի տեսչական ճառից, որ ճա խօսել է 1900 թի հոկ. 14-ին).

Կլասիք հին դարը, որի մասին գրական աշխարհը զմայլմունքով խօսում ու գրում է, նորի հետ համեմատած շատ փոքրիկ էր։ Մեր ժամանակի դիտութիւնը ընդգրկում է ամբողջ երկրագունդը, մեր հետազօտութիւնները հիւսիսային բևեռից մինչև հարաւայինն են ձգում, մեր վաճառականութիւնը կապուած է այնպիսի երկիրների հետ, որոնց մասին հին-դարը իսկի գաղափար չունէր։

Հին-դարի պատմական կեանքը սահմանափակուած էր միջերկրական ծովի ափերի վրայ, այդ ծովի շուրջը նստոտել էին ժողովուրդները, ինչպէս գորտերը մի աւազանի շուրջը (Պղատոն)։

Յունաստանն է այն երկիրը, որ հին պատմական կեանքն ու քաղաքակրթութիւնը իր մէջ ամփոփեց և հելլէն ժողովուրդը իւր այդ քաղաքակրթութիւնը վաճառականութեան և գաղութների միջոցով տարածեց միջերկրական ծովի ափերի վրայ և Հռովմը վերցնելով իր վրայ, հաղորդեց հիւսիսային ազգերին՝ Եւրոպային։ Իսկ Արևելքը այդ քաղաքակրթութիւնից բաժին ստացաւ Աղէքսանդր Մեծի և նորա յաջորդների օրով։ Հելլենականութեան այս շրջանը, որ համաշխարհային նշանակութիւն ունի, անուշադրութեան մատնուած էր, մինչև որ Joh. Gust. Dreysen ճանապարհ բացաւ և ուրիշ հետախուզողները ցոյց տուին թէ՝ հելլենականութեան այս դարը համաշխարհային քաղաքակրթութեան պատմութեան համար ինչ հսկայ նշանակութիւն ունի։

Երբ Աղէքսանդր Մեծը իւր դէպի Ասիա կատարելիք արշաւանքն սկսեց, յոյն քաղաքակրթութիւնը իւր բարձրագոյն դադաթնակէտին էր հասել։ Գրականութիւնը, դիտութիւնը, դեղարուեստը հասունացել էին և մարդկային մտածողութեան և հետազօտութեան անլուծելի պրոբլէմների առաջ էր կանգնել յոյն ժողովուրդը։ և տարածել էր արդէն իւր քաղաքակրթութիւնը Միջերկրականի հիւսիսային և հարաւային ափերին և հելլենացրել էր այդ ժողովուրդը։ Աղէքսանդր Մեծը տարաւ այդ Ասիայի խորքերը՝ պարսկական տիրապետութեան բոլոր սահմանները։ Նա բռնի կամ սիրով ընակեցրեց յոյներին նոր

տիրապետած երկիրներում և նոցա օգնութեամբ կամեցաւ աքամենեանների հսկայ պետութիւնը նորից վերակենդանացնել։ հաստատելով խաղաղութիւն այդ երկիրներում՝ ծաղկեցրեց վաճառականութիւնն և արուեստը։ Բայց, ափսոս, նա շուտ մեռաւ։ Նորան յաջորդող զօրավարները յարատև կռիւներում լայնատարած պետութիւնը բաժան բաժան արին, Պաղոմէոսը ժառանգեց Եգիպտոսը, Անդիկոնոսը՝ Մակեդոնիան և Սելևկոսը՝ Ասիան, որից շուտով բաժանուեցին կրկին Պերգոմանը, Կապադովկեան և Հայաստանը։ Սակայն չնայած դորան, Աղեքսանդր յաջորդները ջանք էին թափում յոյն տարրը և յունական կեանքը ծաղկեցնել իրենց սահմաններում. ինք՝ բուն յունաստանը կիսանկախ դրութեան վերածուեց, յոյն գաղութները Եգէական և Սև-ծովի ափերին անկախ հռչակուեցան։ Հռոդոս կղզին հին դարի Վենետիկը դարձաւ լուր քաղաքակրթութեամբ և վաճառականութեամբ. նոյն իսկ Պարսկաստանի խորքերում, ուր յոյներն ու մակեդոնացիները տեղաւորուել էին, նկատուեցան նոքա իրր արտօնեալ տարր և առանձնաշնորհեալ ժողովուրդ, այս պատճառով նոքա կարողացան ազդել շրջակայ ժողովուրդների վրայ և տարածել իրենց լեզուն, սովորութիւններն ու կրօնը։ Պարսկաստանի պաղաբեր երկիրներում յոյն գաղութները կարճ ժամանակում շքեղացան—փարթամացան. նոցա շարժուն կեանքը բազմակողմանի դարձաւ և երբէք չկտրուեց մայր հայրենիքից. միայն նոր արուեստը իր գոյնը մի քիչ փոխեց, դասական արուեստի նախկին հանդարտութիւնը դարձաւ շարժուն և կրքոտ, Նեոպլատները, Լաոքոնը, մեռնող Գալլեացին, Փուշ դուրս քաշողը և Բելվեդերի Ապօլոնը հելլենականութեան արդիւնք են։ Բանաստեղծութիւնը դառնում է թեթև, բայց պիտի ասել, որ այս ժամանակ սկիզբ է դրւում գրականութեան այն բոլոր տեսակներին, որ այժմ մենք ունենք. այնպէս նաև գիտութեան ճիւղերը, ինչպէս են աստղագիտութիւնը, մաթեմատիքը, մեքենագիտութիւնը, բժշկութիւնը և սոցա հետ պատմական առարկաները. այս դարում շատ գիւտեր են եղել. օրինակ Կոպերնիկոսի վարդապետութիւնը արևի սիստեմի մասին իրրև հիւպոթէզ դրուած էր արդէն այն ժամանակ. կարելի է ասել ուրեմն, որ հելլենականութիւնը հին-դարու գիտութեան շրջանն էր։

Հելլենացումը աւելի կատարեալ, աւելի արագ և աւելի հեշտ տարածուեց Եգիպտոսում. Պաղոմէոս Ի-ը և նորա յաջորդները յոյն ոյժերի օգնութեամբ վերակենդանացրին փարաւոնների աշխարհը. մի խիստ կենդրոնացուած իշխանութեամբ, դեղեցիկ կերպով կարգաւորուած պաշտօնէութեամբ և հարկի

ոիստեմով թէ՛ իրենց աշխարհը հարստացրին և թէ՛ իրանք հարբստացան և այդ հարստութիւնը գործ դրին հելլենականութիւնը ծաղկեցնելու։ Նոքա յարաբերութեան մէջ մտան մայր երկրի՝ Յունաստանի և մանաւանդ Աթէնքի հետ և Աղէքսանդրիա մայրաքաղաքը դարձրին հելլենականութեան վառքի տաճար։ Այս նոր Աթէնքում պտղոմեների կողքին բարձրացան մուզէումները կամ ճեմարաններ, ուր գիտնականներն էին հաւաքւում վիճելու։ Պտղոմէոս I-ը հիմնեց Աղէքսանդրիայի նշանաւոր մատենադարանը և փոխադրեց, իսկ Պտղոմէոս II-ը արուեստի հին և նոր արդիւնքներով զարդարեց (285—247)։ Կալիմախոսի և Թէոքրենի պէս բանաստեղծները այստեղ ծաղկեցին, այստեղ էր նշանաւոր բժիշկը Հերոֆիլոսը, որ անդամահատական ուսումնքներով էր զբաղւում, այստեղ գործեց և ուսոյց Մաթեմատիկոս Եւկլիտէսը։ Նշանաւոր մեքենագէտ Արխիմեդէսը Սիրակուսի պաշտպանը, այստեղ իւր ուսումն առաւ։ Իսկ Երատոսթենէսը այստեղ մատենադարանապետ էր, որը գիտական աշխարհագրութեան և քննադատական պատմութեան հիմքը դրաւ։ Ոքա այն մարդկանց դասին են պատկանում, որոնց քաղաքակիրթ մարդը երբէք չպիտի մոռանայ։

Պտղոմեանք մինչև Քր. 200 տարի առաջ նշխում էին Միջերկրական ծովի վրայ։ Հիւսիսային Աֆրիկան, Կիւրենէն, Բարքոն, հարաւային Ասորիքը, Պաղեստինը, Կիպրոսը, Փոքր-Ասիոյ հարաւային ափերը։ Եփեսոսը, Սամոսը նրանց ձեռքում էին։ Նոքա Կարմիր ծովը միացրին Նեղոսի հետ և այդպիսով յարաբերութիւն ստեղծին Աֆրիկէի արևելեան ափերի հետ, որտեղից նոքա փղեր էին ձեռք բերում։ Նեղոսի ակունքները փնտռելով, նոքա հասան մինչև Եթիոպիա, մինչև հասարակածային Աֆրիկա։ Այս միջոցին դանուեցաւ նաև Եղիպտոսից դէպի Հընդկաստան գնալու ճանապարհը և եթէ արաբ ծովահէնները չլինէին, այս երթևեկութիւնը գնալով պիտի մեծանար։

Եգիպտոսից յետոյ հելլենացումը պարարտ հող գտաւ Փոքր Ասիական երկրներում։ Եփեսոս, Զմիւռնիա, Մագնեզիա, Սարդէս նոցից ծաղկեցին ու բարգաւաճեցան և քաղաքակրթական նշանակութիւն ստացան։ Պերգամոնը, որը սկզբում մի աննշան աւան էր, դառնալով նոյնանուն թագաւորութեան մայրաքաղաք, կարճ միջոցում այնպիսի բարձրութեան հասաւ, որ իւր արուեստով և գիտութեամբ մրցում էր Աղէքսանդրիայի հետ։ Նոքաշէն Նիկոմիդեան արևելքի համբաւաւոր քաղաքներից մէկը դարձաւ։ Այս քաղաքակրթական հոսանքը այնքան զօրեղ էր, որ բարբարոս ժողովուրդների թագաւորները՝ Միթրիդատն ու Տիգրանը կարևոր էին համարում հելլէն ժողովուրդը

բռնի կամ սիրով իրենց մայրաքաղաքներում ընակեցնել և նրանց ձեռքով իրենց երկրի քաղաքակրթական մակերևոյթը բարձրացնել։

Սիրիան, որը մասամբ Պաղեստինայի և մասամբ Սելևկեանների էր պատկանում, համարեա՝, ամբողջովին հելլենական էր։ Տիրոս, Սիդոն և Անկալոն փիւնիկեան քաղաքներում յունական-նութիւնը ամուր պատուաստուեցաւ, իսկ Անտիոքեան յայտնի է, որ աշխարհի մայրաքաղաքը դարձաւ։ Նա իւր գեղեցկանիստ վայրով և շրջապատուած հրաշալի արուարձաններով Աղեքսանդրիային դերազանցեց։ Միջագետքն անգամ վերակենդանութեան նշանները էր ցոյց տալիս։ Մծբին, Բաբիլոն, Անտիոքիա և Սելևկիա անունները բաւական են ցոյց տալու, որ հին դարու ազնիւ յոյն տարրի ձեռքը այնտեղ էլ գործօն էր։ Այստեղից մինչև Բաքտրիա տանող ճանապարհը յոյն գաղթականութիւններով բռնած էր։ Մերվը, Հերատն և Քանդահարը հելլենական քաղաքներ էին։

Հելլենական քաղաքակրթութեան այս հոսանքն ի նկատի ունենալով միայն կարող ենք հասկանալ, թէ ինչպէս պարթևները, որ Աղեքսանդրի մահուանից հաղիւ մի դար յետոյ (240 ա. Քրիստոսից առաջ) դուրս բարձրացրին և մակեդոնացիներին խլեցին մէկ միւսի յետևից զանազան նահանգներ, այնուամենայնիւ հելլենականութիւնը իրենց գործօն ոյժ ճանաչեցին։ Պարթև թագաւորները անուանում էին իրենց հելլենասէր, յոյն քաղաքները մնացին մասամբ ինքնակալ և պարթև թագաւորների դրամները յունական դրոշմով և վերտառութիւններով կարուեցին։

Աւելի զարմանալի երևոյթ է յունական թագաւորութիւնը Բակտրիայի և Հնդկաստանի սահմաններում։ 240 թուերին Բակտրիայի յոյն տեղապահը իրեն անկախ յայտարարեց և ժամանակի ընթացքում այս թագաւորութիւնը կռիւ մղելով պարթևների և շրջակայ վայրենի ցեղերի հետ, իւր սահմաններն ընդարձակեց։ Իրանի և Թուրքեստանի արևելեան նահանգները ենթարկուեցան այդ իշխանութեանը, որի գնդերը մինչև Քաշկար հասնելով, առաջին անգամ չինաց հետ յարաբերութեան մէջ մտան, հարաւում Հինտուքուշը և Ինդուս կոչուած երկիրը յունական գերիշխանութիւնը ճանաչեցին։ Սոցա դրամները յունական և արիական վերտառութիւն են կրում, իսկ Հընդկաստանում յոյն տարրը ժամանակի ընթացքում կտրուելով բուն հայրենիքից, բուդդայականութիւն ընդունեց։ Քիչ յետոյ անվերջ դահակալական կռիւները խափանեցին այս իշխանութեան հիմքը, մինչև որ 140 թուերին սկիւթական բարբարոս և

թափառական ցեղերը բոլորովին կործանեցին. սակայն Հնդկաստանում մի անդամ էլ յոյները գլուխ բարձրացրին և նրանց վերջին նշանաւոր Մենանդրը թագաւորը տարածեց իւր իշխանութիւնը և մեռնելուց յետոյ մի արդարակորով և քաջ իշխանի անուն թողեց. բայց սկիւթերը այստեղ էլ հասան և ջարդ ու փշուր արին այս իշխանութիւնն ևս:

Մակեդոնացիների և ռահասարակ հելլէնների յառաջխաղացումը Ասիայում այն կարևոր հետևանքն ունեցան, որ յոյն գիտութիւնը, փիլիսոփայութիւնն ու արուեստը միջազգային դարձան. այս բանը վկայում է մեզ ստոյիկեան փիլիսոփայութիւնը և մանաւանդ նորա հանրամարդկային բարոյական տեսութիւնը: Բայց այստեղ պէտք է նկատել, որ հելլէնները իրենց յառաջխաղացման միջոցին Ասիայում բոլորովին վայրենի բարբարոսների չհանդիպեցին, ընդհակառակն Բաբելը ու Եգիպտոսը որսրան էին հին քաղաքակրթութեան: Աղէքսանդր Մեծը պէտք եղած յարգանքը ցոյց տուաւ ալրող սովորութիւններին ու կարգերին. բուն պարսիկ ժողովուրդը յոյն ժողովուրդին հոմապատիւ նկատուեցաւ, և յոյները չէին քաշւում նորա քաղաքակրթութիւնն ևս իւրացնել: Այսպիսով առաջ եկաւ մի նոր խառնուրդ. փոխադարձ ամուսնութեան սովորոյթն էլ այս բանին մեծապէս նպաստեց. այս երևոյթը ամենից շատ նկատելի է Եգիպտոսում, ուր թէպէտ յոյն տարրը գերակշռող էր, բայց այնուամենայնիւ տեղական լեզուն, կրօնն ու կարգերը չճնշուեցան. չնայած դորան յոյն լեզուն միջազգային և գիտական լեզու նկատուեցաւ: Եգիպտացի Մանեթօն Պտղոմեոս II-ի օրով գրեց Եգիպտոսի պատմութիւնը յոյն լեզուով, որը այդ երկրի պատմութեան կարևոր աղբիւրներից մէկին է: Նոյն բանը արաւ Բաղդէացի Բերոսոսը, (Խորենացու յիշատակած պատմագիրը,) Բաբելոնի և Փիւնիկիայի նկատմամբ. հրէաներն էլ, որ մի փակ կեանքով ապրող ժողովուրդ էին, այս հոսանքից հեռու չմնացին, հելլենական ազդեցութիւնը մուտ գործեց այստեղ Եգիպտոսից. շատով հին կտակարանը յունարէն թարգմանուեցաւ և հրէաների ձեռքով շատ յոյն գրքեր գրուեցան:

Արևմուտքում հելլենականութիւնը ունեցաւ երեք յենակէտեր—Սիկիլեան և Հարաւային Իտալիան, Կարթագէն և վերջապէս Հռոմը. հարկ կայ արդեօք մանրամասն նկարագրել, թէ ինչպէս հելլենականութիւնը այն պետութիւնների հոգին էր: Յոյն բանաստեղծները, արուեստագէտները, մեքենագէտները և ուսուցիչները Հռոմում և ամբողջ Իտալիայում հելլենականութիւն էին պատուաստում, հելլենականութեան այս

յաղթական հոսանքը ողողեց նաև Սպանիա, հարաւային Գաղղիան և մինչև անգամ Մասենիայի երկիրը՝ Նումիդեան: Այս բոլորից յետոյ ի՞նչ զարմանք, որ Ներոնի պէս հոկայ հրէշն անգամ Յունաստան էր դնում իւր աշխարհատարած դլուխը հելլենականութեան որորանում պահելու: Բայց սա բացառիկ երևոյթ չէր. Յունաստանի քաղաքակրթութեան ազդեցութիւնն ու ազդերը և նրանց իշխանները, յոյն ատաուածները, նոցա արձանները և յոյն առասպելաբանութիւնը, որ աշխարհը մուտ չըդործեցին: Իւրաքանչիւր աշխարհի ազգաբնակութիւնը և մանաւանդ իշխանական տները աշխատում էին իրենց մի յոյն ատածուց կամ հերոսից ծագած համարել. Յասոնի և Մեդէայի զրոյցը կարելի էր Հայաստանում լսել. երբ այս բոլորը կատարւում էր, ուր էին դերման ժողովուրդները: Նոքա հիւսիսային և արևելեան Եւրոպայի անտառներում թափառելիս ամենափոքր նշոյլ անգամ չունէին հելլէն քաղաքակրթութիւնից, մինչև որ հռովմէացիք Քրիստոսից յետոյ նոր տիրապետութիւնների շնորհիւ Կելտական տեղերը քաղաքակրթեցին և դերման ժողովուրդների հետ մօտիկ շփման մէջ մտան. որպէս Հռովմը Քրիստոսական եկեղեցու և Կելտական ցեղերի միջոցաւ յունահռովմէական քաղաքակրթութիւնը հաղորդեց դերմաններին և ինքը մեռաւ, ինչպէս դորանից առաջ քաղաքակրթութեան մայրը՝ Յունաստանը մեռել էր: Կարելի է ուրեմն համարձակ ասել, որ Հռովմը միայն միջնորդի դեր է կատարել. արևմտեան Եւրոպան իւր քաղաքակրթութիւնը պարտական է Յունաստանին:

Այսպէս է ընորոշում յարդելի ուսուցչապետը հելլենականութեան դարի նշանակութիւնը ազդերի քաղաքակրթութեան պատմութեան մէջ. և յիրաւի ներկայումս հելլէնականութեան այս շրջանը դրաւում է պատմագէտների և ատատուածաբանների առանձին ուշադրութիւն, որովհետև այդ դարը նկատւում է նաև իբր նախապատրաստական շրջան քրիստոնէական կրօնի՝ եթէ ոչ ծագումը՝ գոնէ արագ տարածումն ու եկեղեցու զարդացման ընթացքը հասկանալու, ահա թէ ինչու Արարատ կրօնական ամսագրի ընթերցողներին անհետաքրքիր չէր լինի մի ամփոփ դաղափար կազմել հելլենականութեան դարի մասին:

Մ. Խ.

ԵՐԿՈՒ ԳԼՈՒԽ ԴՀԱՄՄԱՊԱՏԱՑԻՑ *)

Խորհրդածութեան մասին.

1) Խորհրդածութիւնը անմահութեան ճանապարհն է, թեթևամտութիւնը՝ մահուան ճանապարհ: Խորհրդածութեան մէջ արթուն մնացողները երբէք չեն մեռնում. թեթևամիտները և ապիտները նման են մեռեալներին:

2) Ճշմարտութեան ախոյեանները, նրա համար մաքրընչողները, որոնք խորհրդածութեան են նուիրուած ամբողջապէս, վայելում են այն, և ուրախանում են ընտիրների ուրախութեամբ:

3) Նիրվանային՝ գերագոյն երջանկութեան, հասնում են այդ իմաստունները, իրանք իրանց մէջ խորասուզուած, խորհրդածող. նրանք ունեն բուն զօրութիւնը:

4) Անարատը, սուրբը իր խոհերով և մաքուրը գործերով, օրէնքին հետևողը, խորհրդածող և խոնարհը վեր ի վեր կբարձրանան իրանց փառքի մէջ:

5) Հանապազ արթուն, խորհրդածութեան մէջ մնալով, իմաստունը իր համար անմատչելի կղզի է ստեղծում, ուր չի հասնիլ նրան ոչ մի մակընթացութիւն:

6) Անմիտները ունայնին են ձգտում. իմաստունը պահպանում է իր խոհերը, որպէս լաւագոյն գանձ:

7) Մի՛ լինիր անձնատուր ունայն ցնորքներին, որոյ կրքերի վայելքներին անձնատուր մի՛ լինիր: Միշտ խորհրդածողները միայն հասնում են անփոփոխելի, յաւատեր երջանկութեան:

8) Իմաստունը վերից վեր է նայում անմիտների վրա, անդիտութեան կապանքներից ազատուած, իմաստութեան ժայռատ բարձունքներին հասած. հանգիստ նա նայում է աղմկալից ամբոխի ժխորին, ինչպէս լեռան կատարին կանգնածը նայում է, մեկուսացած, նրանց վրա, որոնք այնտեղ ցաքուում, հոլոում ծփում են:

---

*) Դհամմապատա (Dhammapada) նշանակում է «ճշմարտութեան ուղի», նա, կարելի է ասել, բուդդայականների Աւետարանն է եւ, ըստ աւանդութեան, գրուած է 477 թ. ն. Ք. ծ., Աւելորդ չենք համարում, նմուշի համար, երկու գլուխ թարգմանել «Արարատ»ի ընթերցողների համար.

9) Դատարկ մարդկանց ամբոխի մէջ խոհերով համակուած, արթուն խոր քնի մէջ ընկղմածների մէջ, իմաստունը դէպի հեռուն է ձգտում, նման լաւ (արբնթաց) որսորդաւ նժոյգին դաշտի ձիերի երամակի մէջ:

10) Ինքնան խելացիութեամբ, բանականութեամբ հասատիրապետութեան ատուածների վրա. ժողովուրդը փառաբանում է խելացիութիւնը, իսկ թեթևամտութիւնը ամեն տեղ պախարակում է:

11) Խորհրդածութեան մէջ վայելք է զգում ճգնաւորը. նա փախչում է թեթևամտութիւնից: Կրակի նման, իմաստունը խորտակում է նրան կաշկանդող բոլոր մարմնական և հոգեկան կապանքները:

12) Խորհրդածութեան մէջ վայելք է զգում ճգնաւորը. նա փախչում է թեթևամտութիւնից: Իմաստունը չի կորցնել ձեռք բերած կատարելութիւնը,—նա արդէն մօտ է Նիրվանային:

II.

Զարի մասին.

1) Ով իր մտքով դէպի բարին է դառնում, նորան չարը չի մօտենալ. առաքինութիւն արհամարհողը հակամիտ է դէպի չարը:

2) Եթէ մարդ սովոր է չար գործել, թող նա այլ ևս այն չգործի. թող նա չարը այլ ևս չսիրի. չարին հետևում է տանջանքը, տառապանքը:

3) Եթէ մարդ բարի է գործում, թող նա ուրախանայ բարու համար. նրան ուղեկցում է երջանկութիւնը:

4) Չար գործողը բերկրանքի մէջ է, քանի որ չէ հասել նրա չար գործերի պտուղը, բայց երբ կհասնի այդ պտուղը, այն ժամանակ անօրէնութիւն գործողը աշկարայ կտեսնի իր բոլոր չար արարքները:

5) Առաքինին տեսնում է չար օրեր. նրա բարի գործերի պտուղները տակաւին չեն հասել. բայց երանելի կլինի նա, երբ նրա գործերը բարի պտուղներ կտան:

6) Թող մարդ թեթևամտաբար չմտածի չարի մասին, իր սրտի մէջ ասելով. չէ որ նա ինձ չի դիպչիլ: Ջրի ամանը լցուում է փոքրիկ կաթիլներով. անմիտը ամբողջապէս չարով է լցուում, փոքր առ փոքր չար գործերով:

7) Թող մարդ անհոգ կերպով չմտածի բարեոյ մասին, ասելով իր սրտի մէջ. չէ որ նա ինձ չի մոռանալ: Կաթիլ առ կաթիլ ջուրը լցնում է ամանը,—իմաստունը, անգամ ոսկեառ ոսկեառ բարի գործերով, ամբողջապէս բարիով է լցուում:

8) Որպէս թանկագին ապրանքներ տանող և վատ պաշտպանուած վաճառականը վտանգաւոր ճանապարհներից խուսափում է, որպէս կեանքը գնահատող մարդը խուսափում է թունաւոր օձերից, այնպէս էլ դու խուսափիր չոլոր վնասակար, բոլոր մեղաւոր բաներից:

9) Եթէ մարդի ձեռքը չի վիրաւորուած, նա կարող է օձի թոյնին ձեռք տալ,—առողջ ձեռքին թոյնը վտանգաւոր չէ. միայն նրա համար է չարը անվնաս, ով ինքը չար չի գործում:

10) Ով վիրաւորում է անպաշտպանին, մաքուրին, անմեղին, չարը կընկնի այն անմտի գլխին, որպէս քամու տարածուած փոշին:

11) Նորից մարդիկ վերադառնում են բարիները բարձունքներն են ելնում, իսկ չարերը խորխորատն են գլորուում. ով ազատ է երկրի, աշխարհի բոլոր ցանկութիւններից, նա կհասնի երանութեան:

12) Ո՛չ երկնքում, ո՛չ ծովի խորքում, ո՛չ լեռների կիրճերում,—ո՛չ մի տեղ ամբողջ աշխարհում մարդ իր մեղքից չի թաղնուիլ:

13) Ո՛չ երկնքի բարձունքում, ո՛չ ծովերի անդնդում, ո՛չ ժայռերի պատառուածքներում (խոռոչներում),—ո՛չ մի տեղ ամբողջ աշխարհում ապաստան չես գտնիլ, ուր մահը քեզ չհասնէր, չգար քեզ գտնելու:

Թարգմ. Ա. Եղիազար.

ՆԻԻԹԵՐ ԴԱՒԻԹ ԲԼԿԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ 1)

Մայր Աթոռի Մատենադարանի № 450 (գ. ց. նոր գրչութիւն) կանոնագիրքը պարունակում է իր մէջ՝ ձեռագրի վերջում նաև «Պատմութիւն ինչ ինչ անցից ի Սիւնիսն յետնոց».

1) Դանիել. խմբ. պահում ենք յօդուածի ուղղագրութիւնը.

74 քառածալ երես ընդամենը: Պատմութեան սկզբից պակասում է 20 երես:

Անելորդ է կանգ առնել այդ «Պատմութեան» բովանդակութեան վրա. նա հրատարակուած է 1871 թ. ս. Էջմիածնում Ա. Դուլամիրեանի հրատարակութեամբ:

Այն ձեռագիրը, որ հրատարակել է Ա. Դուլամիրեանը ըստամենայնի նոյնն է, ինչ որ առաջ բերած օրինակը:

Ինչպէս տողևում բերած յիշատակարանը ցոյց է տալիս, ձեռագիրը արտագրած է եղել 1759 թուից առաջ գրուած օրինակից: Արտագրել է «Զմիւռնի» քաղաքում Դանիէլ գրչի ձեռքով. իսկ առաջին յիշատակարանն աւարտել է 1759 թ. յունուարի 20-ին «Ամթելրօդամ» քաղաքում:

Մայր Աթոռի ձեռագիրն արտագրութիւն է Զմիւռնիայում արտագրած օրինակից: Արտագրողն է Եսայի Աւագեան, որ ընդօրինակել է 1847 թ. ս. Էջմիածնում:

Սահմ. ձեռագրի մէջ ամենահետաքրքրական մասը, որով և նա էապէս տարբերւում է Դուլամիրեանի հրատարակած «Դաւիթ բէկի» պատմութիւնից, վերաբերում է Դաւիթ բէկի զօրականներից մէկի՝ Տէր Աւետիքին:

Զամչեանն իր եռահատոր Հայոց պատմութեան մէջ (III. հատոր 200 երես.) ասում է, որ Դաւիթ բէկի զօրական Տէր Աւետիքը Հայաստանից գնում է «Դաղատիա» և ապա թէ նեղումն է ոտանում Հռոմի Քահանայապետից:

Դաւիթ բէկի պատմութեան հրատարակողը մի ծանօթութեան մէջ (70 երես) տարակուսանք է յայտնում այդ առթիւ և զարմանում, թէ Զամչեան որտեղից է առել այդ հանգամանքը: Եւ երբեք մինչև օրս էլ տարակուսելի և չստուգած էր մնում այն հանգամանքը, թէ ճիշտ որ Տէր Աւետիքը գիմած լինի Հռոմի քահանայապետի ներողամտութեանը:

Մեր ձեռագիրը, որ արտագրած է Դաւիթ բէկի մահուանից 31 տարի յետոյ, ուրեմն ժամանակակից մարդու ձեռքով, ասում է. էլ չենք ասում, որ պատմութիւնն ինքը գրուած է ժամանակակցի ձեռքով: Բերենք ձեռագրի յիշատակարանից կտորներ:

«Բայց զտէր Աւետիսն փաշայն եթող ի Հալիձոր, երբև նոքա չուեցին անտի, այլ զօրք Օսմանցւոց անդր հասին. նորա փախուցեալ ի նոցանէ, անկաւ առ փաշայն, որոյ հրամանաւն առեալ զընտանիսն՝ գնացեալ ընակեցաւ ի Դաղատիա. և էառ զներումն ի Հայրապետէն Հռօմայ: (61 երես.):

Նաև «Այլ և Տէր Աւետիսն ի նոյն Հալիձոր էր 468 արամբք: Այս այն Տէր Աւետիսն էր, որ արար կբազում մեծամեծ քա-

ջութիւնս, որպէս և ի պատմութեանս իսկ տեսանի. զի էր կարի քաջ և արիասիրտ և զօրաւոր յոյժ, բանիւք և գործովք: Եւ զոմն այսորիկ յօրմէ հետէ հեռացեալ ի հայրենի յերկրէն՝ պանդխտեցաւ ի Դաղատիա: Բազումք յորդորէին զնա ի Հայրենի Նորին գաւառէ անդրէն դառնալ առ նա, և պաշտպան լինել երկրին. բայց նա հրաժարէր յաղագս պատուոյ քահանայական կարգին»: (66 երես.):

Առաջ բերածս հատուածները ցոյց են տալիս, որ Տէր Աւետիքը Դաւիթ բէկի կուլնեերից յետոյ մի առ ժամանակ մաքառելով հայրենիքի արիւնարբու թշնամիների դէմ, անզօր է գտնում իրեն և իւրայիններին շարունակել մաքառման գործը, ու յուսահատած թողնում հեռանում է հայրենիքից և ապաստանում ի Դաղիա:

Դաւիթ բէկի պատերազմների և նրան յարակից անցքերի պատմութիւն գրողը դժբախտաբար չի բացատրում, թէ Տէր Աւետիքն ի՞նչ առիթ ունէր Հռոմի պապի ներողամտութեանը դիմելու, երբ նա իր հայրենիքին ցոյց տուած ծառայութեան ամբողջ ընթացքում և ոչ մի կերպ չէ շոշափել կաթոլիկ եկեղեցու շահերը: Արդ, նա ինչի՞ համար պիտի ներում ստանար:

Մտածել ձեռագրի մէջ կեղծիք մտած լինելու մասին շատ դժուար է: Մենք հակուած ենք կարծելու, որ այն ձեռագիրը, որից արտատպուած է Դաւիթ բէկի պատմութիւնը, դժուար թէ չունենար այն կտորները, որ մենք առաջ բերինք: Մեզ թւում է, որ պարզամիտ ազգասիրութեամբ «Դաղատիա» գաղթելը վերածուել է երուսաղէմ ուխտ գնալուն և Հռոմի քահանայապետից ներում խնդրելը՝ Հայոց պատրիարքից ներում խնդրելուն և այլն:

Պակաս հետաքրքրական չեն նաև պատմութեան վերջին էջից արտագրողների յիշատակարանները, ուստի և կարևոր եմ համարում ամբողջովին առաջ բերել:

Յիշատակարան I.

Եւ ի տեսանելն իմ պատմութեանս, ցանկացաւ սիրտ իմ, զոմն գոլոյն իմոյ հայրենեաց, յաղագս որոյ առի օրինակս զայս, յորժամ ընթերցումք, տեսանեմք թէ որպիսի յաղթութիւնս արարին, որպիսի մարտս մարտեցան արքն քաջք, և երանի թէ միշտ զմիմեանս յորդորելով հետևեսցուք այսպիսի քաջութեան, դնեա աղաւեսցուք զմեզ ի ծառայութենէ այ-

լաղդեաց, որ կամք գերեալք ի ներքոյ լծոց նոցա, որ կարծեմ աղգն մեր առաւել չարչարին ի ձեռաց մահմեդականաց՝ քան զիսրայելացիքն ի հնումն այլազգեացն որպէս տեսանեմք աչօք մերօք, երկիրն մեր տիրապետեալք, վաստակքն մեր ուտեն և յորժամ գաղանաբար զմեզ հալածեն, ի թշուառութեանն, զի՞նչ է պատճառ այսր ամենայնի, եթէ ոչ ասելն զմիմեանս:

Այրն քաջ Դաւիթ ըէկն, բարի խորհուրդ ունելով վասն ազատութեան ազգին, և մինչ էր կենդանի աջողութիւն գործոյն իսկ յետ մեռանելոյ նորին, արմատն կորստեան և չար ազանդն անմիաբանութեան մտեալ ի մէջ զօրաւորացն Դաւթի. նոյն ժամայն ցրուեցան և եղեն իբրև զչեղեալս, որպէս պատմութիւնս իսկ տեսանի: Յաղագս որոյ եղբարք, սիրեսցուք զմիմեանս, զանձն դիցուք ի վերայ բարեկամաց, և միշտ ընթեռնուցումք զԱստուածային պատուիրանն՝ պահելով զնա՝ ցանկանալով ի հայրենեաց դոնեա յարուսցէ Տէր ի մէջն մերում այր զօրաւոր քաջ, զի անցուսցէ զմեզ ի Յորդանան գետ, որպէս հնումն Յեսու որդի Նաւեա: (Զի ողորմած է Տէր և գթած. մեղքն մեր որոշեն ի մէջ մեր և ի մէջ Տեառն) ապա թէ պահեմք զհրամանս նորա, յուսամք զի նա ցրուեսցէ զայլազգիսն յերեսաց մերոց, որպէս եօթն ազգն յերեսաց որդւոյն Իսրայէլի և ի մի հատ ժողովեսցէ զթափառեալ զազգն Յաբեթեան:

Եւ աւարտելով յիշատակարանս եղև ի Նաւահանգիստ քաղաքն, Ամսթելրօդամ. թուոջ Փրկչին 1759. յունվարի 20ին:

Սակայն ազգս սրկեալ՝ մաղթեմ ընթերցասիրացդ, եթէ հանդիպիցք այսմ պատմութեանս, արժանի վարկջիք ի մաքրափայլ յաղօթս զմիով Հայրմերիս զանարժան Յովակիմն Ռասիա-յէլեան Ղավանցւոյս, և ի յԱւանէն Եկղաստեանց ի տանէն Խօջենց, և զմայրն իմ Հռիփսիմէն, և զեղբայրն իմ զԹովման և յիշողդ լիջիք յիշեալ առաջի Աստուծոյ. ամէն:

Դարձեալ յայտ լիցի սիրելի և բարեպաշտ ընթերցողացդ, զի ի 39 թղթահամարի անտ յիշի ի քաջաղօր քահանայէն Աւետիքէ, թէ յետ այսքանեաց յաղթութեանցն և ի մրցմունս սաստկալի պատերազմացն, յերկեալ ի վաշայէն, զի մի ըմբռնեալ սպանանիցեն, հանդերձ ընտանեօքն վանատական լեալ գայ հասանի ի յերկիրն Դաղատիա. և անդ ենթարկեալ զինքն ընդ հրամանօք Պապին (ընկալնոյր զներումն մեղանացն) այլ արդէն սակաւիկ ձանձրութիւն տալս իմ սիրեցեալդ, միայն հրաբորբոք բաղձանացս վասն հայրենեացս իմոց առ այս գործ ձեռնամուխ արար ինձ. սակայն չգիտելով զանունն պատմագրողին զի մարթանայի ընդ նմին ևս պատասխանել նմա՝ վասն

գրելոյն իւրոյ թէ՝ (ընկալաւ զներումն ի սրբազան Պապէն) բայց այս և եթ ունիմ ասել յԱւետիք քահանայէն, զի աւաղ կուրութեանս մատց զի զառաջին սրբութիւնն անարգեալ լեր զշունս անդրէն ի դիսնատս իւրեանց դառնան ըստ առաքելոյն։ Քանզի ըստ ճշմարիտ բանիս լաւ էր նմա թէ՝ բնաւ չէր ծանեալ զարդարութեան ճանապարհն, քանթէ ծանեալ, և յետս եկայց ի սուրբ պատուիրանէն, որ նորա աւանդեցաւ, և զրկեցաւ ի հաղորդութենէ ժամանակացս սրբոյն Սիօնի եկեղեցւոյս Հայաստանեայց, որ ի ձեռն բաղմաղան չարչարանացն Գրիգորոսի սրբոյ լուսաւորչին ածաք ի դիտութիւն ճշմարտութեան յԱւետարանի։ Այլ զի ըստ սրբոյն Յովհաննու ել ի մէնջ, այլ ոչ էր ի մէնջ, զի եթէ ի մէնջ էր, մնայր առ մեզ, և սիրեաց զիսառ աշխարհի քան զիսառս Աստուծոյ։

Ո՞վ մեծի յանդգնութեանս առ ի շահելոյ դմարմինն, առ ժեաց զհոգին իւր։ Ամենի մեծ և գործ սարսռելի, զիսան սիրելոյ զհեշտութիւն աշխարհիս այսորիկ. զանձն իւր ի մահ մատնեաց. նա և զատեալ զհայրենիսն (զիսան այր պարտիմք մինչ ի մահ պատերազմիլ, զի թերևս կալել այլապղեաց), յորոց վրայ կատարեցաւ բանն Մովսիսի քերթողահօրն մերոյ, որ ասէ զօրականք անարիք, անապարծ զինատեացք։

Եւ թողեալ զհայրենիսն, զիսանատակն լինի ի սահմանս վանիցն, զինչ է դուցէ, զի սակաւիկ կեանս իւր վայելեսցէ. մինթէ ոչ գոյին այլ զորսմն զոր ունէր ի արտին իւրոյ ոչ եթող զնա ի բաց, այլ ածեալ եբեր զնա ի Բաբելոն, ուր պառնիկն տիրէ, և սա ի թիւս պաշտօնէին զաղտնքն համակարդեալ եղև նմա երկրպագու, և բարեպէս զանուն ախթարմա ժառանգեաց։

Արդ՝ առ ձեզ են այս գոյզն բանք իմ, ով հօտք Քրիստոսի, ժողովեալք հանապազորդ ի գաւիթն մերն սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց, որք կրէք ձեր բաղումք են յերկիրս, զիսան այն, զի պահեցիք զհաւատն ճշմարիտ, նա և զանբիծ և զիրիսարար աւանդութիւնս հարցն սրբոյ, և ընթացայք զյետս շաւղաց նոցա, և ոչ եատուք զլսելիս ի յառաստել կործանեալ վարդապետութեանս դոզոցն, որք մոեալ ընդ դուռն ոչխարաց այլ և այլ ելին։

Ո՞ թէ զի պահեսցէ թագաւորն Քրիստոս զձեզ ի ընաւին ալկանացն, զի մի պառնիկեցիք ի յաղքատութիւն Քրիստոսի, այլ զիսաչն ի յուսս ձեր բարձեալ, սակաւիկ մի չարչարեցիք ընդ Քրիստոսի ի ներկայ յաշխարհս, զի և դուք ի յապագայն ժառանգեալ զիսառ՝ նոտջիք սիրել աշխարհին, ուր լսելոյ էք

զբերկրալի ձայնս առ ձեզ թէ՝ աղնիւ ծառայք և բարիք և հաւատարիմք, զի որովհետև սակաւուցն հաւատարիմ եղէք ի վերայ բազմաց կացուցից զձեզ, մտէք յուրախութիւնն տեառն ձերոյ. և անդ վայելէցէք զանճառ բարիսն, որոյ և մեզ մասն և բաժին եղիցի:

Մնամք բարեպաշտութեան ձերոյ ծառայք Յովակիմ Ռափայէլեան Ղափանոյ և Հնչին Սիմէօն Կարապետեան զՄիւռնացի.

Սակաւագիծ ճառս վիպական.
Վիպէ զարատս քաջին Դաւթեան,
Որ ի յԱքանտ տան Սիւնական
Վասն հաւատոյ Քրիստոսական,

Զօղեալ ելով խորշանկեան,
Ի տան մեծի քաջազարմեան,
Առտուածատրոյ մեծ արքայեան.
Յորմէ առաք զպատճէն սորայն.

Զեռամբ Դանիէլ Հնչին զպրի,
Յօրինակեալ գծագրի.
Ի ծովեղերեայ մեծ քաղաքի,
Որ և զՄիւռնին անուամբ հրճուի:

Եռամ բաւական առ քեզ կալեալ.
Զգայարանքդ վեցապատկեալ,
Երբ թիւն Հայոց տնտես յայտնեալ
Լեր յաղօթսդ զհէքն յիշեալ: . . .

Եւ Քրիստոսի յուսոյն մերոյ փառք յաւիտեանս ամէն:

Վերոգրեալս գաղափարեցաւ ի նօտս և կոնդակագիրս գրոյ մերոյ ձեռամբ յետնեալ բուրվառակալ սպասաւորի Եռայեայ Աւագեան. ի 5 մարտի 1847 ամի ընդ հովանեաւ հաչակաւորս և բարձրապատիւ ուխտի գերագահ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի. ի Հովուապետութեան 5-ն Ներսիսի վսեմափառ վեհի և յինքնակալութեան բարձր և յաղթող Օգոստի, հոգաբարձու և կառավար Հայոց և Մասկևի յառաջներորդ և խաչագրեացն Նիկողայոսի:

Առսէն վ. Ղլդճեան.

1905 թ. մարտ 9.

ԿԱՐԱԳ

Ի՞նչպէս պէտք է լուացնել փչացած կարագը կամ իւղը.

Բորբոսը և այլ թթուեցնող նիւթերն ընկնելով կարագի խոնաւ մակերևոյթի վրայ, սկսում են փչացնել նախ նորա երեսի և ապա մէջի մասերը: Շատ անգամ այս կամ այն պատճառով փչացած քաղցը սերից պատրաստած կարագը ուղղակի գործ են ածում կերակրի համար, բայց երբեմն թարմ ձևով գործածելու համար նախ աշխատում են ուղղել:

Փչացած կարագն ուղղելու համար պէտք է գործ դնել հետևեալ միջոցը: Նախ և առաջ հարկաւոր է երեսից վերցնել այն շերտը, որի գոյնը նկատելի կերպով փոխուել է և աւելի կակղացել, թուլացել է. կարագի այդ շերտը կարելի է հալել ու այնպէս գործածել, իսկ մնացածի վրայ պէտք է աղ ցանել և այդպէս 1/2 ժամ թողնել: Այդքան ժամանակն անցնելուց յետոյ կարագը պէտք է ջուրը դնել, որ աղը լուծուի: Առաջին ջուրը թափելուց յետոյ կարագի վերայ պէտք է նորից ջուր լցնել, միայն այս վերջնի մէջը սոդա պէտք է լուծուած լինի (մի մեծ բաժակ ջրի մէջ մի թէյի գդալ սոդա): Այս ջրի մէջ կարագը 10 անգամ պէտք է շաղախել, ապա դուրս հանել և կրկին մաքուր ջրի մէջ երկու անգամ լուանալ: Սրանից յետոյ պէտք է կարագը քամել, չորացնել, որից յետոյ արդէն գործածութեան համար պետքական կհամարուի: Սակայն աւելի լաւ է փորձել կարագի համը և եթէ նա դեռ իւր դառն համից և կողմնակի հոտերից ազատ չէ, այն ժամանակ լուացումը պէտք է կրկնել սոդա լուծած ջրում: Եթէ առաջուց կարագի երեսը վերցրած չլինէինք, ստիպուած կլինէինք շատ երկար լուանալ, որ իհարկէ ցանկալի չէ, որովհետև շատ տրորելով կարագը կարող է ճրագակալուել, փչանալ:

Փչացած կարագը կամ իւղը ուղղել կարելի է նաև հալելով: Քաղցը կամ թթուած սերից ստացուած փչացած կարագը կամ փչացած հալած իւղը պարունակում է իւր մէջ բորբոս կամ միկրոօրգանիզմներ, որոնք և կարագի կամ իւղի փչանալու պատճառ են դառնում: Հալելու նպատակը նախ այն է, որ մի կողմից սպանուեն, ոչնչանան և կարագից բաժանուեն այդ թթուեցնող նիւթերը, իսկ միւս կողմից լուծուեն և դուրս ելուեն աւելորդ և վնասակար մասերը: Կարագը կամ իւղը երկար ժամանակ ջրի հետ եռացնելով՝ մենք այդպիսով սպանում, ոչնչացնում ենք թթուեցնող նիւթերը, որոնք եփուելով

խառնուում են փրփուրի հետ կամ տակն են ինջնում։ Կարագի վերլուծման ժամանակ գոյացած նիւթերը մասամբ ցնդում են, մասամբ էլ լուծուում են ջրում և նստում յատակի վերայ։ Բայց որպէս զի կարագի մնջից բոլորովին հեռացուեն այդ խառնուրդները, պէտք է շատ ջուր վերցնել և փրփուրը երեսից բոլորովին մաքուր վերցնելուց յետոյ թողնել, որ իւղը հանդարտ սառչի, իսկ յետոյ այնպէս զգուշութեամբ դատարկել, որ տակը նստած ջուրը չխառնուի։ Առաջին առատ փրփուրը վերցնելուց յետոյ իւղի երեսին պէտք է լցնել քիչ աղ, միայն մի բարակ շերտ։

Աղն անցնելով իւղի բոլոր շերտերով՝ իր հետ ամանի յատակը կիջեցնէ իւղի մէջ եղած ջուրը և նորանում լուծուած նիւթերը՝ գլխաւորապէս թթու մասնիկները։ Իւրաքանչիւր 10 գրվ. համար պէտք է դրծածել մի բուռ աղ։ Այս նկարագրած եղանակով ջուրը կարագից խլում (դուրս է բերում) թթու և ուրիշ լուծուող խառնուրդներ. աղ աւելացնելն ևս օգնում է նորան այդ բանում։

Սակայն ջուրը նախ և առաջ ինքն անընդունակ է թափանցելու իւղի զանգուածի մէջ (իւղը ջրի հետ չի խառնուում), հետևապէս և անկարող կլինի կատարելապէս մաքրել, լուանալ նորա բոլոր մասնիկները. երկրորդ, որ նա մասամբ մնում է իւղի մէջ, հետևապէս և կթողնի նորանում այն խառնուրդների մի մասը, որոնց լուծել է իւր մէջ իւղից զատելու համար։ Ահա այս պատճառով փչացած կարագը հալելու համար գործ են դնում նաև սոդա, որը միանալով խառնուրդների թթու մասերի հետ, նորանց ոչնչացնում է, չէզոքացնում է նորանց թթուութիւնը։ Սոդա կարելի է զանազանակերպ գործադրել. այսպէս օրինակ, կարելի է լուծել այն ջրի մէջ, որ նախքան հալելը լցնում են կարագի վերայ. այն ժամանակ ջուրը եռալիս կլուանայ և կմաքրի կարագը և միաժամանակ դուրս կբերի նորանից թթուութիւնը և կը չեզոքացնի նորան։ Սոդա կարելի է լցնել նաև յետոյ, երբ կարագը սկսում է հալչել։ Վերջապէս կարելի է նաև ցանել աղի հետ խառնած։ Ամեն կերպ պէտք է աշխատել քիչ սոդա գործածելով նպատակին հասնել. ահա այս պատճառով խորհուրդ ենք տալիս սոդան նախ խառնել աղի հետ և ապա, երբ փրփուրի մեծ մասը երեսից քաշած կլինի, ածել իւղի վերայ։ Փրփուրն ինքը կտանի իւր հետ թթուների մի մասը, հետևապէս և թթուների միւս մնացած մասի համար աւելի քիչ սոդա կհարկաւորուի։ Աւելի լաւ կլինի, որ բոլոր սոդան միանգամից չլցնուի, մասաւորապէս քառորդ մասը թողնել և երբ

լուղով ամանը վերջնականապես յետ կդրուի, թեթև կերպով ցանել պէտք է լուղն երեսին:

Լուղն համը կանոնաւորելու համար, բացի վերոյիշեալ եղանակներից, գործ են ածում նաև մի քանի ուրիշ եղանակներ: Երբ լուղը փչանում է, բացի բորբոսի և այլ նիւթերի համից և հոտից ընդունում է նաև ճարպի համ: Այդ հոտը վերջացնելու համար տանտիկինները այսպէս են վարւում. երբ լուղը հալւում է, նորա մէջ ձգում են մի քանի դլուխ սոխ կամ խնձոր կճեպով և թողնում են մէջը մինչև հալելու վերջը: Սոխը գործ են ածում նաև ոչխարի ճարպ (դմակ) հալելիս, որի պատճառով և վերջինը լուղի համ է ստանում:

Փչացած լուղն ուղղելու մի այլ միջոց ևս կայ: Երբ լուղը հալւում է այնքան, որ ջրալի մի զանգուած է դառնում, նորա վերայ աւելացնում են մի քիչ թարմ շիճուկ և լաւ խառնում: Իւրաքանչիւր 10 գրվ. լուղի հետ պէտք է խառնել 1—1½ գրվ. շիճուկ: Հալելու ընթացքում լուղի վերայ լցրած շիճուկը հետզհետէ բաժանւում է փրփուրի ձևով և տակը նստում: Ի հարկէ այստեղ ևս հարկաւոր է աղ: Շիճուկի տեղ գործ են ածում նաև մածուն, կաթ, որ նոյնպէս օդտակար է: Կարելի է խորհուրդ տալ նոյն իսկ, որ ջրի տեղակ հալելու համար վերցնել երես քաշած կաթ, որ այնքան էլ թանդ չի նստի: Թէ արդեօք ո՞ր եղանակին պէտք է առաւելութիւն տալ, ո՞րն է նրանցից աւելի լաւը, այդ արդէն կախուած է կաթի փչացած լինելու աստիճանից: Այն դէպքում, երբ բաւականաչափ նկատելի է լուղի փչացած լինելը, եթէ վատ է հալած, հարկաւոր է կրկին հալել՝ մինչև իսկ ջրով կամ կաթով ու աղով: Եթէ լուղը փչացած է, թէպէտ և սուր հոտ ու դառնութիւն չի նկատւում, բայց ճարպի համ է ունենում, թթու կաթով, սոխով կամ խնձորով կրկին անգամ հալելն ևս կատարելապէս բաւական է, որովհետև այդ միջոցները բոլորովին կարող են փոխել լուղի համը և հոտը. բայց եթէ լուղը դառնահամ է, նրանում կամ նկատւում է մի ուրիշ անհաճելի համ և կծու սուր հոտ և կամ եթէ լուղը բոլորովին փչացած է, պէտք է անպատճառ սոդա գործածել, որովհետև այդպիսով կարելի կլինի լուղի միջից հեռացնել թթու նիւթերը:

Վերջապէս փչացած կարագը լաւացնելու համար կարելի է լուանալ կամ շաղուել նախ կրախառն և ապա պարզ ջրով: Կրախառն հեղուկ պատրաստելու համար մի լիտր ջրի հետ պէտք է խառնել 2 գրամ. կիր և թողնել հանգարտ. միայն գործածելուց առաջ քամել: Այս կերպ պատրաստածը անվնաս է:

Գ. Ղ.

Վրաստանի և Իմերէթիի առաջնորդ Դեր. Տ. Գարեգին եպիսկոպոս Սաթունեանից ստացանք հետևեալ ձեռագիրները Ս. Էջմիածնի Մատենադարանում պահելու համար.

ՑՈՒՑԱԿ

Ձեռագիր Մատենից Սանահնոյ վանից.

1, Աւետարան մագաղաթեայ կաշեկազմ, արծաթեայ բևեռներով. Նորոգութիւն սորա ՉԹ. թվին Հայոց:

2, Աւետարան արծաթակազմ, մագաղաթեայ, պատկերազարդ և ծաղկէնկար, գրեալ ի թուականութեան Հայոց ՌՂԳ:

3, Աւետարան արծաթակազմ, մագաղաթեայ, պատկերազարդ, գրեալ ի թուականութեան Հայոց ՌՃԻԱ:

4, Աւետարան կաշեկազմ, գրեալ ի թուականութեան Հայոց ՉԺԳ:

5, Աւետարան կաշեկազմ, ի վերջ յիշատակարանին գրեալ է թ. ՉՀՉ:

6, Աւետարան կաշեկազմ, գրեալ ի թուականութեան Հայոց Զ . . . :

7, Աւետարան կաշեկազմ, գրեալ ի թուականութեան Հայոց ՉԽԷ:

8, Աւետարան կաշեկազմ, գրեալ ի թուականութեան Հայոց Չ ու ԺԱ:

9, Աւետարան կաշեկազմ, գրեալ ի թուականութեան Հայոց ՉՀԳ:

10, Աւետարան կաշեկազմ, վերջին կազմել տուողը նշանակել է թիւ ՌՃՉԷ:

11, Աւետարան կաշեկազմ, գրեալ ի թուականութեան Հայոց ՊՀԳ.

12, Կտակարան կաշեկազմ, թիւն անյայտ, թուի լինել հնագոյն:

13, Շարական կաշեկազմ, վերջին նորոգողը նշանակեալ է թիւ ՌՃԽ:

14, Շարական կաշեկազմ, չիք յիշատակարան և ոչ թիւ:

15, Ընդհանրական կաշեկազմ, չիք թուական, (բայց գրեալ է) Սանահնու սուրբ Աստուածածնայ վանքին է զոր հանեցաք ի յաճառանց այրիցն 1787 թվին:

16, Նարեկացի կազմեալ, գրեալ ի թուականութեան Հայոց ՌԿՉ. ի Հայրապետութեան սուրբ Էջմիածնի Տեառն Մելքիսեդեին:

17, Մաշտոց կաշեկազմ, գրեալ ի թուականութեան Հայոց ՉԾԴ:

18, Մաշտոց կաշեկազմ, գրեալ ի թուականութեան Հայոց ՌԻԴ։

19, Մաշտոց կաշեկազմ, գրեալ ի թուականութեան Հայոց ՌԽԲ։

20, Մաշտոց կաշեկազմ, չիք թուական։

21, Մաշտոց կաշեկազմ, չիք թուական։

22, Մաշտոց կաշեկազմ, գրեալ ի թուականութեան Հայոց ՌԺԷ։

23, Մաշտոց կաշեկազմ, ի թուականութեան Հայոց ՌՀԹ։

24, Կտակարան կաշեկազմ, ի թուականութեան Հայոց ՉԺՉ։

25, Սաղմոս կաշեկազմ, պատկերազարդ, գրեալ ի թուականութեան Հայոց ՌԽԸ։

26, Գանձարան կաշեկազմ, չիք թուական, սակայն ի վերջ գրքոյն գրի Յարութիւն վարդապետն «Թվին ՌՄԿԳ յուն«վարի վեց օրն, ի Հայրապետութեան սրբոյ Էջմիածնի «Տեառն Տեառն Եփրեմայ Անտուածընտիր կաթուղիկոսին «ամենայն Հայոց ևն ևն. ընկալայ զկարգ աբեղայութեան ևն ևն»։

27, Յայսմաւուրք, սկզբից և վերջից պակաս թիւն անյայտ։

Մայր Աթոռի Մատենադարանում ստացուած նուէրներ.

Տիխնսաբնակ Ալաչկերտցի մեծապատիւ պ. Յովակիմ Զաթալբաշեանը Մայր Աթոռիս Մատենադարանին ուղարկել է հետևեալ նուէրը. 1) Բաղմավէպ 1903 թ., 2) Հանդէս ամսօրեայ 1903 թ. և 3) Առողջապահական թերթ 1884 թ., ուստի և Մատենադարանի վարչութիւնը որանով յայտնում է վերոյիշեալ մեծապատիւ պարոնին իւր խորին շնորհակալութիւնը։

Պ. Մատենադարանապետի՝ Մխիթար վարդապետ.

Ստացուած գրքեր.

Շնորհակալութեամբ ստացանք «Լոյս» օրացոյց պ. Ն. Թոփչեանի, որ լսկապէս պատիւ է բերում կազմողին, Ազգագրական հանդէս պ. Երուանդ Լալաեանի և Կառունկ նոր ամսագրի առաջին համարը՝ որը սկսել է հրատարակուել Փարիզում։ Ցաւում ենք, որ օրացոյցն ուշ ստանալու պատճառով հնարաւորութիւն չունեցանք մի քանի խօսք ասել, իսկ վերջին երկու հանդէսների բովանդակութեան հետ կաշխատենք ընթերցողներին ծանօթացնել հետևեալ անգամ։

«Անապատականութեան սկիզբն Քրիստոնեայ եկեղեցում» սղոգել են հետևեալ վրիպակները.

Երես.	տող վերևից.	տպած է.	կարդալ.
333.	8	«Երրորդ դարի»—	«Երկրորդ դարի»
335.	21	«Երրորդ դարի»—	Երկրորդ դարի»
341.	4	Լչն	Լինչ

Բացուած է բաժանորդագրութիւն

Տօլստոյի երկերի հայերէն հրատարակութեան, որոնցից առաջին գիրքը լոյս է տեսնելու մինչև յունիսի 15-ը թարգմանութեամբ Եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանի.

Առաջին գրքի մէջ մտնում են

I. ԿՐԷՅՅԵՐԻ ՍՕՆԱՏԸ.
II. ԿՐԷՅՅԵՐԻ ՍՕՆԱՏԻ ՎԵՐՋԱԲԱՆԸ
III. ՍԷՐ.
IV. ԿԱՆԱՆՑ:

Տպագրութիւնը լինելու է ընտիր թղթի վրայ. բաժանորդագրին է մի ռուբլի, Պարսկաստանի համար 6 ղրան, արտասահմանում 3 ֆրանկ:

Երկրորդ գրքի լոյս տեսնելու ժամանակի մասին կը յայտարարուի առանձին:

ԱՐԱՐԱՏ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

1905

ԲՈՒԹԱՆԱՐԳԱԳԻՆՆ Է { Ռուսաստանում 4 r.
Արտասահմանում 5 r.

Խնդրում ենք Արժ. Գործակալներին յայտնել այն բաժանորդների ճիշտ հասցէները՝ հոգեւորական թէ աշխարհական, որոնք կարող են իրենք անմիջապէս կամ մի ուրիշի անունով ծրարները ստանալ փոստից։ Բոլոր այդպիսիներին «Արարատ»-ը կուղարկուի առանձին ծրարներով եւ առնասարակ նորա ցրումը կանոնաւորելու համար ամենը հոգ կտարուի։

Հասցէն՝ Էջմիածնի Типографическому Комитету

Արտասահմանի համար՝ Rédaction de la Revue „Ararat".
Etchmiadzine (Caucase).